

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

L. ՏԱՐԻ ԹԻԻ 14 (1464) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 24, 2010
VOLUME 30, NO. 14 (1464) SATURDAY, APRIL 24, 2010



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

1915

2010

Շ
ա
ր
ու
ն
ա
կ
վ
ո
ղ

Ո
Ճ
Ի
Ր

ՔԵ

Ա
ՊՐԻԼ
24



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ՝
ՀԱՅՈՒ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԱՆՏԵՂԻՏԱԼԻՈՒԹԵԱՆ**

Ապրիլի 24, 2010:

Միասնական, միանպատակ, հաւատաւոր ու վնասակամ՝ աշխարհով մէկ Հայ ժողովուրդը, յատուկ միջոցառումներով կ'ոգնեկոչէ իր, աւելի քան մէկուկէս միլիոն հաշուող Ապրիլեան եղեռնի նահատակներուն անթառամ իշխատակը, այս տարի: Մեծ եղեռնեան գոհերը ինկան բուրբ Համիտեան արիւնքներու կայսրութեան իրաւաջողորդ Իթքիհատ վէթերաբեր իշխանութիւններու կողմէ նիւթուած եւ իրագործուած ցեղասպանութեան տակ, որ այս տարի կը բոլորէ իր 95-րդ տարեկիցը: Այս յոբելինական տարեկիցը ունի իր պատգամը, ուղղուած հայուն ու համայն մարդկութեան:

Տասնամեակներ՝ աշխարհ լուռ անցաւ Ապրիլեան եղեռնի վրայէն: Կարծես ոչինչ պատահած ըլլար: Կարծես իրենց պատմական հողերէն արմատախիլ ըլլալով արեան ովկիանոսի մը մէջ խեղդամահութեան ենթարկուած չըլլար ամբողջ ժողովուրդ մը, որուն յանցանքը լոկ հայ ըլլալը եղած էր: Կարծես, աշխարհի քաղաքակրթութեան սատար՝ գործող բազմադարեան մշակոյթ մը թալանուած, կողոպտուած եւ հրոյճարակ դարձած չ'ըլլար: Կարծես՝ ազգի մը բնաջնջումով ամբողջ մտք, այլապէս խոստումնալից սերունդներ ողջակիզման ենթարկուած չ'ըլլային: Տաղանդաւոր ժողովուրդի մը վերացումով, ողջ ազգային քաղաքակրթութիւն մը կենսունակ, արգասաբեր՝ անդամահատուած չըլլար: Ի՞նչպէս լոնց, ի՞նչպէս մարսեց մարդկային խիղճն ու լեզուամտածողութիւնը ափ մը ցեղամոլ իթքիհատական գաւթիչներու ցեղասպանական գործընթացը: Այս արդէն ամբողջ ժողովուրդի մը պատեհուած ողբերգութեան միւս երեսն է, որ տակաւին կը շարունակուի պարբերաբար:

Եւ իրաւամբ, գերզօր պետութիւններ իրենց շիլ հաշիւներով եւ ծրագիրներով կ'անուան, դոյզն ու շարժումներ անգամ չ'դարձուցին կիլիկիոյ տարածաշրջանէն ներս տեղի ունեցող մարդկային պատմութեան մէջ նմանը չ'տեսնուած կորստաբեր, այլապէս, մարդկութիւնը իր մարդկութենէն մերկացնող եղեռնագործութեան, որ Մարդկային լեզուամտածողութեան մէջ իր նշգրիտ բնութագրութիւնը գտաւ Ցեղասպանութիւն բառի ստեղծումով, որուն գործածութիւնը, տարօրինակ բայց իրաւ, ծիծաղելիօրէն խնդրայարոյց դարձաւ աշխարհի դիւանագիտական ասպարէզէն ներս: Կարելի՞ է երեւակայել որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ եւ երկար ժամանակ այլ մեծ տէրութիւններու կողմէ Ցեղասպանութիւն բառին գործածութիւնը դուրս ձգուեցաւ դիւանագիտական բառապաշարէն:

Անշուշտ, գտնուեցան պետութիւններու դեսպաններ, որոնք իրենց ընկալած, ակնատեսի վկայութիւնները տեղեկագրեցին իրենց պատկան ապարատին, թուրքագանատիպ իշխանութիւններու՝ հայոց դէմ իրագործած տեղահանութիւններուն, կողոպտուածներուն, բռնարարներուն, լլկումներուն եւ սպանդներու մասին: Նաեւ, անոնք պահանջեցին շուտափոյթ միջամտութիւն՝ դադարեցնելու համար ամբողջ ժողովուրդի մը անէացումը:

Բայց ինչ խօսք, որ նիւթական, քաղաքական եւ դիւանագիտական շահերը կը գերադասուին բարոյական ամէն պարտաւորութենէ, մոռնալով, որ բար լուծութիւնը, անտարբերութիւնը եւ ոճրագործը անպատիժ թողուլը քաղաքացիներէ, արդարացում կը համարուի նոր նախնիներու, ողջակիզումներու եւ ցեղասպանութիւններու իրագործման համար:

Այս հաստատումները մշտապէս կը չարչրկեն մեր միտքը, հոգին, երբ կը մտածենք, արդեօ՞ք գոյութիւն չունի մարդկային արդարութիւն աշխարհի վրայ: Տկարը միշտ ենթակա՞յ պիտի մնայ անիրաւութիւններու, շահագործումներու: Մինչեւ ե՞րբ անպատժելիութիւնը իր գերիշխանութիւնը պահած կը մնայ մնալ երկրի վրայ, մասնակի եւ գծուած շահերու թելադրութեան վրայ: Չմնա՞ց պետական արժանապատուութիւն ըսուած առաքինութիւնը, որ գրաւականը կը հանդիսանայ աշխարհի վրայ արդարութեան, ժողովրդավարութեան, ազգերու միջեւ հոգեկցութեան, դաշն գործակցութեան, մարդկային կեանքի բարելաման՝ արդարութեան ու ժողովրդավարութեան սկզբունքներու նախանձնի նամբով:

Բայց բարեբախտութիւն է տեսնել վերջերս, որ Ցեղասպանութիւնը նանչցող եւ դատապարտող պետութիւններու թիւը գնահատելի ու իբրմով ան կ'արձանագրէ:

Մարդկութիւնը գիտակցութիւնը կ'ունենայ կատարուած ողբերգութեան ահաւորութեան: Տարակոյս չկայ, որ ա՛ն պիտի ըլլայ պահանջողը թափուած արեան հատուցումը, մօտ կամ գալիք տասնամեակներուն: Ան պիտի խարազանէ գործուած ցեղասպանութեան ուրացումը: Ան պիտի դադարեցնել տայ խաբէութեան, սուտի եւ կեղծիքի գաւելոտախտը: Արդէն երեւոյթները ցոյց կու տան, թէ հեղինակը՝ Ցեղասպան կայսրութեան ժառանգորդ արդի թուրքի կորսնցուցած է իր ուղեցոյցը: Ան մէկդի է դրած ամէն արժանապատուութիւն, բարոյական արժանութիւն, անամբօրութիւն: Նաեւ, ողբերգականը՝ շուար ու մոլոր, ան տակաւին իր պաշտպանութեան տակ կը պահէ Իթքիհատը: Ան կը շարունակէ սողալ, պաղատաբիւն խնդրելով երեսուրկապէս իրեն բարեկամ կարծուած պետութիւններէն՝ խնայել «Ցեղասպանութիւն» բառի գործածութիւնը, որուն մասին տրուած դոյզն խօստում, մեծ յաղթանակ կը համարէ:

Ցան այն է սակայն, որ աշխարհով մէկ ապացուցուած ու դատապարտուած, անգամ իր ժողովուրդին կողմէ՝ ալ պահանջ դարձած, հայոց դէմ Իթքիհատական ոճրագործ կառավարութեան գործած Ցեղասպանութեան նանչումը, մինչեւ օրս կը բաղխի լուրջ սակարկութեան, Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջադէմ, արդարադատ եւ ժողովրդավար պետութեան կողմէ, որ մեր գնահատութեամբ առաջին նանչցողն ու դատապարտողը պէտք էր ըլլար զանիկա:

Մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու պատգամն է խոստումնադրուժ Նախագահ Պարաֆ Օպամային եւ անոր գլխաւորած ամբողջ աւագանիին Ցեղասպանութեան պատմական ճանաչումով, Դատա-

պարտումով եւ Հատուցման պարտադրումով, վերադարձ կատարել դէպի իր նախնորական խոստումին: Վերականգնել՝ մեծ Մարդասէր, ժողովրդավար եւ Արդարադատ Ուիլսոնի օճախ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու միջազգային վարձագծին, ի շահ հայ ու աշխարհի բոլոր ժողովուրդներուն, մի անգամ ընդ միշտ առաջին առնելու համար կրկնութիւնը նոր ցեղասպանութիւններու:

Մեր ցար, նմանապէս, կ'ընդգրկէ մեր հայրենի իշխանութիւնները: Անոնք, մասնաւորաբար վերջին տասնամեակին, անդրդուելիօրէն կառչած մնացին Հասաստանութեան սահմաններու քացման ու դիւանագիտական յարաբերութիւններու ստեղծման առաջադրանքին, առանց հաշուի առնելու Թուրքիոյ ցեղապաշտ բանթուրք, ծաւալապաշտ, ուրացող, ստաբարոյ, այլապէս խոստումնադրուժ վարձագիծը: Չմոռնանք ամիս մը առաջ հարիւր հազար հայերու թուրքիայէն արտաքսելու կառավարական սպառնալիքը, որուն տակ թագնուած կը մար ըլլալ Սելանիկեան (1911-Ցեղասպանութիւնը նիւթող Իթքիհատ վէթերաբեր համաժողովը, որ տեղի ունեցաւ Սելանիկի մէջ) բնոյթի ծրագրի մը անկայութիւնը:

Մեր հայրենի իշխանաւորները ունին այն ենթադրեալ յոյսը, որ սահմաններու քացումով, Հայաստան դուրս պիտի գայ իր շրջափակումէն: Ան գարկ պիտի տայ իր գահավէժ տնտեսական նգնաժամին: Նաեւ, տարածաշրջանէն ներս պիտի հաստատուի բարի դրացիութիւն, եւ տակաւին, խօսք ալ կար, որ Հայաստան-Թուրքիա պիտի գործակցին տարածաշրջանէն ներս, կարենալ հաստատելու համար խաղաղութիւն, զարկ տալու համար տնտեսական զարգացման եւ հաւաքաբար պայմարելու համար միջազգային խափանարարութեան դէմ:

Մեր հայրենի իշխանաւորները կը մոռնան սակայն, թէ Իթքիհատի կառավարութեան լիիրաւ ժառանգորդ, Թուրք հանրապետութիւնը, հայ ժողովուրդին ու համայն մարդկութեան՝ աշխարհ մը ծանրութեամբ փաստացի բռնագրաւումի, տեղահանութիւններու, թալան, մշակութային պատմական հարստութիւններու աւերակման եւ յաւէտ անմոռնալի՝ Ցեղասպանական հատուցման պարտաւորեալ մը ունի վնասելու իրենց բարոյական ինքնութիւնը վերականգնելու համար միջազգային թատերաբեմի վրայ:

Մեր հայրենի իշխանաւորները կը մոռնան նաեւ, թէ նախնաւորութիւնը կողմէ Ցեղասպանութեան ճանաչումը, Դատապարտումը եւ Հատուցումը՝ անտեսել, ուրանալ, թաղել պիտի նշանակէ մեր պահանջատիրութիւնը: Ցեղագային, կատարուած դոյզն ակնարկութիւն, թելադրութիւն, բանաձեւուած պահանջ՝ հայ ազգի պահանջատիրութեան կապակցութեամբ, առիթ պիտի ծառայէր, արդէն իսկ «Ցեղասպանութիւն» բառէն սոսկացող Թուրքիոյ իշխանաւորներուն՝ առաւել սաստկութեամբ սրելու իրենց ժանիքները: Անոնք վերապետութեան պիտի ենթարկէին իրենց իսկ ստորագրած համաձայնագիրները եւ աշխարհը պիտի ողողէին իրենց լուտանքներով, բռնարարներով, սպանալիքներով, առաջին իսկ առիթով փակելով Հայաստան-Թուրքիա սահմանները:

Արդարեւ... Կարմիր Սուլթանի իրագործած ողջակիզման 1884-1896թ.ին երկու հարիւր հազար, 1909թ.ին երեսուն հազար եւ Իթքիհատական իշխանութիւններու՝ 1915-1922ին ի կատար ածած Ցեղասպանութեան անշիքիմ ինկած աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն արեան կանչն է՝ ամբօրէն եւ անտեղիտալիօրէն տէր կանգնիլ մեր սրբազան պահանջատիրութեան: Անոր արդար լուծումը, ոչ միայն բարիք պիտի բերէ սոսկապէս հայութեան, այլ նաեւ, պիտի նպաստաւորէ աշխարհով մէկ միջազգային ընտանիքը, այն իմաստով, որ իրագործուած ողջակիզումներն ու Ցեղասպանութիւնը ամբողջ մարդկութեան դէմ գործուած ռիսկներ էին իսկութեան մէջ:

Մեր բիրաւոր Նահատակներուն արեան կանչն է հայրենի իշխանութիւններուն՝ ի գին ամէն գոհողութեան, ամէն քանէ առաջ, դարմանել մեր ներքին պառակտուածութիւնը: Մեր ազգային միասնութեան, համերաշխութեան, գործակցութեան եւ բոնցֆաւորման մէջ տեսնել մեր ժողովուրդի արդիւնաւէտ գոյառումը եւ հայրենիքի պետական կառոյցներու ուժեղացումը: Ի՞նչպէս կարելի է քեզմէ գորաւորին լսելի դարձնել, ընդունիլ տալ խօսք, երբ ներքին խոհանոցող քաղաքացիները, երբ ժողովուրդին եւ իշխանութիւններուն միջեւ վիճակ կան քացուած, երբ ժողովուրդ-իշխանութեան միջեւ կը տիրէ անվստահութիւն:

Եզրափակելով Մեծ եղեռնի 95-ամեակի նուիրում մեր ոգեկոչական մտորումները. անմահանուն Չարենցի մարգարտանման հետեւեալ պատգամով.

«Ով Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳՐ՝ ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՊԱՁԱՆԾԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՊԱՐԻԷՆ ՍՈՒՆՅԵԱՆ ՍԱՀԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ՝ ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Քեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly Except Two Weeks in August

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՁՈՒԳԱՅԵՌՆԵՐ ԶԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒ

ՅԱՐՈՒԹՅՆԻ ԴԱՒԻԹԵԱՆ

1895 Մայիս 11ին, Պոլսոյ Անգլիայի, Ֆրանսայի եւ Ռուսիոյ դեսպանները Սուլթան Ապտիլ Համիտ Բ.ին ներկայացուցին Հայկական վեց նահանգներուն մէջ (Վան, Պիթիս, Էրզրում, Տիարպեքի, Խարբեքի եւ Սեբաստիա) բարենորոգումներ կատարելու ծրագիրը: Այս ծրագրի անմիջական դրդապատճառը Հնչակեան Կուսակցութեան կազմակերպած 1894ի Սասնոյ ապստամբութիւնն էր ընդդէմ Օսմանեան բռնակալութեան: Սակայն պէտք է նշել, որ Բարենորոգումներու արմատները կ'երթան մինչեւ 1840ական եւ 1850ական թուականները, բայց մանաւանդ 1877-1878 թուականներու Ռուս-թրքական պատերազմը եւ անոր յաջորդած Սան Սթեֆանոյի եւ Պերլինի վեհաժողովները, որոնցմով միջազգայնացուեցաւ Հայկական Հարցը:

Սան Սթեֆանոյի դաշնագրի 16րդ յօդուածով, Ռուսիան իր տիրապետութեան տակ պիտի պահէր Հայկական վեց նահանգներու գրաւուած շրջանները այնքան ատեն որ Սուլթանը Բարենորոգումները չէր իրագործած: 16րդ յօդուածը փոխարինուեցաւ Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածով, ըստ որում Ռուսական զօրքերը պիտի քաշուէին իրենց գրաւած տարածքներու մէծ մասէն եւ Սուլթանը կը «խոստանար» Հայկական Բարենորոգումներու հարցով պարբերաբար հաշուետուութիւն տալ Մեծ Տէրութեանց: Սան Սթեֆանոյի փոխարինումը Պերլինով յանգեցաւ Ռուսական նահանջին, մինչ Անգլիան տիրացաւ Կիպրոսին, Ֆրանսան ստացաւ Թունուզը գրաւելու երաշխիք, Գերմանիան իր դիրքերը ամրապնդեց Օսմանեան Կայսրութեան տարածքին, իսկ հայերու մնաց խրիմեան Հայրիկի պատգամը՝ թղթէ շերեփը փոխարինելու երկաթով:

1878ի Պերլինի վեհաժողովէն ծնունդ առած եւ 1895 Մայիս 11ին ձեւաւորուած Հայկական Բարենորոգումներու ծրագիրը վերջապէս վաւերացուեցաւ Օսմանեան Խորհրդարանին կողմէ Փետրուար 8, 1914ին, բայց չիրագործուեցաւ, 1914 Օգոստոսին Համաշխարհային Ա. Պատերազմի պայթումին պատճառաւ: Այս միջոցին (1878-1914) մենք ակնատես եղանք թէ ինչպէս Մեծ Պետութիւնները գայն շահագործեցին իրենց քաղաքական, տնտեսական եւ ռազմական շահերուն համար: Տանք կարգ մը մանրամասնութիւններ անոնց շահագիտական գործունէութիւններէն:

Անգլիա (Մեծն Բրիտանիա)

Ինչպէս վերեւ նշեցինք, տիրանալով Կիպրոսի ինչպէս նաեւ Եգիպտոսի, Անգլիան ապահոված եղաւ դէպի Հնդկական իր գաղութները տանող ծովային ճանապարհները: Չի բաւականանալով այդքանով, ան պարբերաբար օգտագործեց Հայկական Բարենորոգումներու ծրագիրը՝ կարենալ ճնշում բանեցնելու թէ՛ Օսմանեան կայսրութեան վրայ եւ թէ՛ նուազեցնելու Ռուսական եւ Ֆրանսական ազդեցութիւնը Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիոյ տարածքին: Ան մերթ Կլատսթոնի (4 անգամ

վարչապետ) բերնով կը յայտարարէր թէ «ծառայել Հայութեան կը նշանակէ ծառայել քաղաքակրթութեան» եւ մերթ Լորտ Տաֆֆըրինի բերնով կը յայտարարէր թէ «Անգլիան կրնայ միայն նաւատորմիդով օգնել, իսկ իր նաւատորմիդը Նոյեան Տապան չէ, որ կարենայ կանգ առնել Արարատի վրայ»: Բարենորոգումներու ծրագիրը մինչեւ իսկ շահագործուեցաւ Ազատական Կլատսթոնի եւ Պահպանողական Տիրապետչի անձնական եւ կուսակցական հակամարտութիւններուն համար: Օգոստոս 1896ին, օգտուելով Պանք Օթթոմանի դէպքի ստեղծած իրարանցումէն, Անգլիան փորձեց իր նաւատորմիդը մտցնել Տարտանելի նեղուցներէն ներս, բայց Ռուսական սպառնալիքներու դէմ հանդիման, ետ կեցաւ այդ քայլէն: Այս դէպքէն ետ, Դեկտեմբերին ան անգամի մը համար եւս հանդէս եկաւ Բարենորոգումներու ծրագրի:



1878ի Պերլինի վեհաժողովը

րով, ոչ միայն հայկական վեց նահանգներու, այլեւ Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքին համար: Ան մերթ հանդէս կու գար Օսմանեան կայսրութեան սահմաններուն անձեռնմխելիութեան օգտին եւ մերթ գաղտագողի կը ծրագրէր Եւրոպայի «հիւանդ մարդուն» մասնատումը:

Ռուսական Կայսրութիւն

Ռուսական կայսրութիւնը նաեւ օգտագործեց Հայկական Բարենորոգումներու ծրագիրը, իրականացնելու համար իր դարաւոր երազը՝ իջնելու Միջերկրականի տաք ջուրերը: Ան ալ, մեկնած իր շահագիտական նպատակներէն, մերթ կը հովանաւորէր Օսմանեան կայսրութիւնը եւ մերթ հանդէս կու գար ներկայանար որպէս հայութեան պաշտպան եւ մերթ Լոպանով-Ռոստովսկիի բերնով կը յայտարարէր թէ իրենք կ'ուզեն «Հայաստանը առանց հայերու»: Ինչո՞ւ: Որովհետեւ իրենց հաշտոյն չէր գար «հայկական Պուլկարիոյ» մը յայտնուելը իրենց սահմանին: Ռուսաստանի սրտով չէր նաեւ ինքնավար Հայաստանի մը ստեղծումը, որովհետեւ այդ մէկը կրնար վարակիչ օրինակ դառնալ իր տիրապետութեան տակ գտնուող Անդրկովկասի ազգերուն համար: 1900 թուին Ռուսիան համաձայնագիր մը կը կնքէր Օսմանեան կայսրութեան հետ, որով կ'արգիլուէր հայկական նահանգներու տարածքին երրորդ երկրի մը կողմէ ճանաչողութեան կառուցումը (նկատի ունէին Ֆրանսան): Ասոր դիմաց Ռուսիան կը պարտաւորուէր արգիլել Համիտեան Չարդեբէն Արեւելեան Հայաստան ապստանած

հայերուն վերադարձը:

Գերմանական Կայսրութիւն

Պերլինի վեհաժողովի յաջողութիւնէն ետք, Գերմանիան սկսաւ իր դիրքերը ամրապնդել Օսմանեան կայսրութեան տարածքին, մանաւանդ 1882էն ետք, երբ ստանձնեց Օսմանեան բանակի վերակառուցումը եւ զինամթերքի հայթայթումը: Եթէ Ռուսիոյ համար Միջերկրականի տաք ջուրերը իջնելը գերագոյն նպատակ էր, ապա Գերմանիոյ համար այդ մէկը Պերլին-Պաղտատ երկաթուղագիծի կառուցումը եւ Մուսուլի ու շրջակայքի նաւթահորերուն տիրանալն էր: Այդպիսով անոնք նաեւ վտանգած կ'ըլլային ոչ միայն անգլիական շահերը Պարսկաստանի եւ Հնդկաստանի մէջ, այլ նաեւ Ռուսական եւ Ֆրանսական շահերը շրջանին մէջ: Բարենորոգումներու ծրագրի իրագործումը Գեր-

մի, էրզրումի, Խարբեքի, Պիթիսի, Այնթապի, Մարաշի եւ այլ վայրերու մէջ: 1894-96ի Համիտեան կոտորածներուն ժամանակ Խարբեքի եւ Մարաշի Ամերիկեան միսիոնարական հաստատութիւններ յարձակման ենթարկուելով կրեցին նիւթական վնասներ, որոնց հատուցման համար Ամերիկեան կառավարութիւնը պահանջեց եւ ստացաւ 100,000 տոլար: Բնականաբար խօսք չեղաւ հայկական վնասներու հատուցման մասին:

Հայկական Ցեղասպանութեան Ծանաչման Գործընթացի Արժեւորումը

Աւելի քան 100 տարիներ անցած են Բարենորոգումներու ծրագրի օրերէն եւ բոլորիս համար յստակ է ժամանակի մեծ տէրութեանց խաղացած դերը: Նոյնիսկ օրին յստակ էր այդ մէկը, ինչպէս կը վկայէ Փարամագի մէկ յօդուածը «Հնչակ»ի 1914 Մայիս 1ի թիւին մէջ. «Հայաստանի Բարենորոգումներ»... գաւեշտն է դա այն շարանաւորան կոտորածի, թալանի, հրդեհումի, առեւանգման, հողազրկութեան, որը հայ իրականութեան պատմութեան մէջ իր բոսոր արիւնով արձանագրուած է՝ «ՀԱՅՈՒ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆ վերտառութեամբ եւ որի դերակատարն է թուրք բռնակալութիւնը Եւրոպական շահամոլ կառավարութիւնների ռեժիսորութեան տակ»:

Ի՞նչ հետեւութիւններ ըրած ենք եւ ի՞նչ դասեր քաղած ենք այդ փորձառութիւնէն: Անցեալ առնուազն 25 տարիներու ընթացքին ազգովին հետամուտ եղած ենք Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պայքարին: Քսանէ աւելի պետութիւններ գայն ճանչցած են. ԱՄՆի նախագահ Ռեկլենի եւ Քոնկրեսի կողմէ քանի մը անգամներ ճանցուած է. բայց եւ այնպէս ամէն տարի դարձեալ կը փորձենք անգամի մը համար եւս գայն ճանչցնել: 25 տարին բաւարար ժամանակ չէ՞ արժեւորելու անցած ուղին եւ տեսնելու թէ արդեօ՞ք արդիւնաւէտ եղած է մեր աշխատանքը, արդեօ՞ք արդարացուցիչ եղած է մեր թափած ճիգը, աշխատանքն ու նիւթական եւ այլ ներդրումները: Յստակ չէ՞ բոլորիս համար, որ Ցեղասպանութեան ճանաչման խաղաքարտը կ'օգտագործուի ԱՄՆի թէ Եւրոպայի տարածքին ընտրական նպատակներու համար: Յստակ չէ՞ որ ԱՄՆի Քոնկրեսին ներս պարբերաբար առաջադրուող հայկական բանաձեւերը կ'օգտագործուին ԱՄՆի կառավարութեան կողմէ՞ գիշումներ կորզելու համար թուրքիայէն յօգուտ տարածաշրջանի (Իրաքի, Աֆղանիստանի եւ Իրանի) իր հաշիւներուն: Յստակ չէ՞ որ Եւրոպական Միութիւնը այդ հարցի բարձրացումով կ'ուշացնէ աւելի քան 70 միլիոնացի իսլամական թուրքիոյ մուսքը Քրիստոնեայ Եւրոպական Միութիւն: Յստակ չէ՞ որ Մոսկուայէն մեկնարկուած Հայ-թրքական մերձեցման «ֆուլպոլային» խաղը կը փորձուի ծառայեցնել Ռուսիոյ շահերուն, ինչպէս որ նմանօրինակ ամերիկեան նախաձեռնութիւն մը փորձուած եւ ձախողած էր քանի մը տարիներ առաջ: Յստակ չէ՞ որ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՒՍ ԵՐԵԱԸ

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Եթէ ուզենք անգիջող արդարութեամբ քննական վերլուծումի ենթարկել Օսմանեան թուրք իշխանութեան կողմէ հայոց Յեղասպանութեան անուրանալի ոճիրը մարդկութեան դէմ, ամէն բանէ առաջ մեզմէ կը պահանջուի անողորմ հետեւողականութեամբ տէրը մնալ մեր մարդկային խիղճին, անոր անկողմնակալ դատողութեան: Նման դժուարին առաջադրանք գլուխ հանելու համար չի բաւեր միայն առանձնացնել ու բանաւոր կամ գրաւոր հեռուորականութեամբ հաշիւ պահանջել թուրքիոյ անցեալ եւ ներկայ իշխանութիւններէն, անոնց ցեղապաշտական անխոստովանելի ծրագիրները գործադրող խաւարամիտ զանգուածներու գործօն կամ լուռ մեծամասնութիւնէն, առանց կարմրելու իրենց անմարդկային ոճիրները ժխտող խոժոռադէմ էրտորանէն կամ ուզամատենչ Ալլիեէն: Եթէ իսկապէս անկեղծ ենք ու հետեւողական, մեզմէ կը պահանջուի նոյն սառն հետեւողականութեամբ մտնել նաեւ մեր յաճախ ինչպէս զարշահոտ սեփական ախոռները: Հզօր լուսարձակներու տակ առնել՝ Հայաստան երկիր դրախտավայր մեր ժողովուրդի դժոխքին վերածող անցեալ ու ներկայ այլատեսակ փանջունիներն ու հարստահարիչները, սուտ մարգարէներն ու նոր ցեղասպանութիւններու ճամբան ապիկարօրէն հարթողները, առաջնորդի կամ նախագահի պատմուճան հագած ստահակներն ու կախաղանի արժանի բազմակի յանցապարտները՝ Հայաստան աշխարհի անգործացած, ուժաթափուած հերոսական ժողովուրդի մը Սամսուններուն դէմ: Եթէ իսկապէս անկեղծ ենք արդարութեան ու հայրենասիրութեան մեր անվերջ հաւատամունքներուն ու լիաթոք բարբառումներուն մէջ, ամբողջ աշխարհի տասը միլիոն հայութեան միտքի, խիղճի եւ աներեր բազուկի գերագոյն ատենանը պարտաւոր է՝ ո՛չ, ուշացած է՝ քննել ու դատաւճիռ կայացնել իր գոյութեան դէմ անպատիժ դաւող Ռոպերթ Քոչարեաններու եւ Սերժ Սարգսեաններու դէմ:

Ուռուցիկ ազգայնամոլութեան, անամէջ մեծխօսիկութեան օրերն անցած են անվերադարձօրէն: Զգաստութեան ու համեստութեան փոխարինիչ նշաններ մեր շուրջը տեսանելի չեն սակայն: Ժամանակն է՝ այժմ, կրկնեմ՝ ուշացած ենք՝ որ հեզեզ առանց ծամծամելու թէ՛ մեր ամբողջ մտածողութիւնը, աշխարհը մեզմէ զուրկ, հաւատարմութիւնը, մտահոգութիւնը, ձգտումներն ու երազները գաւառային բնոյթ ունին: Անոնք, ըստ էութեան, իրական կապեր չունին Հայաստանի Հանրապետութեան ու հայ ժողովուրդի բարօրութեան կամ ճակատագրին հետ, այլ կը հաստատեն գրաւեալ հայոց աշխարհի ու գերեվարուած հայ հասարակութեան ազատ, անկախ ու կազմակերպուած թալանն ու կողոպտող Ալլի Պապայի եւ իր քառասուն գողերուն կողմէ՝ մեր բոլորի անգօր կամ անտարբեր նայուածքին տակ:

Այսքան պարզ: Իսկ այսպիսի չնաշխարհիկ դրութեան մը երկարակեցութիւնը երաշխաւորուած է ներքին հակադիր ուժերու զարմանալիօրէն կամաւոր հաւասարակչ-

նութեամբ մը: Այսպէս, իշխանութիւնը իր թալանի ու կողոպտող բոլոր միջոցները, ինչպէս նաեւ ուժային համակարգը, կեդրոնացուցած է իր եւ իրեն ծառայող վարձկաններու ձեռքերուն մէջ: Յաւելեալ ապահովութեան համար, ընդդիմութիւնը ի սկզբանէ պարտաւորութեան առջեւ դրուած է իր քաղաքական նպատակները հետապնդելու՝ միմիայն խաղաղ միջոցներով եւ բիրտ ուժի բացառմամբ: (Ասիկա բնաւ չի բացառեր բիրտ ուժի անկաշկանդ օգտագործումը ընդդիմութեան դէմ, կալանքներն ու սպանութիւնները՝ «իշխանութիւնը բռնի գաւթելու» յերիւրածոյ ամբաստանութիւններով ու սաղրանքներով - ա՛յն աստիճան որ լուրջ հարց կը ծագի թէ՛ ընդդիմութեան որդեգրած կանտիական խաղաղ դիմադրութիւնը կիրառելի՞ է Հայաստանի անգիջող բիրտ բռնակալութեան դէմ):

Իր քաղաքական աժան հաճոյակատարութեան առ ի վարձատրութիւն, որքան ալ, օրինական նախագահի մը արարողակարգով, մեծ պետութիւնները հոգեկան բաւարարում չնորհեն Սերժ Սարգսեանին, ան իր հողորդակցութեան բոլոր հարգատ միջոցները փակած է իր սեփական ժողովուրդին ու խիղճին հետ: Մնացեալը սոսկ հասարակ խաղ է ու կեղծիք: Յատկապէս հայոց Յեղասպանութեան հետ առնչուող վերջին շաբաթներու իր թուացեալ հոգեփոխութիւնը: Յամառ գիւղապետի մը յատուկ իր ինքնագլուխ ու փակ գործելակերպէն մեկնելով, դժուար չէ հետեցնել թէ եղածը թափանցիկ քողարկում մըն է՝ շուտով գալիք անփառունակ ու վտանգաւոր գիշերամենքու - եթէ, անշուշտ, հայ ժողովուրդը թոյլ տայ այդպիսի (ազգովին) ինքնասպանական արարք:

Ահա թէ ինչո՞ւ, ներկայիս ստեղծուած տարածաշրջանային ու հայաստանեան իրադրութեան մէջ, կարելի չէ խօսիլ Յեղասպանութեան թուրք պատասխանատուներու եւ իրենց ժառանգորդներուն մասին միայն: Պատասխանատուութիւնն ունինք, նաեւ, անշարժացնելու այն թեթեւ ձեռքերը որոնք պատրաստ են ստորագրել, թուրք դահճապետներու հոգեբայրներուն հետ կողք-կողքի՝ նոր ցեղասպանութեան մը նախադրեալները հանդիսացող միակողմանի համաձայնութիւններու տակ:

Այս առնչութեամբ, մտահոգիչ նմանութիւններ կան ինդոնեզիայի համաձայնութիւններու բախտը որոշելու կոչուած հայ եւ թուրք վերին երկու դերակատարներուն մօտ: Կիրարկումի տարբերութիւններով հանդերձ, ոճային ակնբախ գուգահեռներ կան էրտողանի եւ Սերժ Սարգսեանի մտածելակերպերուն ու գործելակերպերուն մէջ: Երկուքին ալ մտադրացումներու ակունքը նոյն հիմն փակ տուփն է որ կը հանդիսանայ սուտ արժէքներու, շինծու ճշմարտանմանութիւններու, կարծրացած նախապաշարումներու եւ կանխակալ ինքնահաւանութիւններու համակարգը: Այդ փակ տուփին մէջ տեղ չկայ այլախոհութեան, մանաւանդ եթէ ատիկա ճշմարիտ ժողովրդավարութեան եւ արդարութեան առաւել կամ նուազ շեշտուած խիզախ դիմագրիծն ունի: Ազատ մտածողութեան, բանիմաց առարկայական հիմնաւորմամբ երկխօսութեան անպատրաստ, կամայական դիրքո-

րոշումն ու հրամանագրուած հեղիւնակութիւնը բանականօրէն պաշտպանելու անկարող, անոնց երկուքէն ամէն մէկը իր մտային բոլոր գործառնութիւնները թելերը ամուր կապած է իր փակ տուփին՝ ուրիշ կ'երկնուին անցեալի մշտնապատ խաւարէն եկած իր միջին, կեղծ փաստարկները: Այլ խօսքով, անոնք կալանաւորներ են՝ թեթեւամտօրէն իրենց որդեգրած ժխտողական արտաբնոյթ կեցուածքին:

Մանրամասնէք քչիկ մը: Մտածելու կարողութեամբ օժտուած մարդ հակներով բնակեցուած երկու հարեւան երկիրներու - Հայաստանի եւ թուրքիոյ - պետական (գործնապէս) գերագոյն հեղինակութիւնները կը պնդեն, գիտակցաբար, հիւանդագին կալանաւորները մնալ իրենց յերիւրած երեւակայածին սուտերուն, լոյս աշխարհ չելլել իրենց զոց տուփերէն: Ամբողջ աշխարհի առջեւ ու սեփական խիղճի (???) ժխտման գինով, անոնք թուրքական կրկնաբանութեամբ կը յամուին աշխարհը ձանձրացնել իրենց թափանցիկ գոյգ սուտերով:

Թրքական սահմանի ի՛ր իսկ փակած կողմէն, եւ ի՛ր փակ տուփին (ու կեղծ տրամաբանութեան) ապաւինելով, յաչս աշխարհին էրտողան կը ժխտէ իր քաղաքական նախնիներուն ու «մեծ սուտի» ուսուցիչներուն - Օսմանեան մեծաքանակ մարգասպաններուն, իթթիհատական տիփլոմաւոր բորենիներուն եւ իրենց սրբապղծած Ալլահին անուետով իրենց նմանները խոշտանգող ամբողջ զազազած ոհմակին - գործած մէկուկէս միլիոնի ոճիրը, հայոց Յեղասպանութիւնը: Արհաւիրքի բոլոր մանրամասնութիւններուն լաւապէս տեղեկ, աշխարհի մը մարդոց բանականութիւնն անարգող այս ժխտումը կը կատարուի ոչ թէ ապաւինելով պատմութեան անուրանալի, տուկուն ապացոյցներուն (որոնք կը հերքեն իր ուրացումը), այլ իր խելագատիկի փակ տուփի թելադրած տափակութիւններուն: Մէկ կողմէ, կը բարբառէ թէ մահմետականը չի կրնար ցեղասպանութիւն գործել (չըջուած մէկ տարատեսակը Օսմանեան կայսրութեան մէջ տարածուած այն սովորոյթին որով որեւէ թուրք կրնար դատի քաշել հայ մը՝ «տինիմէ սէօյտիլ» - «կրօնքիս հայհոցեց» - քմայածին զրպարտութեամբ): Միւս կողմէ, տարբեր-տարբեր հակադարձութիւններով կը սպառնայ Յեղասպանութեան պատմական իրողութիւնը ճանջող երկիրներուն (ղիւանագիտական խզում, առեւտրական ապսպրանքներու դադարեցում, Ռուսիոյ կամ «անբաղձալի» այլազան երկիրներու հետ չարաբերութիւններու բարելաւում, թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի ռազմագիտական կարեւոր խարիսխներու փակում, եւ այլն), հակառակ այն իրողութեան որ նման «պատժիչ» նախաձեռնութիւններ աւելի կը վնասեն թուրքիոյ քան Արեւմուտքին կամ ԱՄՆ-ին: Փակ տուփին մէջ կատարուած այս բոլոր պոռչտութեան ետին կայ այն միամիտ համոզումը, կամ անոր շուկայիկ խորամանկ ձեւացումը, թէ իր դիմագրաւած շատ «անախորժ» իրակաւնութիւնը - թուրքերու կողմէ հայոց Յեղասպանութեան պատմական անհերքելի փաստը - կը չբանայ երբ ան (էրտողան) կը փակէ իր (միտքին ու խիղճին) աչքերը:

Իր ուրոյն բնագաւառին մէջ,

ու համանման ոլորտպտոյտ (ան)տրամաբանութեամբ, Սերժ Սարգսեան կը փորձէ մշտնապէս մէջ ինքզինք համոզել թէ կրնայ ամբողջ հայ ժողովուրդի կամքը բխցնել եւ ազատութիւնը շղթայել՝ իր գուտ անձնական նպատակներուն համար: Իր մտային փակ տուփին մէջ ան կ'երագէ, Ռոպերթ Քոչարեանի օրինակով, աւատապետի մը նման տէրը դառնալ Հայաստան աշխարհի հողին, հարստութիւններուն, քաղաքացիներուն եւ անոնց միտքին: Ազատօրէն թալանել, իւրացնել, ծախել, գրաւի տակ դնել երկիրը ըստ իր քմայքին: Անմեղ այլախոհներ բանտարկելով զանոնք պատասխանատուները հոչակել իր իսկ գործած ոճիրներուն: Այդ ոճիրներու պատասխանատուութեան հոգը սարդուլու համար համարացնել եւ սուտ վկաներու ողորմելի վիճակին իջեցնել դատական-իրաւական ամբողջ համակարգը որ սահմանուած էր ըլլալու ժողովուրդի մարդկային իրաւունքներու պաշտպանութեան յառաջապահը:

Երկու բռնապետերու պարագային ալ, երբ ձախողի իրենց գործած կամ չքմեղած ոճիրներու ժխտումը, անոնք չեն վարանիր դիմել ամէն տեսակ խաբէբայութիւններու: Նախ կը չարափոխեն հիմնահարցը, անձանաչելի կը դարձնեն կատարուած ոճիրի իսկական բնոյթը, կը շարքեն իրականութիւնը: Էրտողանի մտային փակ տուփին մէջ, հայոց Յեղասպանութիւնը մոգական ճիպտի շարժումով կը վերածուի պարզ տեղափոխութեան՝ երաշխաւորելու նպատակով անոնց կենսիքի եւ ինչքի ապահովութիւնը (այդ պատճառաւ չէ՞ որ հայերէն կանխաւ կը պահանջին իրենց ունեցուածքի ամբողջական ցանկը): Ապակողմնորոշման ու գեղծարարութեան յաջորդ հանգրուաններուն, դերակատարները հրաշքով արդէն փոխանակած են իրենց տեղերը: Յանցագործներն ու ոճրագործները հիմա անցած են սուտածներու շարքերը: Էրտողանի (ան)տրամաբանութեամբ, ցեղասպանները իրենք գոհերն են ցեղասպանեալներուն, հայ կիւմուրներուն (կիւմուր=անհաւատ) - այս վերջին ծպտեալ սատանաները ապերախտ գտնուած են թուրք բարեխնամ ոճրագործներուն՝ աւելի՛ թուրքեր սպաննելով քան թուրքերը՝ հայեր: Հարց մի տաք թէ՛ եթէ իրականութեան նշոյլն իսկ կայ այս բարբառումներուն մէջ, ապա ինչո՞ւ եւ ի՞նչպէս հայերն են որ աքսորուած են իրենց պապենական հողերէն, մինչ թուրքերն այսօր առանց խղճահարութեան կը վայելեն իրենց գրաւած ու թալանած հայկական հողերը: Մարդավայել ճշմարիտ տրամաբանութիւնը կիրառելի չէ էրտողանի եւ իր մարդատեսաց զաղափարախօսներու ուղեղային փակ տուփերուն մէջ:

Դժբախտաբար - եւ զարմանալիօրէն - գրեթէ համանման ծուռումուռ ոլորտպտոյտով կ'ընթանայ Ռոպերթ Քոչարեանի գահաժառանգ հոգեգաւակ Սերժ Սարգսեանի ներկայիս որդեգրած ուղղութիւնը հայրենի հասարակութեան եւ ամէն տեսակի ճշմարիտ այլախոհութեան կամ ընդդիմութեան դէմ: Իր ծուռ հայելիին մէջ, նախագահական աթոռի բռնազաւթ-

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

**ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՓՐՈՖ. ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԻ ՀԵՏ, ԵՂԵՌՆԻ 95-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ
«ՀԱՅԱԹԱՓՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ ԴԺՈՒԱՐ ԹԵ ԿԱՐԵՆԱՅ ԻՐ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ
ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ԿԵՆԱՐԱՐ ԵՐԿԻՐ ՄԸ ԴԱՌՆԱԼ»**

«Մասիս»։ Արդեօ՞ք պէտք է շարունակենք մեր միջոցները յատկացնել Յեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, թե ոչ ժամանակը եկած է վերատեսուծեան ենթարկելու մեր առաջնահերթությունները:

Ժ. Լ. Յեղասպանության ճանաչման պայքարը հասկանալի դրդապատճառներ ունի, մանաւանդ երբ նկատի կ'ունենանք թրքական պետության որդեգրած պաշտօնական կեցուածքը անոր ուրացման մէջ: Բայց պէտք է նաեւ գիտակցինք որ մրցապայքարի մէջ ենք այդ պետության հետ, մեր կողմէ ամէն մէկ ճնշում կը հակադարձուի այդ պետության կողմէ նոր միջոցառումներով, որ կը ստիպէ մեզի աւելիով փոխադարձելու:

Արդարեւ պէտք է մտածել որ արդեօ՞ք մրցապայքարի այս ձեւը առաջընթացի լաւագոյն եւ միակ միջոցն է: Մենք հակամէտ ենք այս պայքարը յառաջ տանելու մեր հաւաքական եւ գոյապաշտ կարիքները շփոթելով մեր ռազմավարական մտածողության հետ: Մենք նաեւ հակամէտ ենք մոռնալու, որ նոյն ձեւով որ պատահեցաւ երբ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Հայկական Հարցը միջազգայնացուեցաւ, այսպէս ալ այսօր մենք չենք որոշիչ դեր խաղացողը ոչ այդ պայքարի ձեւաչափին եւ ուղղիւնի եւ ոչ ալ անոր արդիւնաւետութեան մէջ. այդ դերը կը պատկանի անոնց՝ որոնցմէ ճանաչում կը մուրանք:

Այստեղ պէտք է խոստովանիմ որ ես անձնապէս զոռնալ կը զգամ այն կացութեան համար որուն մէջ ազգովին յայտնուած ենք: Մենք երեկուան գոհերն ենք որ այսօր դարձած ենք մուրացկաններ, որոնք ինքզինքնին մշտապէս գոհի հոգեվիճակին մէջ կը դնեն, մշտապէս ենթակա մեր հակակռէն դուրս գտնուող ուժերու ողորմութեան, մշտապէս յուսալից ու ապա յուսախաբ, կախեալ նախագահի մը, վարչապետի մը, յանձնախումբի մը եւ կամ յանձնաժողովի մը արտասանելիք մէկ բառէն: Մենք կը վարուինք այնպէս, որ կարծես թէ որեւէ ուրիշ արժէք չենք ներկայացներ բացի գոհի տիպարէն, որ պիտի գոհաբերուի ուրիշի մը կողմէ, անոր ծրագրերներուն իրագործման համար: Կը վարուինք այնպէս, որ կարծես թէ գուրկ ենք ինքնուրոյն մտածելակերպէ:

Ես պիտի չուզէի իմ անձնական զգացումները վերածել գործելաձեւի, բայց պիտի չուզէի նաեւ ակնատես ըլլալ բնագոյնի հակադարձութեանց վրայ հիմնուած համայնքային գործելաձեւի մը: Ամենայն յարգանքովս նախագահ Օպամային, արդեօ՞ք պէտք է հոգ ընեմ թէ ինչ կ'ըսէ, կամ արդեօ՞ք իմ ամբողջ համայնքային կեանքն ու օրակարգը կախեալ պէտք է ըլլայ այն բանէն թէ ան պիտի գործածէ՞ Յեղասպանութիւն բառը թէ ոչ: Արդեօ՞ք իմ միջոցներու ու կորովի յատկացման ծրագրումը պէտք է հիմնեմ պայքարի մը տարեկան արարողութեան վրայ, որ ինքզինք կը կրկնէ տարուէ տարի, երաժշտական եղանակի մը բազմաթիւ երանգաւորումներուն նման:

Արդեօ՞ք իմաստալից եւ արդիւնաւէտ քայլ է կերտել ինքնու-

թիւն մը՝ գոհի հոգեվիճակի եւ կամ մեր հանդէպ ուրիշներու ունեցած պատկերացումներուն հիման վրայ: Արդեօ՞ք սա առողջ օրակարգ մըն է սփիւռքեան համայնքներու կերտման համար: Արդեօ՞ք այդ մէկը բաւարար կը նկատենք փոխանցելու նորահաս սերունդներուն:

Արդեօ՞ք ճիշտ էր այն ինչ որ ըրինք 40, 30 կամ 20 տարիներ առաջ: Եթէ այո, ապա արդեօ՞ք խելամտութիւն է նոյնը շարունակել այսօր: Ի՞նչ պարագաներու տակ պէտք է մեր մարտավարութիւնն ու ռազմավարութիւնը փոխենք:

Ես եզրակացութեանց պիտի չի յանգիմ այստեղ, այլ առաջարկ կը պիտի ներկայացնեմ. այս հարցի շուրջ շատ լուրջ հրապարակային եւ բանական քննարկում կազմակերպենք: Քննարկութեան առարկայ պէտք է դառնայ այս հարցը, մանաւանդ անոնց կողմէ որոնք Յեղասպանութեան ճանաչման պայքարը որդեգրած են որպէս հիմնական ռազմավարութիւն եւ 40 տարիներէ ի վեր երբէք չեն հարցաքննած կամ զնահատած անոր արդիւնաւէտութիւնը: Վերջացնելով ըսեմ թէ չեմ գիտէր եւ չեմ ալ հանդիպած հաւաստի ուսումնասիրութեանց, թէ այս ջանքերը որքան արժած են մեզի, տնտեսական, մարդկային եւ այլ հաշիւներով: Նշեմ նաեւ որ չեմ ալ տեսած որեւէ քննարկում այս պայքարի ժխտական երեւոյթներու մասին, որոնցմէ քանի մը հատ կրնամ մտաբերել:

Առնուազն անցնող 15 տարիները բացառապէս իմ բոլոր անոնց համար որոնք կը կամենան տեսնել, որ այլ մարտավարութիւններ կան, որոնք կրնան փոխարինել ներկային եւ կամ օգտագործուի ներկային կողքին: Բայց որպէս զի այդ մէկը կարելի դառնայ, մենք պէտք է ունենանք կազմակերպութեանց առաջնորդներ, որոնք ընդունակ են ինքնաքննադատութեան եւ ազգային շահերը իրենց կազմակերպութեանց շահերէն վեր դասելու:

«Մասիս»։ Ի՞նչ պէտք է ըլլայ մեր առաջնահերթ մտահոգութիւնը. Հայաստանի Հանրապետութեան թէ՛ Սփիւռքի եւ ապագայ սերունդներու բարոյութիւնը:

Ժ. Լ. Ես կը խորհիմ որ մէկը միւսին պէտք չէ հակադրուի: Յատակ է որ անկախ Հայաստանի մը գոյութեամբ Սփիւռքի իրավիճակը նախկինէն տարբեր է: Անցեալին հաստատած եմ ու տակաւին կը հաւատամ, որ այն ինչ որ Հայաստանը տուաւ մեզի, շատ աւելին է քան այն որ կրնանք հատուցել որեւէ ձեւով: Հայ նորահաս սերունդները հիմա աւելի անմիջական եւ ամբողջական ինքնութեան գիտակցութիւն մը ունին քան ունէին անկախութիւնէն առաջ:

Այս երկու էութիւնները տարբեր ըլլալով հանդերձ, փոխադարձ կապերով կախեալ են իրարմէ: Այստեղ պէտք չստակեցնել, որ Սփիւռքը ինքնին զանազան միաւորներու հոյ մը կը ներկայացնէ եւ պէտք չէ դիտուի որպէս մէկ միասնական ամբողջութիւն: Մենք պէտք է ընդունինք եւ յարգենք այս տարբերութիւններն ու կախուածութիւնները:

Սփիւռքի տարածքին անշուշտ կան մարդիկ, որոնք կ'ուզեն որոշ հեռավորութիւնէ մը օգտակար ըլ-

լալ Հայաստանին, նախընտրելով կեդրոնական սփիւռքահայ հաստատութեանց վրայ: Անոնք ազատութիւնը պէտք է ունենան այդպէս վարուելու: Բայց յատակ է որ թէ իրենք եւ թէ իրենց հաստատութիւնները, անկախաբար իրենց նախասիրութիւններէն եւ մոտեցումներէն, կ'ազդուին եւ պիտի ազդուին Հայաստանի անցուղարձներէն եւ միջազգային ասպարէզի մէջ անոր ներկայութիւնէն, սկսելով իրենց թիկունք կեցող սփիւռքահայերու Հայաստանի հանդէպ ունեցած համակրանքէն:

«Մասիս»։ Սփիւռքը որքանով կրնայ միջամուխ ըլլալ Հայաստանի ներքին քաղաքականութեան մշակման գործընթացին:

Ժ.Լ. Յեր հարցումին կարճ պատասխանը հետեւեալ հարցումն է. ո՞ր Սփիւռքը նկատի ունիք:

Այլապէս, բնականաբար խիստ սահմանափակ տարողութեամբ:

Առաջին սահմանափակումը կառուցային է. մինչ Հայաստանը ունի ղեկավար մը, որ գէթ ի պաշտօնէ երկրին անունով կրնայ խօսիլ եւ քաղաքականութիւն մշակել, Սփիւռքը հազարաւոր ղեկավարներ ունի եւ չկայ միակ անձ մը կամ հիմնարկ մը որ կրնայ խօսիլ համայն Սփիւռքի անունով:

Կը լիշեմ երբ Հայաստանի մէջ կը պաշտօնավարէի, օր մը եղաւ երբ Սփիւռքահայ զանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներ անշատաբար հանդիպեցան նախագահ Տէր Պետրոսեանի հետ, եւ ամէն մէկը որոշ քաղաքականութիւն յանձնարարեց տուեալ հարցի մը շուրջ: Իւրաքանչիւրը խօսեցաւ համայն Սփիւռքի անունով, պնդելով որ ինք կամ իր կազմակերպութիւնը լաւագոյնս կը մարմնաւորէ Սփիւռքի նպատակները, արժէքներն ու մտահոգութիւնները: Եւ անշուշտ մէկուն յանձնարարածը կը հարկադրուէր միւսինին հետ: Վերջաւորութեան Տէր Պետրոսեան հետեւեալ տրամաբանական եզրայանգումը փոխանցեց կազմակերպութիւններուն. երբ Սփիւռքը ունենայ ղեկավար մը, որ գէթ յանդիման նստելով Հայաստանի նախագահին հետ, կրնայ վստահութեամբ ըսել որ կը ներկայացնէ համայն Սփիւռքը առանց հակադրուելու այլոց, այդ ժամանակ միայն Հայաստանի նախագահը առնուազն պէտք է հաշուի առնէ Սփիւռքի կարծիքը:

Ի՞նչ է օրինակի համար Սփիւռքի միասնական դիրքորոշումը անցեալ տարի Թուրքիոյ հետ Հայաստանի ստորագրած Արձանագրութեանց վերաբերեալ: Կարգ մը կազմակերպութիւններ, որոշները մեծաթիւ անդամութեամբ, թիկունք կանգնեցան: Ուրիշներ ընդդիմացան: Ուրեմն ո՞ր մէկը կը ներկայացնէ Սփիւռքի դիրքորոշումը: Բացառապէս յատակ չէ որ Արձանագրութեանց թիկունք կանգնող կազմակերպութիւններուն բոլոր անդամներն ալ համաձայն էին իրենց ղեկավարութեանց որոշումին հետ: Նոյնքանով հարցական է որ ընդդիմադիր կազմակերպութիւններուն բոլոր անդամներն ալ համաձայն էին իրենց ղեկավարութեանց որոշման հետ:

Երկրորդ սահմանափակումը օրկանական բնոյթի է. հայկական աւանդական քաղաքական կուսակ-



ցութիւնները հաստատուեցան Հայաստանի մէջ, առանց մեծ յաջողութիւնեանց պիտի ըսէի: Անոնք դարձան Հայաստանեան կուսակցութիւններ, հոն փոխադրելով իրենց հիմնական օրակարգերը, անխախտ պահելով հանդերձ իրենց սփիւռքեան կառուցները: Ասոնց կողքին, այլ մեծ կազմակերպութիւններ, ինչպիսիք ՋԲԸՄը, Ամերիկայի Հայկական Համագումարը, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը երկար ժամանակէ ի վեր կը գործեն Հայաստանի մէջ եւ որոշ նկատառումներով ընդելուզուած են Հայաստանեան իրականութեան մէջ: Քսան տարիներ ետք ի՞նչպիսի որակում պիտի տանք այս կուսակցութեանց եւ կազմակերպութեանց. պարզապէս սփիւռքեան ե՞ն:

Միւս կողմէ ունինք Հայաստանի քաղաքացիներու ստուար թիւ մը, որոնք դարձած են սփիւռքահայ, բայց չեն ընդգրկուած սփիւռքեան աւանդական կազմակերպութեանց մէջ եւ ունին տարբեր զգայնութիւններ եւ հեռանկարներ: Արդեօ՞ք այս մեծ խումբերը Սփիւռքի մէկ մասը պէտք է համարենք եւ ո՞ր Սփիւռքի:

Կրնամ շարունակել սահմանափակումներու նշումը՝ քաղաքական, մշակութային՝ բայց վերել նշուածը ձեզի որոշ գաղափար մը կու տայ:

Ի՞նչ կ'ըսեն այս յատկութիւնները Սփիւռքի մասին եւ ի՞նչ են այս վերլուծութեան ակնարկութիւնները: Այս հարցումներուն պատասխանները բարդ են եւ խնդրաշարժ ու հոս տեղը չէ մանրամասնութիւններու մէջ մտնելու:

«Մասիս»։ Ի՞նչ հետեւեալ կրնայ ունենալ տկար ու հայաթափուած Հայաստան մը Սփիւռքի եւ համայն հայութեան համար:

Ժ.Լ. Նկատելով որ այս տարի կը նշենք Եղեռնի 95 ամեակը, նպատակայարմար կը գտնեմ հարցում մը տալ, զոր բոլորս ալ, մանաւանդ անոնք որոնք կ'ուզեն խոսիլ Հայաստանի թէ Սփիւռքի հայութեան անունով, լուրջ նկատառութեան պէտք է առնենք: Հարցում մը, զոր ձեւը հարցումին գրեթէ պատասխանն է:

Տեխնիկական առումով, 1915ի Յեղասպանութիւնը ի՞նչպէս պատահեցաւ:

Մենք կը քննարկենք Յեղասպանութեան սարսափները, անոր անբարոյութիւնն ու անօրինականութիւնը եւ նոյնիսկ սկսած ենք

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՏԱՄԵԱԿ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ ՍԽԱԼ Է

ՈՂԲԱՍ ՍԵՆԵԼՈՑ, ԲԵԿԱՆԵՍ ՇԱՆԹԵՐ, ԿՈՉԵՍ ԱՊՐՈՂԱՑ...

Պարոյր Սեւակ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ

Շուրջ մէկ դար առաջ կատարուած պատմական իրողութիւնը շարունակուած է մեկնաբանուել սխալ դարձուածքներով: Սխալն ու վրիպումները կատարուած են ոչ միայն այլոց կողմից, այլ շատ յաճախ հայերի կողմից: Պատմաբանները, Հայաստանի պետական անձնակազմի ինժեների, հոգեւոր առաջնորդների, հեռուստատեսութեամբ, թերթերով եւ վերջապէս պարզ ժողովրդի կողմից: 95 տարի յետոյ փորձենք գտնել այն ճշգրիտ մեկնաբանումն ու սահմանումը, որ անսխալ կը բնորոշի պատմական անժխտելի իրողութիւնը:

1. Հայոց աշխարհ, հայոց լեզու, հայոց լեռներ, այո, այս բոլորը հայոց են եղել հազարամեակներ շարունակ ու լինելու են հայոց այնքան ժամանակ, ինչքան ժամանակ գոյատեւելու է հայ ժողովուրդը:

2. «Հայոց Յեղասպանութիւն» հայ ժողովրդին չի պատկանել: Հայկական Յեղասպանութիւն չկայ, հայերի Յեղասպանութիւն դարձուածքը սխալ է, իսկ Հայաստանի Յեղասպանութիւն արտայայտութիւնը լիակատար անիմաստ:

3. Անգլերէն լեզուով մշտապէս օգտագործուող The Armenian Genocide դարձուածքը նոյնպէս սխալ է: Ճիշտ է The Ottoman genocide against Armenians, Գերմաներէն՝ Der volkmord an den Armenien.

4. Պատմական անժխտելի իրողութիւն է եւ ճշգրիտ բնութագրում հայոց պատմութեան ինչ-որ հատուածում՝ Հայոց Դէմ Գործադրուած Յեղասպանութիւն արտայայտութիւնը:

5. Թուրքիան որպէս երկիր ու թուրք ժողովուրդը, գոյութիւն չունէր, երբ հայոց դէմ գործադրուեց Յեղասպանութիւն, ժողովրդասպանութիւն: Այս հանգամանքը ու պատմական փաստը յոյժ կարեւոր է:

6. Մեր գրականութեան մէջ համարեա շարունակաբար կրկնուած է՝ «հայերի Յեղասպանութիւնը թուրքիայում» սխալ արտայայտութիւնը: Այս սխալը կրկնուած են օտարները: Այն սխալ տպաւորութիւն է առաջանում, թէ հայերը եղել են մի կրօնական փոքրամասնութիւն թուրքիայում, որ իսլամական անհանդուրժողականութեան հետեւանքով սպանուել են:

7. Հայոց Դէմ Գործադրուած Յեղասպանութիւնը ծրագրուած իրագործուել է Օսմանեան կայսրութիւնում, որի կազմի մէջ էր Հայաստանի Արեւմտեան հատուածը: Իրաւաբանական ճշգրիտ արտայայտութիւնը հետեւեալն է:

Հայերը Յեղասպանութեան են ենթարկուել իրենց երկրում՝ Արեւմտեան Հայաստանում Օսմանեան կայսրութեան ծրագրուած միջոցներով: Այս ճշգրիտ մեկնաբանութեանը հետեւում է, որ Յեղասպանութեան ենթարկուած հայ ժողովուրդը կորցրել է իր հայրենի Արեւմտեան մասը ու նրա շուրջ երեք միլիոն բնակչութիւնն ու մշակոյթը, ուստի Օսմանեան կայսրութեան իրաւաւորող թուրքիայի հանրապետութիւնը (1923 թ.) պարտաւոր է փոխհատուցում կատարելու հայաստանի հանրապետութեանն ու սփիւռքին:

Ձեր տեսակէտները գրէք.

Շուկախ, Սթոքհոլմ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻ 3 Սրտագին Կոչ՝ Մեր Պահանջատէր Ժողովուրդին



Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս Հարաւային Քալիֆորնիոյ հայութիւնը, Շարաք, Ապրիլ 24ին, կէսօրէ ետք ժամը 1:30ին պիտի համախմբուի Մոնթեպելլոյի Հայ Նահատակաց յուշարձանին շուրջ եւ միասնաբար պիտի յարգէ մեր ժողովուրդին մէկուկէս միլիոն նահատակներու անմոռաց յիշատակը: Հոն, միաբերան բողոքի եւ պահանջատիրութեան իր ձայնը պիտի բարձրացնէ՝ համայն աշխարհին յիշեցնելով, թէ Թուրքիա պարտաւոր է ընդունիլ իր կատարած ցեղասպանութիւնը եւ կատարել հողային ու նիւթական հատուցում հայ ժողովուրդին:

Այս հաւաքէն բացի, նոյն օրը, առաւօտեան ժամը 10էն սկսեալ տեղի պիտի ունենայ բողոքի երթ՝ Հոլիվուտի Little Armenia-Փոքրիկ Հայաստան շրջանին մէջ, կազմակերպութեամբ Միացեալ հայ երիտասարդներու: Իսկ կէսօրէ ետք ժամը 4ին, տեղի պիտի ունենայ բողոքի ցոյց՝ Լոս Անճելըսի մէջ քրիստոնէական հիւպատոսարանին առջեւ, կազմակերպութեամբ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան:

Հայկական Յեղասպանութեան 95ամեակի Ոգեկոչման միացեալ մարմինը կազմուած է մեր երեք ֆաղաֆական կուսակցութիւններու, Հ.Բ.Ը.Միութեան, երեք յարանուանութիւններուն եւ հայրենակցական միութիւններու կողմէ:

Միասնականութեան այս իրապէս սփանջելի ոգիով կոչ կ'ընենք մեր ժողովուրդին, որ ներկայ ըլլայ բոլոր ձեռնարկներուն ու մանաւանդ Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին շուրջ հաւաքին, ուր ներկայ պիտի ըլլան հայ եւ օտար ֆաղաֆական ու հանրային դէմքեր, եւ ուր պիտի կատարուի հոգեհանգստեան արարողութիւն մեր նահատակներու յիշատակին:

Իբրեւ յարգանք մեր նահատակներուն, կոչ կ'ընենք մեր մեր ժողովուրդին, որ այդ օրը նաեւ ծաղիկներ գետեղեն Նահատակաց յուշարձանին:

Պիտի տրամադրուի իմքնաշարժներ՝ ժողովուրդը Մոնթեպելլո փոխադրելու համար, հետեւեալ տեղերուն եւ ժամերուն.

Կլեմտէյի Ա. Աստուածածին եկեղեցի, մեկնում կէսօրէ ետք ժամը 12:30ին

Հոլիվուտի Հոպարթ եւ Սանսեթ փողոցներու միացման կէտ, կ.ե. ժամը 1ին

Հոլիվուտի Ա. Կարապետ եկեղեցի, մեկնում ժամը 12:30ին Alexandria փողոցէն

Կլեմտէյի Հայ Կաթողիկէ Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի (Կլեմտէյի բոլեմի զիմաց), մեկնում ժամը 12:30ին

Կոչ կ'ընենք մեր վերայարուցեալ ժողովուրդի զաւակներուն, որ այդ օր խուռներամներկայ ըլլան Նահատակաց յուշարձանին մօտ եւ միասնաբար վերանորոգեն իրենց ուխտը, հաւատարիմ մնալու համար անոնց պատգամին:

Յուշարձանին հասցէն է՝ Bicknell Park, 900 Via San Clement, Montebello, California:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՓՐՈՖ. ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԻ ՅԵՏ

Շարունակուած էջ 5-էն

աւելի լրջօրէն նայիլ անոր տուն տուող պատմական պատճառներուն, աւելի խորը երթալով քան այն անհեթեթ եւ վտանգաւոր միտքը (թէ եւ կարգ մը մարդոց համար դիւրահաս եւ յարմար) թէ թուրքը տեղիւնեցաւ հայերը սպաննելու համար եւ հայերն ալ հոն էին թուրքերու կողմէ սպաննուելու համար:

Դուն չեն կրնար սպաննել ժողովուրդ մը պարզապէս որովհետեւ կ'ուզեն այդ ընել եւ ասոր համար լաւ պատճառ մը կը գտնեն: Դուն պէտք է նաեւ ունենաս զայդ իրագործելու կարողութիւնը: Կառավարութիւն մը ըլլալը որոշ առաւելութիւն մը կու տայ քեզի, բայց բաւարար չէ: Իսկ եթէ զոհը որոշ թիւ մը կը ներկայացնէ հողին վրայ, ան կրնայ դիմադրել, դժուարացնել եւ կամ անկարելի դարձնել այդ կառավարութեան գինքը ոչնչացնելու փորձը: Մանաւանդ այնքան արմատականօրէն ինչպէս կատարեց Իթիհատը 1915-1917 թուականներուն:

Կային վայրեր ուր դիմադրեցինք, երբեմն յաջողութեամբ: Երեւակայեցէք եթէ Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութեան թիւը փոխան երկու միլիոն կամ քիչ մը աւելին ըլլալու (ներառեալ Օս-

մանեան կայսրութեան միւս շրջաններու հայութիւնը), ըլլար հինգ միլիոն: Չէ՞ք խորհիր որ կառավարութեան այդ ծրագրին յաջողութեամբ դիմադրաձեւու մեր հաւանականութիւնները աւելի բարձր կ'ըլլային: Աւելի՞նչ, չէ՞ք խորհիր որ Իթիհատի կառավարութիւնը կրկնակի պիտի մտածէր, նախքան որոշելը թէ Հայկական Հարցին լուծումը կը կայանայ Հայ տարրին կատարեալ ոչնչացումով Անատոլիայի կամ Արեւելեան Նահանգներու եւ կամ Արեւմտեան Հայաստանի (ինչպէս որ կ'ուզէք այդ մէկը անուանել) տարածքին վրայ:

Բազրատուներու իշխանութեան շրջանին Հայաստանի բնակչութիւնը մօտ մէկ միլիոն հոգի կը գնահատուէր, մեծամասնութեամբ հայ եւ մեծ մասաւ հաստատուած այն տարածքին մէջ, որ յետագային պիտի կոչուէր Արեւմտեան Հայաստան: Ուրեմն ի՞նչն էր պատճառը, որ Անգլիան կամ աշխարհի տարբեր տեղամասեր որոնք նոյն ժամանակաշրջանին ունէին մօտաւորապէս նոյնքան բնակչութիւն, դարձան բազմամիլիոն բայց ոչ Արեւմտեան Հայաստանը: Այո՞, Սելճուք եւ Մոնղոլ ժամանակաշրջաններուն եղան կտորածներ, ինչպէս նաեւ կրօնափոխութիւններ: Բայց

մեծ մասամբ իրողութիւնը հանդարտած էր 17րդ դարու մուտքին: Արեւմտեան Հայաստանը աւելի շատ հայ կորսնցուց այդ ժամանակէն մինչեւ Յեղասպանութիւնը: Այս հայաթափման պատճառը տնտեսական պայմաններու առթած արտագաղթն էր, անապահով միջավայրը եւ օտար վայրերու հմայքը, որոնք այս խնդիրներուն լուծումներ գտնելու յոյսով կը պարուրէին ժողովուրդը: Որոշ նկատուածներով այս վերջին բներեւոյթը գրեթէ համատարած էր: Բայց մինչ ուրիշ երկիրներ եւ ժողովուրդներ ի վիճակի էին տանելու բնակչութեան այս կորուստը առանց մեծ ռազմավարական վնասներու, մենք ի վիճակի չէինք տանելու այդ մէկը:

Երբ կը քննարկենք այս պատմութիւնը, մենք պէտք է նկատի առնենք երկու ազդակներ: Առաջին, ի՞նչ էր հայ քաղաքական կուսակցութիւններու, նախ Հնչակեաններու ու ապա Դաշնակցութեան մտասեւեռումը, իրենց հիմնադրութենէն մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Պատասխանը՝ Հայաստանի բնակչութեան նօսրացումն ու անոր վտանգաւոր հետեւանքները: Երկրորդ, անոնք որոնք այս նիւթով հետաքրքրուած են, պէտք է կարդան Ֆուադ Տուստարի գիրքը, որ լոյս պիտի տեսնէ այս ամիս: Նիւթը՝ Հայ բնակչութեան բացարձակ եւ յարաբերական թուա-

քանակի կարեւորութիւնը Օսմանեան եւ Երիտասարդ Թուրք դեկավարներու մտածողութեան մէջ:

Տկար Հայաստան մը անշուշտ շատ խոցելի է մեկէ աւելի պատճառներով. մանաւանդ երբ այդ Հայաստանը իր խնդիրները չէ լուծած իր բոլոր դրացի երկիրներուն հետ: Հայաթափուած Հայաստան մը դժուար թէ կարենայ իր գոյութիւնը արդարացնող կենարար երկիր մը դառնալ: Կենարար երկիր կրնան դառնալ երբ ունիս կենսախայտ հասարակութիւն մը, որ պահելով հանդերձ իր անցեալի լաւագոյն աւանդները, կրնայ նպաստել իր յառաջխաղացքին ու զարգացման եւ գիտէ ինչպէս քայլ պահել փոփոխութեանց հետ: Այսպէս կ'ուրեւնաս զբօսավայր-Հայաստան մը, սփիւռքահայ զբօսաշրջիկներու համար: Յստակ յարաբերութիւն մը կայ թուաքանակի եւ ապահովութեան, թուաքանակի եւ զարգացման, թուաքանակի եւ որակի, թուաքանակի եւ հարկային հիմքի միջեւ: Այս նկատառումներէն մեկնած, իմ տեսակէտով, իր խնդիրները իր դրացի երկիրներուն հետ լուծելու Հայաստանի ձախողութիւնը, գլխաւոր պատճառն է մեծաքանակ արտագաղթին: Իսկ մեծաքանակ արտագաղթին Հայաստանի սպազային սպառնացող մեծագոյն վտանգն է:

Թարգմանեց Յարութ Տ.Գ.


ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾԱՍԵԱԿ

ԵՂԵՌՆԸ՝ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԿԻՆ ՄԷՋ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳԻՆ

Եղեռնը հայ գրականության մեջ, ցարդ չունեցաւ իր անհանդուրժեալ տարողութիւնը ընդգրկող գրական նուաճումներ, ըլլալ բովանդակութեան լայնածիր, ամբողջական սեւեռումով եւ գեղարուեստական բարձր մշակումով: Գրեթէ վերջին հարիւրամեակի իւրաքանչիւր հայ գրողի գործերուն մէջ սակայն, ան ցաւազինորէն մնաց որպէս տեւական ներկայութիւն ու յանձնարար, մղձաւանջ ու մտատանջութիւն, եւ կոտորացող կսկածանք որպէս, իր լուռ կամ խօսուն, բայց միշտ ներգործող հետեւանքներով կամ ազդեցութեամբ, բայց երբե՛ք չհասաւ կատարեալ իրագործումի բարձրութեան: Նոյնիսկ, ընդհակառակը, այդ անկարողութիւնը յաճախ պատճառ դարձաւ ամբողջական կամ աւելի ճիշդը՝ կաշկանդումի, դատապարտուած հոգեկան կաշկանքի: Այս վրիպանքին բացատրութիւնը անպայման տաղանդի պակասը չէր. Տաղանդներ միշտ ալ ունեցած ենք. Չապել Եսայեան, Յակոբ Օշական, Թէքէեան, Կոստան Չարեան ու Օտեան, ապա՝ Մահարի, Համաստեղ, Սիւրմէլեան, Շահնուր, Շուշանեան ու Որբունի եւ Ալաճաճեան ու Ծառուկեան, «Աւերակներուն Վրայն» մինչեւ «Սէրը Եղեռնին Մէջ»ով փորձեցին սեւեռել Եղեռնը, բայց չյաջողեցան: Միայն անոր մասնակի երեսը բացալայտել կրցան, հիւանալիօրէն պատկերելով Եղեռնի հետեւանքներն ու տեւական անդրադարձները սիրուք դարձած մնացորդացին վրայ: Ծենճերեցան մեր ողբերգութեամբ, բայց բուն Եղեռնը, բազմաձևաւ իր խորութեամբ եւ խենչալայն ծրագրուածութեամբ, իր աներեւակայն ծաւալով ու դաժան անմարդկութեամբ, գոհերուն անպատմելի արհաւիրքին ապրումներով մնաց աննուաճ: Մենք չկրցանք մեր ազգային նեղ մտաւմբռնումն ու գերզգայնութիւնը շրջանցելով, համամարդկային լայն հորիզոնականութեան բերել կատարուածը եւ շողկապել գայն արդի մարդկային գաղափարներուն եւ իտէպլներուն հետ: Տակաւին չկրցանք կուռ բովանդակութեան մը հետ նաեւ գեղարուեստական գրաւուցութեամբ ու շարժութիւնը գրաւել համաշխարհային գրական կարծիքին: Տրուածը որպէս լացուկումած ողբասացութիւն ընդունուեցաւ եւ անտարբեր թողուց գանոնք: Ըսինք, տաղանդի պակասը չէր պատճառը, այլ՝ հոգեկանական հանգուցաւոր բարդո՛յթը լացի, ողբի եւ գութի: Եղեռնը տեսնողն ու ապրողը, մեծաւ մասամբ նահատակուեցաւ խուժուժօրէն, իսկ դժոխքէն մագապուրծ ճողոպրածներն ալ անըմբռնելիին անհանդուրժեալ առջեւ շրջած, շուրջան ձերբազատուել մտային եւ հոգեկան անաւոր կաշկանդումէն, եւ իրենց տեսածին հատուածական մանրամասնով տարուած, ծաւին ետեւ չտեսան մրկահար գալարուող անտաւին անհանդուրժեալութիւնը: Իսկ նորերն ալ, ուրիշներու յուշերով եւ վաւերագրութեամբ չկրցան թափ տալ իրենց երեւակայնութեան եւ ընդգրկել աներեւակայնի: Պարզապէս անոնք ալ կաշկանդուեցան կատարուածին անհանդուրժեալութեամբ: Շատ անգամ, նոյնիսկ չկարենալով ըմբռնել բազմութիւններու հլու, ոչխարային համակերպութիւնը, փորձե-

ցին ընդգրկել ու աչպանել կրաւորականութիւնը: Այս երկու հոգեբանական կաշկանդուածութենէն գերծ օտարականին միայն վիճակուեցաւ ակնկալուած իրագործումը՝ յանձնաւստերեացի հրեայ Ֆրանց Վերֆէլին, իր կոթողական «Մուսա Լեռան Քառասուն Օրերը» դիւցազնավէպով: Դժբախտաբար, արժանաւոր հետեւորդներ չունենալով, ան մնաց եզակի երեւոյթ: Վերֆէլի վէպը, ամէն բանէ առաջ, լիիւրա գրականութիւն էր, միջավայրի, մթնոլորտի վարպետ ստեղծումով, ուր կը ծաւալէին լիարիւն հերոսներ, իրենց նկարագրի ուրոյն գիծերով եւ մանաւանդ հետզհետէ, դէպքերուն առնթներ կազմաւորող մտածելակերպով եւ հոգեբանութեամբ: Առանց անապարանքի, հանդարտ դատողութեամբ, տրամաբանութեան կարծր լուսարձակներուն տակ, Վերֆէլ յառաջ կը տանէր գործողութիւնները, մասնիկ առ մասնիկ կերտելով նկարագիրները, գարգացնելով դէպքերն ու գործողութիւնը, իր տրամաբանական լրումին հասցնելով վէպը, որ համաշխարհային հռչակի արժանացաւ իր ժամանակին եւ տակաւին կը շարունակէ հմայել նորանոր ընթերցողները: Հոս ալ ծանրութեան կշիռը ընդգրկումն է մուսալեռցիներուն, անոնց դիմադրական ոգին եւ ապրելու, գոյատեւելու անկապտելի կամքը: Վերֆէլ յաջողեցաւ բարձր արուեստով աշխարհին ցոյց տալ, որ հայը լոկ մորթուող ոչխար չէ եւ ատակ է հերոսական իրագործումներ արձանագրելու: Արդարեւ, մենք ալ, մեր կարգին, կրցանք, Վերֆէլին ստեղծած օրինակին հետեւելով, գոնէ, մեր ուրոյն դիցազնավէպերը երկինք՝ մեր բազում քաղաքներուն ընդգրկումները լիարժէք արուեստով գրականութեան բերել: Այս մարզէն ներս, Մահարիի «Այրող Ազգեստանները», Ալաճաճեանի «Եղեգները Չխոնարհուեցին», Դաշտենցին «Խողեղան»ն ու «Ռանչպարներու Կանչը» եւ Համաստեղի «Սպիտակ Ձիւղորդ», բարեբախտաբար ջարդ ու կոտորածի ողբասացութեանէն անդին անցնելով, որոշ յաջողութեամբ կենդանացուցին համատարած համակերպութեան դէմ ընդգրկող խիզախումները ցեղին ընտրեալ հոգիներուն: Ծիշդ է, անոնք առաւելաբար եղան գոյամարտներու ներբողանքը՝ եղեռնի ստորանագծուած խորատարածքին վրայ, ու ջարդերու խուժուժութիւններն ու գաղթի համարժէք սեւեռումը մնաց չնուաճուած: Տանթէի մը վիթխարի տաղանդն ու խուզարկու խիզախումը պակասեցաւ անոնց: Որպէս իսկական մարդկային էակներ, անոնք չկրցան ընդգրկել անմարդկայինը: Նորագոյն փորձերէն պէտք է յիշատակել Անդրանիկ Ծառուկեանի «Սէրը Եղեռնին մէջ»ը, զոր իրեն յատուկ առոյգ ոճով, «Թուղթ Առ Երեւան»ի հեղինակը վրձինեց Եղեռնի մեծ գոհերէն Ռուբէն Սեւակի կեանքն ու նահատակութիւնը, դարձեալ, առանց յամենալու համատարած գաղթին ու ջարդերուն վրայ: Մէկ շունչով, քիչ մը հապճեպ մօտեցումով, առանց խորացումի գործը մը եղաւ այս երկին ալ: Անդրանիկ Անդրէասեանի եւ Լուսինեի «Փլուզում»-ը է վերածնունդ» շարքը, բացառաբար, փորձեց տալ ջարդերուն եւ գաղթի



դաժան արհաւիրքը սակայն ան ալ հակառակ իր ծաւալին, մնաց փորձի շրջագիծին մէջ, ոչ համոզիչ, մանրամասններուն մէջ խճճուած՝ բայց այլապէս օգտակար՝ վաւերաթուղթ մը որպէս: Խորացումի նոյն պակասով տառապեցաւ նաեւ Անթոնիա Արսլանի «Արտոյտներու Ագարակը» վէպը, որ սակայն ունեցաւ ջարդերու քստմնեցուցիչ տեսարանները պատկերելու բաւական իրապաշտ մօտեցում եւ յաջող սեւեռում: Գաղթի արիւնոտ ճանապարհն ալ, եթէ նկատի չառնենք անոնց հետ առնչուող վիպային արուեստական հիւսուածքը, բաւական խօսուն եղան: Վերջին ընդունելի փորձը պիտի գար Ֆրանսայէն, Ֆրանսերէնով գրող, բայց նախկին եգիպտաբնակ եւ ծագումով յոյն գրող Ժիւլյետ Սինուէի «Երեւան» վէպով: Մօտ

քսան հատորներու հեղինակ, Ժիւլյետ Սինուէ, քաջածանօթ մեր պատմութեան, մեր կենցաղին ու մտայնութեան՝ հմտութեամբ եւ մեծ սիրով ձեռնարկած է տալ էրգորումի մէկ հայ ընտանիքի մը արիւնոտ Գողգոթան, եղելութիւններուն միահիւսելով պատմական դէպքերու եւ հանդիպումներու վճռորոշ տեսարաններ, (Պանք Օթոմանի գրաւում, Մորկընթաու-Թաւաթի հանդիպում, Թեւէլեբանի պատանեկան ապրումները տառապալից եւ իր վրիժառութեան պակասումը՝ Թաւաթի սպաննութեամբ:) Դարձեալ, այս գործն ալ, մեծ յաւակնութիւններու արգասիք չէր կրնար ըլլալ, իր մակերեսայնութեամբ: Նպատակը բարի ու սիրոյ տուրք էր մեր ժողովուրդի տառապանքներուն հանդէպ, բայց տրուածը՝ ոչ գոհացուցիչ, նոյնիսկ գրական արժեքափի չհասած: Բայց տոկուն իրագործում մը՝ հայ դատին ու Եղեռնին ի նպաստ: Այս տեսակի ներդրումին ալ պէտք ունինք անշուշտ: Հոս պէտք է վերջապէս շեշտել, թէ լայնահուն, խորացուած, բազմակողմանիօրէն ուսումնասիրուած եւ գրական իսկական տաղանդով յազեցուած վէպ կամ վիպաշարք ակնկալել, մեր դժուարին պայմաններուն մէջ հետզհետէ նօսրացող շարքերով, ոչ արհեստավարժ գրողներէն, պիտի ըլլար ոչ իրապաշտ մօտեցում մը, չըսելու համար՝ անկարելի: Կրնանք միմիայն յուսալ եւ մաղթել, որ հայրենի ծանօթ կացութեան բարելաւումով, ստեղծուին լաւագոյն պայմաններ եւ նոր սերունդի գրողներ ունենան կարելիութիւնն ու տաղանդը, վերջապէս երկինքու Մեծ Եղեռնին անհանդուրժեալ համագօր Մեծ մեր վէպը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՍ ԵՐԵՍԸ

Մարուակուած էջ 4-էն

ման եւ երկրի ստրկացման ու թալանին դէմ կանգնած հայրենի ամբողջ թշուառ ժողովուրդը (իր բառով) շար է, չի գնահատեր իր բարութիւնը: Իր (Ալի Պապայի) եւ իր քառասուն գողերու (օլիկարիւներու, հարստապետերու, երկիրը ծայրէ-ծայր թալանողներու) էջքը շուրջ հարստացման մենաշնորհեալ փակ տուփը այնքան փոքր է որ տեղ չունի պարզ ժողովուրդին կամ ընդդիմութեան համար: Ասկէ կը հետեւի թէ, ամէն անգամ որ ընդդիմութիւնը գանգուածային տարողութեամբ խաղաղ ու կարգապահ հանրային հաւաք կը կազմակերպէ իշխանութեան ապօրինութիւնները քննադատելու համար, ընդդիմադիրները գանգուածային անկարգութիւններ կատարած կ'ըլլան՝ իշխանութիւնը բռնի իւրացնելու նպատակով (ենթադրաբար իշխանութիւններու գործադրած ապօրինի միջոցներու օգտագործմամբ): Էրտողանի փակ տուփէն փոխ առնուած նոյն (ան)տրամաբանութեամբ, ընդդիմութիւնն է բուն պատճառը 2008 Մարտի Մէկի հաւաքի գոհերուն, որոնց ոճրագործները - ինչ գարմանք - ոստիկանութիւնը չէ կարողացած գտնել՝ աւելի քան երկու տարուայ հետ քննութեան հետք: Նոյն գոց տուփին մէջ կը մտնեն հայոց Յեղասպանութեան ճանաչումը (քաղաքականութեան մէջ ընդգրկուելու

անարժան «պատմական» կամ նմանատիպ «քաթեկորիա»), ազատագրուած արցախեան տարածքներու առանց համարժէք փոխադարձութեան վերադարձը (պայմանականօրէն գայն որակելով իրապաշտ քաղաքականութիւն եւ ոչ միակողմանի անընդունելի գիշում), հակահայ թափանցիկ ծուղակներով շարագրուած «Արձանագրութիւններ»ու (Protocols) ստորագրումը (գայն գովազդելով որպէս հայ-թրքական գործակցութեան վերահաստատման անվնաս համաձայնագիր): Կարելի է երկար քննարկել մարդկային տարրական տրամաբանութիւնն ու իմացականութիւնը անարգող ուրացման ու ժխտումի այս մտային ու բարոյական մոլորանքի ախտաբանութիւնը: Այստեղ պիտի բաւականանամ ընդգծելով թէ՛ էրտողանի կողմէ հայոց Յեղասպանութեան ժխտումը եւ Սերժ Սարգսեանի կողմէ հայ ժողովուրդի նիւթաբարոյական ստրկացումը գուգահեռ կ'ընթանան իրենց մերժողական անտրամաբանութեամբ, բայց տրամաբանօրէն իրարու կը միանան հասարակաց կէտի մը վրայ: Այդ կէտը - չգարմանանք - հայ ժողովուրդն է իր մտահոգիչ բախտով, հարցականի տակ ինկած գոյատեւմամբ եւ անստոյգ ապագայով: Հետեւութիւնները կը ձգենք մեր ընթերցողներուն - ու մեր ժողովուրդի վերապրումով մտահոգ բոլոր ազնիւ հայորդիներուն:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԴՈԿՏ. ՅՈՎՅԱՆՆԵՍ ԱՐՄԱՐԱՆԵԱՆԻ «ԹՈՒՐԲԻԱՆ ԵՄԵՐՅԱԾ Է ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ» ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ

Այս է բազմակողմանի գրող հրապարակախոս դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեան նուիրուած փաստագրական նոր հատորին խորագիրը: Իսկ մեր կողմէ աւելցուած է ենթախորագիրը:

Մեր թուրք պետութեան ճակատին դամոզ, ներկայ ուսումնասիրութիւնը ճիշդ ատենին հրապարակելու, մեկնելով այն իրողութիւնէն, թէ նորանոր անակնկալներով ու զարգացումներով յատկանշուող ՀՀ նախագահին ձեռնարկած ֆուլթայլին դիւանագիտութիւնը կամ փրօթոքոյններու ստորագրութեամբ ստեղծուած խառնաշփոթը, տարիէ մը ի վեր կլանած է հայ քաղաքական միտքը ու իր ելեւէջներով, կը փոթորկէ ներազգային մեր կեանքը: Այստեղ տեղին է յիշել հռովմէական ասացուածքը, թէ «Երբ թիւերը խօսին, աստուածները կը լռեն»: Մենք ալ մեր կարգին ատոր հետեւողութեամբ պիտի կրկնենք. «Երբ փաստերը խօսին, թերահաւատները կը լռեն...»: Անշուշտ եթէ լռեն... Սակայն հակառակ անոր որ Հայոց Յեղասպանութիւնը գիտականօրէն փաստարկուած իրողութիւն է, Թուրքիոյ հետ ստորագրուած տիրահաշակ փրօթոքոյններու պայմաններէն մէկը, հայ եւ թուրք յանձնաժողովի մը կազմութիւնն է, իբրեւ թէ 1915ին դէպքերը քննարկելու, քայլ մը որ կասկածի տակ կ'առնէ 1890-1923 պատահած կոտորածներն ու ցեղասպանութեան արարքը: Այս մէկը կը նմանի անհեթեթ ու մտադժին օրէնքի մը որ գլխատուած անհատը կը մղէ, արիւնլուալ իր գլուխը թեւին տակ դատարան ներկայանալ, դատաւորին եւ երդուեալներուն փաստելու համար իր գլխատուած ըլլալը: Երբ Ահմարանեանին գիրքը ներկայացնելու աշխատանքով տարուած էի, ձեռքս «Ասպարէզ»ին Չորեքշաբթի օրուան (Մարտ 24) թիւը անցաւ, որուն առաջին էջին վրայ հետեւեալ խորագիրը կրող լրատուութիւնը կը տրուէր.

«Ըստ Հիլլըրի Քլինթընին՝ Թուրքիոյ եւ հայերու միջեւ պատմական հարցերու քննարկման յանձնախումբը կազմուելու վրայ է»: «

Պարզ հայերէնով՝ շուտով քննարկման, այսինքն կասկածանքի տակ պիտի առնուի Հայոց Յեղասպանութիւնը: Անշուշտ մեր պետական այրերը տարբեր տարագ, տարբեր իմաստ կը փորձեն հագցնել հաւատաքննիչ այդ յանձնախումբին վերապահուած մեզի համար բացայայտ դերին ու առաքելութեան: Պետական այդ նոյն այրերը իրենց անպարտութիւններով ու բառախաղերով խելքը գլուխը ոչ մէկ հայը ցարդ կրցան համոզել:

Ժամանակին, միջնորդ մը կը փորձէ հայ երիտասարդ մը հարանցու աղջկայ մը ծանօթացնել: Ծամբան երիտասարդը յանկարծ կ'արթննայ իր թմբիւնէն ու միջնորդը կը զգուշացնէ. «Միսաք ամմօ, չըլլայ որ ծանօթացնելիք աղջիկդ գէր ու կ'ըրիկ բան մը ըլլայ...»

-Ո՛հ,- կը պատասխանէ պատրաստաբան միջնորդը,- գէր չէ ես քիչ մը լուրջիկ է: Այսինքն հարկը քիչ...»


Հայրենի մեր ղեկավարութեան ալ կատարած բառախաղային ուղղամարտութիւնն է:

Թուրքիոյ վարչապետ էրտողանին աջ ու անհակ կատարած յայտարարութիւնները այն տպաւորութիւնը կը թողուն, թէ ցեղասպանութեան յղացքը հարցականի տակ պիտի դրուի կազմուելիք յանձնաժողովին կողմէն, քանի որ դոկտ. Ահմարանեանին եւ միւս ներհոն պատմաբաններուն պրպտումներէն ի յայտ կու գայ, թէ թուրքերը 1915էն ի վեր փճացուցած, մաքրագրած, մաղէ անցուցած են վտանգաւոր փաստաթուղթերը, ու 1890էն մինչեւ 1922ը երկարող դէպքերը փաստարկող հրահանգ հեռագիրները պարփակող արխիւները: Երբ 1918-1919ին Պոլսոյ մէջ հայոց արիւնկզակ դահիճներուն դատավարութիւնը տեղի կ'ունենար, դատարան ներկայացող թուրք պաշտօնեաներու վկայութիւններէն ի յայտ եկաւ որ արդէն իսկ պատերազմի աւարտին Թալէաթին եւ միւս դահիճներուն հրահանգով, հայոց տարագրութեան ու ցեղասպանութեան հայող բոլոր փաստաթուղթերը հրոյ ճարակ դարձած էին կամ ալ պարզապէս անյայտացած (տե՛ս էջ 88-128): Ահմարանեանի հատորին մէջ կը յիշուի անունը գերմանացի հրամանատարի մը, Վոն Սէէքը, որ պաշտպանութեան նախարարութեան փաստաթուղթերը հետը Գերմանիա փախուցուցած է (էջ 88): Արդ բոլոր ժամանակներու թերահաւատներուն հարց կու տանք. արդեօք թուրք պետութիւնը այնքա՞ն միամիտ է կամ այնքա՞ն մը յիմար, որ առօք փառօք ելլէ իր գործած ցեղասպանութեան արիւնաթափա պատաթուղթերը հրապարակով միջազգային ժողովականներու առջեւ փռէ:

Ահմարանեանի փաստագրական հատորին նիւթերուն ծանօթանալով ի յայտ կու գայ, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ պատրուակներու տակ թուրքերը ամբողջ ժողովուրդ մը տարագրեցին ու անոր բնաջնջումը ծրագրեցին ու գործադրեցին, օգտուելով Ա. Աշխարհամարտի շփոթէն ու իրարանցումէն: Թուրք պատմագրութեան ու անոր ծախուած օտար մասնագէտներու կողմէ, ընդհանրապէս քաղաքական տարագ կը հագցուի ցեղասպանութեան արարքին եւ կատարուածը կը պատճառաբանուի այն մեղադրանքով, որ, իբրեւ թէ թուրք պետութեան ապահովութիւնը պահպանելու մտահոգութեան թելադրուած Ռուսիոյ հետ սահմանակից շրջաններու հայ ազգաբնակչութիւնը աւելի ապահով վայրեր տարագրելու որոշումը կ'առնուի, եւ այդ մէկը գործադրութեան կը դրուի գուտ ուղղամարտական պահանջներէ թելադրուած:

Անոնց կողմէ առաջ քաշուող այս թեզը, կատարուած սարսափելի ոճիւրի պաշտօնական հանդերձանք տալ է միայն: Իրենց բուն նպատակը հայերը վերացնել էր իրենց պապենական հողերէն, որպէսզի Ա.

Աշխարհամարտին Օսմանեան կայսրութեան պարտութեան պարագային, յանկարծ ինքնավարութիւն կամ ազգային օճախ չպահանջէին անոնք: «Թուրքիան թուրքերու համար» կարգախօսը ի օրու էր, բան մը որ երկու ժողովուրդներուն համար ալ աղիտալի



դարձաւ (էջ 87): Ատկէ դուրս ալ ըստ Ահմարանեանի նշած աղբիւրներուն, հակառակ հայ բնակչութեան զանցառելի թիւին, Օսմանեան կայսրութեան հարստութեան եւ առեւտուրի կէսը հայերու ձեռքը կեդրոնացած էին եւ երկրին խոշորագոյն ուղեղները, ճարտարագիտական, բժշկական, մտաւորական, երաժշտական ու վաճառականական բնագաւառներուն մէջ մեծ մասամբ հայեր եղած են, նախանձը շարժելով թուրք ազգայնականներուն (էջ 76-115):

Ինչպէս արդէն շատերուզ ծանօթ է, Թալէաթ եւ իր ցեղասպան ընկերները կամ իթթիհատական բորենիները, տարագրութեան չսկսած բանտերէն քրէականները ազատ արձակեցին եւ զաղտնի երդման արարողութիւն կատարելով ոճրագործներուն հետ դաշինք կնքեցին, թէ անտէր հայերուն թալանէն ու սպանութեանէն վերջ, անոնց հարստութիւնը՝ ըլլալ չնչին ոսկի կամ թանկարժէք իրեղէն, ներքին նախարարութեան մականին տակ գործող զաղտնի սպասարկութեան կեդրոնը պիտի տարուէր եւ հաւասարէ հաւասար բաժնուէր իթթիհատական բորենիներու ու քրէական աւագակախումբերուն միջեւ: Զէթական արիւնարբու խումբերը իթթիհատականներու պատուէրով, ցերեկը կը թալանէին ու կը սպաննէին անտէր հայ գաղթականները, իսկ գիշերները գինարբուք կը սարքէին հայ կոյսերով: Նոյնմբեր 1 1918ին երբ գերմանական ուղղմանաւոր փախուստ կու տային իթթիհատական պարագլուխները, անոնք իրենց հետ կը տանէին հայ կիներուն կուրծքէն խլուած ոսկե-

ղէնն ու այրերէն կողոպտուած աւար-ոսկեղորամները: Ըստ Ահմարանեանի մէկտեղած փաստերուն, 180 միլիոն թրքական ոսկեղորամ բաժին ինկաւ 12000 չէթէներուն եւ տասնեակ մը իթթիհատականներուն (էջ 44-45-76): Հաշիւ ըրէ՛ք Թալէաթին բաժին ինկած արիւնոտ ոսկեղորամներու քանակը: Էրտողանները թող հազար ուրանան մարդկութեան դէմ իրենց նախահայրերուն կատարած ոճիւրներն ու հայերու կողոպտու-թալանումը: Տակաւին անշարժ կալուածներու ու հողատարածքներու վերաբերող էջերը չենք ալ բացած:

Եւ այս մէջբերումները կը կատարեմ բարեկամիս դոկտ. Յովհաննէս Ահմարանեանին փաստագրական նոր հատորէն, որ մեզի պէս գրող-հրապարակագիրներու համար ոսկեհանք է կամ փաստերու ծով:

Յովհաննէս Ահմարանեանի «Թուրքերը ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը» ներկայ հատորը կազմուած է 196 էջերէ: Անոր յառաջաբանը գրած է հանրայայտ պատմաբան՝ դոկտ. Աւետիս Փափեան: Հեղինակին կողմէ գիրքը չակերտներու մէջ «ձօնուած» է պատմութիւնը խեղաթիւրող հետեւեալ պատմաբաններուն. Թիւրքայա Աթալթին, Սալահի Սոնյէլին, Իգլի Օմէրին, Եէլմազ Օսթունային, Հիւսէյն Ալլիկին, Եուսուֆ Հալաճօղլուին, Սուլէյման Սէյֆի Օկիւնին:

Գիրքը հրատարակուած է Նագարէթ Պուլղուրճեանի ցեղասպանութեան գոհ գացած գերդաստանի անդամներու յիշատակին:

Հեղինակին մեծագոյն ձեռքբերումը կամ որպէս պրպտող միտք ու պատմագետ անոր առաքինութիւնը, հատորը անգլերէն լոյս ընծայած ըլլալն է եւ բարեբախտաբար գայն չէ խճողած հազար անգամ յանկերգուած վայլայններով ու զգացական տողերով: Այլ իբրեւ իրաւ պատմագիր ու պրպտումներու ձեռնարկած լրջատիր մտաւորական, անիկա իր ուշադրութեան առարկան դարձուցած է օտար աղբիւրները:

Արդարեւ, 90 թրքական թերթերէ ու աղբիւրներէ մէջբերումներ կատարած է հեղինակը: 17 ֆրանսական, 5 անգլիական, 5 յունական, 1 պարսկական: 28 օտար աղբիւրներու դիմաց 90ը՝ թրքական:

Վերջացնելու համար հարց կու տանք. Ե՞րբ պիտի վերջ գտնէ հայու Գողգոթան:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՔՍԱՆՉՈՐՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Այո՛, ՔՍԱՆՉՈՐՍԻ, այսպէ՛ս տառերով եւ ոչ թէ թուերով: Թուերն ու տառերը նոյնը չեն: Թիւը՝ թիւ է: Ամէն ինչ կարելի է թուի վերածել. ծառ, թուփ, երկիր, գործիք, նոյնիսկ ովկիանոս, աշխարհամաս, մարդիկ, - ամէն, ամէն ինչ:

Բայց ՔՍԱՆՉՈՐՍԻԸ մէկ հատ է, կրկնօրինակը չկայ: Թուով 24-ներ՝ որքան որ կ'ուզէք էլ դէպք, իրադարձութիւն, մարդկային հարիւրաւոր, հագարաւոր ծնունդներ ողջ հողագնդի վրայ:

- Իսկ ՔՍԱՆՉՈՐՍԻԸ ուրիշ է: Այդ տառաթիւը իր մէջ է ներառել մի ողջ ժողովրդի ողբերգութիւն, ցաւ, վիշտ, տանձամեակներ շարունակ եղել է կտտացող վէճք, ու՛ է...

Ասել է թէ՛ ՔՍԱՆՉՈՐՍԻԸ մէջ մեծ իմաստ կայ, մեծ խորհուրդ, եթէ կ'ուզէք՝ վերջին մէկ հարիւրամեակում ծնունդ, առաջացած երեւոյթ, որ սրբագործուել է ու դարձել աւանդույթ:

Եւ այդ աւանդույթը հաստատակամ պահելու եւ յաջորդ սերունդներին փոխանցելու համար անհրաժեշտ է, որ գիտութեան, արուեստի նուիրեալներ մշտապէս վառ պահեն այդ աւանդույթի ջահը: Իսկ ի՞նչպէս կարելի է վառ պահել այն, ի՞նչ միջոցներով:

Մեր ժողովրդի «անձիք նուիրեալք» բնական, հանրամտչելի, միջոցներով ժողովրդական լայն խաւերի մտապատկերում պիտի անջինջ պահեն ՔՍԱՆՉՈՐՍԻ խորհուրդը:

Արուեստի, գրականութեան, մանաւանդ ֆիլմարուեստի եւ երաժշտութեան ընձեռած հնարաւորութիւններով անդադրում պիտի հնչեցնել ցեղասպանութեան համազգային գանգը: Հնչեցնել մեր շնորհալի եւ տաղանդաւոր արուեստագէտների մնացուած, արժէքաւոր գործերով: Հնչեցնել համաշխարհային բեմերում, հանրապետ ցուցասրահներում ու համերգասրահներում:

Անկասկած, փաստագրական, գեղարուեստական գրականութեան ասպարէզում մեծ գործ է արուած վերջին յիսուն տարիների ընթացքում: Դրանից առաջ մեր սերունդը եւ անմիջապէս մեզնից յետոյ եկող սերունդը, եթէ չասեմ ոչինչ, ապա շատ քիչ բան գիտէր Եղեռնի, հայոց ցեղասպանութեան մասին, եւ միայն 1965-ին էր, որ Հայաստանի ժողովուրդը նոր զարթոնք ապրեց ու դրանից յետոյ, իւրաքանչիւր տարի նշում է մեր ազգի անօրինակ ողբերգութեան տարելիցը:

Ճիշդ է, որ տարիների ընթացքում մեր ցեղասպանութիւնը համաշխարհային ճանաչման արժանացնելու համար մղած պայքարը ցանկալի արդիւնք չի տուել,

սակայն դրա փոխարէն աւելացել է այդ հարցի վերաբերեալ մեր մատող սերնդի եւ երիտասարդութեան իմացական պաշարը:

Մեծ Եղեռնի յիշատակման այս օրերին ներկայ սերնդին անհրաժեշտաբար պիտի ուսուցանել, որ թրքական, այսպէս կոչուած «մշակոյթի» հեղինակները հայերն են: Երաժշտութիւն, թատերական արուեստ, ճարտարապետութիւն, տպագրութիւն, նոյնիսկ առաջին նախահորի յայտնաբերում: Այս ամէնը մենք ենք հիմնել՝ հայերս:

Յիշենք անունները այն ՄԵԾ Հայերի, որոնք եւրոպական բարձր կրթութեամբ գիտուած, մեծապէս նպաստեցին թուրքիայի Հանրապետութեան ստեղծմանն ու մշակոյթի առաջացմանը:

Այսպէս. Տիգրան Զուխաճեան, Էդգար Մանաս, Յակոբ Մարթաթեան, Պալեան եղբայրներ, Գրիգոր Սինանեան, Գալուստ Կիւլպէնկեան եւ շատ, շատ ուրիշներ:

Ինչո՞ւ եմ յիշեցնում ընթերցողներին այս ամէնը, որ վաղուց է յայտնի: Որովհետեւ՝

- Մե՛զ է յայտնի, հիմնականում որոշակի մտային պաշար ունեցող հայ մարդուն: Օտարները հազիւ թէ իմանան այս ամէնի մասին, մանաւանդ որ թուրքը հետեւողականօրէն ժխտում է այն ամէնը ինչ կապուած է հայ իրականութեան, ընդհանրապէս հայ անուան հետ:

Ուրեմն մեզ մնում է թէկուզ այսքան երկար տարիներ յետոյ էլ փորձել աշխարհին յիշեցնել, որ թուրքիայ մշակոյթը ստեղծողները հայերն են: Ասել, ապացուցել փաստերով, թէ չէ մենք գիտենք, որ թուրքը միայն գաւթել, վերցնել, թալանել գիտի, էլ չենք խօսում իր համար գրեթէ անբարձր մարդ սպանելու «արուեստի» մասին:

Հիմա էլ մի «դուրուկացաւ» է ընկել թուրք երաժիշտների շրջանում: Եւ չի բացառում, որ այսօր կամ վաղը նրանք կը փորձեն «ապացուցել», որ ԴՈՒԴՈՒԿԸ իրենց ազգային գործիքն է:

Այդ «դուրուկացաւ»ը նրանց մօտ հիմնականում սկսուեց եւ աշխուժացաւ Հայաստանի անկախացման առաջին իսկ տարիներից:

Հայաստանի տնտեսական սուղ պայմանների պատճառով մի քանի վարպետ դուրուկահարներ, աշխատեցին գտնելու մտահոգութեամբ տեղափոխուեցին Ստամպուլ:

Ես, որ հինգ անգամ եղել եմ թուրքիայում, երկու տարի անընդմէջ ամիսներ շարունակ ապրել եւ աշխատել եմ Ստամպուլում, ու եօթ համեզներ տուել, մօտիկից հետեւում էի, թէ ինչպէս էր մեր աւանդական դուրուկը հիմնաւորապէս իր տեղն էր հաստատում թուրքական տարբեր ազգային նուագախմբերի մէջ՝ շնորհիւ մեր հայ կատա-

րողների:

Եւ, որ ամէնացաւալին է, ի թիւս այլ մենակատարների անունների յայտարարմանը, հաղորդավարները զննում էին արտաբերել հայ երաժշտի անունը, թէեւ, մենակատարային բաժնի առիժի բաժինը կատարում էր հայ դուրուկահարը:

Այս առումով էլ փափաքս է, որ մեր շնորհալի, հանրապետ դուրուկահարները այդքան չ'ոգեւորուեն թուրքերին դուրուկ նուագել սովորեցնելու համար, որովհետեւ թուրքը «վարպետ» է վերցնելու, թուցնելու, խլելու:

Թող հայը դուրուկ նուագել սովորեցնի բոլոր ազգերին, բայց ոչ թուրքին, որովհետեւ նա երբէք չի ասի, որ հայն է իրեն սովորեցնելու եւ որ ԴՈՒԴՈՒԿ-ի հայրենիքը Հայաստանն է:

Արդէն քանի տարի, դուրուկը թաւազլոր ընթացքով նոր աշխարհամասեր է գրաւում:

Դուրուկի համաշխարհայնացման ընթացքը էլ աւելի նպատակային ու շարժուն դարձնելու մտահոգութիւնը ինձ դրդեց նոր միջոցներ ընտրել նրա տարածման համար:

Դուրուկը նուագախմբում օգտագործելու փորձը հիմնականում աշխուժացաւ Արա Գէորգեանի շնորհիւ: Նրանից յետոյ շատերն օգտագործել: Ծատ դէպքերում տեղին, իսկ յաճախ էլ մտղայի ետեւից ընկնելով:

Պիտի խոստովանեմ, որ ես էլ իմ մի քանի երգերի նուագախմբային ընկերացիութեան մէջ օգտագործել եմ դուրուկը:

Բայց իմ նպատակն է եղել հայ եւ օտար երաժշտասէր հասարակութեանը ցոյց տալ դուրուկի տեխնիկական (կարծեմ հայերէնում հոմանիչ բառ չկայ) հնարա-

ւորութիւնները:

Այդ նպատակի համար էլ յօրինեցի դուրուկի կոնցերտ՝ նուագախմբի հետ: Արդէն մամուլից յայտնի է, որ այդ գործը մեծ ընդունելութեան արժանացաւ Քարաքասում՝ հայ երաժշտասէրին քաջածանօթ, տաղանդաւոր երաժիշտ Օշերո իւստաչէի եւ Սիմոն Բոնիվար սիմֆոնիկ նուագախմբի կատարմամբ:

Իմ այդ յօրինումը իր տեսակի մէջ առաջինն է հայ երաժշտութեան պատմութեան մէջ, որի համաշխարհային առաջին կատարումը կայացաւ Վէնեգուէլայում:

Այդ յօրինումը իմ նուէրն է ՔՍԱՆՉՈՐՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ:

Այդ խորհրդի գանգը մշտապէս պիտի հնչի մեր հոգիներում եւ Սարդարապատի գանգերի նման պիտի չ'թողնի որեւէ մէկին, առաւել եւս մեր «հարեւան» թուրքին՝ իւրացնելու ոչ միայն մեր ինչքն ու հայրենի հողը, այլեւ նրա բարեբեր հողում մշտապէս նորանոր ծլարձակումներով բոցավառուող հայ արուեստն ու մշակոյթը:

Այդ գանգի ձայնը յաւերժ հնչեղ պահելու համար անհրաժեշտ է մշտապէս արուեստի եւ գրականութեան միջոցով նոր յայտնագործումներ անել ի շահ ՍՐԲԱՋԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ:

Բնաւ կարեւոր չէ, թէ ինչպիսին կը լինեն թուրքիայի եւ Հայաստանի «մկան-կատուի» խաղը յիշեցնող այս քաջքուկն ու դրանից ծնունդ առնելիք արդիւնքները:

Նոյնիսկ, եթէ այդ խաղի արդիւնքում մենք հասնենք մեր նպատակներին, միւսնոյն է. ՔՍԱՆՉՈՐՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ մշտապէս պիտի մնայ որպէս մեր ժողովրդի ամէնօրեայ մտահոգութիւնների առարկան:

ԶՈՒԳԱՅԵՌՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 3-էն

Ռուսիոյ, Եւրոպական Միութեան եւ ԱՄՆի արտաքին գործոց նախարարներու ստիպողութեան տակ ստորագրուած Հայաստան-Թուրքիա Արձանագրութիւնները կը ծառայէն անոնց շահադիտական նպատակներուն: Յատակ չէ՞ որ քարիւղատար եւ կազատար խողովակներու, ինչպէս նաեւ ճանապարհներու եւ երկաթուղագիծերու իրագործումը կ'ըլլայ ի վնաս մեր ազգային շահերուն: Ինչու՞ համար մեր դատը անգամի մը համար եւս խաղաքարտ դարձուցած ենք օտարներու ձեռքին: Օտարին ձեռքով թուրքին վրայ մեր պայմանները պարտադրելու անցեալի փորձերուն ձախողութիւնը դաս պէտք չէ՞ ըլլայ մեզի, որ փոխենք մեր մարտավարութիւնը: Իրաւացի չէ՞ր Հրանդ Տինք երբ կ'ըսէր թէ «Յեղասպանութեան ճանաչում պէտք չէ մուրալ. Եւրոպան քաջածանօթ է թէ հայերուն ի՞նչ պատահեցաւ Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին: Մենք մեր իրաւունքները պիտի պահանջենք Եւրոպայէն: Այն Եւրոպայէն որ մօտ 100 տարիներ առաջ ոտնակոխեց մեր իրաւունքները»: Ինչու՞ համար մեր պահանջատիրական պայքարը կը հիմնենք օտարին գալիք ակնկալութիւններու վրայ եւ ոչ թէ մեր սեպհական միջոցներու զարգաց-

ման վրայ: Սեպհական զարգացմամբ միայն կրնանք, Փարամագի բնութագրութեամբ, կրաւորական աղերսներէն անցնիլ յանդուգն պահանջի. «Կրաւորական տենչերով չէ որ հայը պիտի հասնի իր մարդավայել ապրելակերպին: Իթիհատը՝ երկիրը ծախելուն շնորհիւ, միշտ էլ շահադիտական Եւրոպայի մէջ իր բարեկամները կ'ուսնենայ, որոնք ընդունակ կը լինեն տալու միմիայն իթիհատագրմանական բարենորոգումներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ հայութեան դարաւոր կաղնին ճղաթափ անելու, օսմանցիացնելու դաւադիր նկրտումներ: Յանդուգն պահանջ եւ ոչ կրաւորական աղերս - անա մեր դիրքը»:

Սեպհական զարգացումը կը սկսի մեզմէ ամէն մէկուն սեպհական ջանադրութեամբ, բարձրացնելու ինքզինք ու իր շրջապատը: Երբ ատակ կ'ըլլանք դրսեւորելու այդպիսի կարգապահութիւն մեր ներքին (անհատական թէ ազգային) կեանքի մէջ, վերջապէս տիրացած կ'ըլլանք իրիմեան Հայրիկի պատգամած երկաթէ շերեփին, որով կրնանք արտաքին աշխարհէն կորզել մեր պահանջատիրական արդար իրաւունքները: Այլապէս Յեղասպանութեան ճանաչման գործընթացն ալ պիտի արժանանայ այն բախտին, որուն արժանացաւ Հայկական Բարենորոգումներու ծրագիրը:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայիչ քրոմոմ: Գլխացաւ, վզի, սկզբի, յօդոցի եւ մկանային ցաւեր: Ինքնուշարժի վթորի եւ տեսողութիւն պատասխան վնասումներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

95-ԱՄԵԱԿ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԶՈՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

ԴՈԿՏ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ

**Նահատակութիւններ
եւ Քանդումներ**

Իննիսուներեք տարիներ առաջ հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը Օսմանեան թուրք պետութեան ծրագրուած խլաց միլիոնաւոր կեանքերու կողքին նաեւ հազարաւոր հայ հոգեւորականներ, աւերակ եւ քար ու քանդ դարձան վանքեր ու եկեղեցիներ, որոնց մնացորդները այսօր այցելուներու աչքին կը պարզուին որպէս անուրանալի եւ մնայուն ապացոյց:

Ըստ Կ. Պոլսոյ պատրիարքութեան տուեալներուն Օսմանեան թուրքիոյ տարածքին վրայ 1914 թուականին Պատրիարքութեան ենթակայ էին 51 Առաքելական Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականներ, մէկ Պատրիարք, 42 թեմակալ եպիսկոպոսներ, առաւել վանահայրեր եւ 2000-ի համող քահանաներ, որոնք հայկական 210 վանքերու, 700 վանքապատկան եկեղեցիներու, եւ 1634 ծխական եկեղեցիներու մէջ պաշտօնի անցած էին: Կային նաեւ Սիսի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ 15 բարձրաստիճան հոգեւորականներ 214 եկեղեցիներով ու նոյնքան թիւով քահանաներ: Սոյն հաշուարկումը կարելի է տեսնել Օրմանեան Մաղաքիա Պատրիարքի Հայոց Եկեղեցին կարեւոր գիրքի վերջաւորութեան կարգաւորուած տեսակարար ցուցակէն:

Փրոֆ. Տիգրան Գուլումճեանի կատարած մէկ ուսումնասիրութեան եւս յայտնի կ'երեւի որ փաստացի օրինակներ մեզի կը հաղորդեն թէ 1915 տարուան եւ յաջորդող տարիներու ընթացքին թուրք հրետանիի միջոցաւ 30 վանքեր աւերուեցան վանի եւ Մուշի միջեւ ինկող տարածութեան վրայ: Ասոր վկայութիւնը տրուած է Նիկոլ եւ Ժան-Միշէլ Թիերիի կողմէ որոնք 1964 թուին տեղւոյն վրայ կատարած հետազօտութեան ընթացքին հայկական եկեղեցւոյ հետքն անգամ չեն գտած Մուշէն մինչեւ Պինկէօլ ինկած տարածքին վրայ:

1931 թուականին հրատարակուած Գէորգ Մետրոպի ուսումնասիրութեան մէջ, անկախաբար վերի տուեալներէն, զուգահեռաբար եւ ոչ որպէս յաւելեալ տեղեկութիւն, նշուած է որ Հայ Մեծ Եղեռնի եօթը տարիներուն 1036 հայ եկեղեցիներ եւ վանքեր ամբողջովին քանդուած են, ու 691 կրօնական շէնքեր, Արմաշի վանքը ներառեալ, մասնակիօրէն աւերուած են: Աւերուած են ծրագրեալ

հրանօթային կրակով հետեւեալ պատմական վանքերը: Տեկորի եկեղեցին (4րդ եւ 5րդ դար), Խժկոնքի վանքը (11րդ դար), Անիի Ս. Աստուածածին եկեղեցին (13րդ դար), Բագարանի եկեղեցին (7րդ դար), Առաքելոց եկեղեցին (14րդ դար), եւ անշուշտ նաեւ Անիի բազմաթիւ եկեղեցիները՝ Աբուղամբէնց Ս. Գրիգոր եկեղեցին (10րդ դար) եւ մնացեալ բոլորը, ոմանք երկրաշարժի փորձանքով եւ ուրիշներ լքեալ վիճակի մատնուած ըլլալով:

Բազրատունեաց մայրաքաղաք Անին այսօր մեր աչքին առջեւ փռուած է որպէս «Լուսնական Գերեզմանաց Հայոց», ինչպէս պիտի ըսէր Հայր Դեռնդ Ալիշան:

Հայ եկեղեցիներ, ցաօք, վերածուեցան մզկիթներու, ցորենի պահեստանոցներու եւ գոմերու: Կարկառուն օրինակ մըն է Կարսի Առաքելոց եկեղեցին, կառուցուած Կարսի Աբաս Բագրատունի հայոց թագաւորին կողմէ 10րդ դարուն, որ կը մնայ կանգուն եւ սակայն վերածուած է մզկիթի: Արդուինի եկեղեցին՝ վերածուած է բանտի, Ուրֆայի շրջանի եկեղեցիներէն մին՝ մզկիթի, Վարազայ վանքը՝ անսանաբուժարանի, Այնթապի Ս. Աստուածածին եւ Էվէրէկի Ս. Թորոս եկեղեցիները, ուրիշ շատերու կարգին՝ մզկիթի: Կանգուն մնացած է Աղթամարի նշանաւոր Ս. Խաչ եկեղեցին որ վերջերս թուրք պետութեան կողմէ վերանորոգուեցաւ որպէս թանգարան, արգիլելով գալն պաշտամունքի ու չվերականգնելով գմբէթի նախկին հայ եկեղեցւոյ խաչը: «Խաչը հոն չէր երբ նորոգութեան սկսանք: Կը թողուք ինչպէս որ էր», ըսին թուրքերը անամօթաբար:

**Զաւեն Պատրիարքի
Տեղեկութիւնները**

Կ. Պոլսոյ օրուան Պատրիարք Զաւեն Արքեպս. Տ. Եղիայեանի տուեալներով միայն Հայ Առաքելական Եկեղեցիէն 4000 հոգեւորականներ զոհ գացին ցեղասպանութեան, առաւել եւս հարիւրաւոր Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցականներ որոնք բոլորն ալ հաւասարապէս դասուեցան նահատակ հոգեւորականներու շարքին: Պատրիարքը իր առաջին՝ 1915 Յուլիս 13 թուակիր նամակով հետեւեալը կը գրէր Պուլկարիոյ թեմի առաջնորդ Դեռնդ Եպս. Դուրեանին:

Շապին Գարահիսարի առաջնորդ Վաղինակ Վրդ. Թորիկեան եւ Զարսանճաքի առաջնորդ Գէորգ Վրդ. Նալպանտեան պատերազմական ատենի վճիռով բանտարկուեցան: Նաեւ Տիգրանակեր-

տի տեղապահ Մկրտիչ Վրդ. Զլղատեան բանտին մէջ ծեծի եւ կրակի բռցրուած մէջ հոգին աւանդեց: Պատրիարքի յաջորդ նամակներէն կը տեղեկացուէր որ 1915ի Սեպտեմբերին սոսկալի ջարդ մը կը կատարուէր Էնկիւրիի (Անգարա) մէջ, ուր 500 այր մարդիկ ջարդուած են, մէջն ըլլալով Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդի փոխանորդ Թէոդորոս վարդապետն ու Հայ Կաթողիկէ 10 քահանաներ:

Պատրիարքը կը հաղորդէր նաեւ Բաղէշի երիտասարդ արմաշական առաջնորդ Սուրէն Մ. Վրդ. Գալէմեանի մասին, որ 1400 տուն հայերու հետ միասին նահատակուած է: Մուշէն ստացուած տեղեկութիւններէն պատրիարքարանի միջոցաւ հաստատուած է քաղաքի 6500 տուն հայերու նահատակութիւնը, ներառեալ Մշոյ Սուլթան Ս. Կարապետ վանքի վանահայրը՝ Վարդան Մ. Վրդ. Յակոբեան 400 աշակերտներով, Առաքելոց վանքի վանահայր՝ Յովհաննէս վարդապետ իր 40 միաբաններով եւ 200 աշակերտներով, բոլորն ալ նահատակուած Մուշի մէջ: Հոն նահատակուած է նաեւ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Գերապոսյան Թօփալեան Արքեպիսկոպոսը:

Նոյն նամակով Զաւեն Պատրիարքը կը գրէր Կարինի մէջ նահատակուած հոգեւորականներու մասին: Հինգերորդ կարաւանը ճամբայ հանուած է 1915 Յուլիսի 18-ին, 600-700 հոգիներով, մէջն ըլլալով Կարնոյ թեմի առաջնորդ Սմբատ Եպս. Սաստիթեան, «որ իբր թէ Կ. Պոլիս պիտի զրկուէր եւ այդ նպատակով ճամբորդութեան արտօնագիր ալ տրուած էր»: Սմբատ եպիսկոպոս երբ բացատրութիւն պահանջած է անակնկալ եւ մտահոգիչ տեղահանութեանց մասին, կուսակալ Թահսին Պէյ կեղծաւորութեամբ ըսած է թէ «Հայերը պիտի զրկուին այնպիսի ապահով տեղ մը, ուր ժողովուրդը չի կրնար գէշութիւն ընել հայերուն»:

**Արմաշի Հոգեւորական
Նահատակները**

Հայ հոգեւորականներ, գլխաւորութեամբ Արմաշի Դպրեվանքի ընտիր ներկայացուցիչներուն, անուններով ու թեմերու անուններով յայտնի, իրենց պաշտօնին վրայ նահատակուեցան ճշդուած վայրերով եւ թուականներով: Յիշելով գլխաւորները միայն, առանց դատաստանի եւ սուտ գրաբարութեամբ անագորոցն հաշուի ենթարկուեցան Կարնոյ առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սաստիթեան, Կեսարիոյ առաջնորդ Խոսրով եպիսկոպոս Պէհրիկեան, Խարբեր-

դի, Սեբաստիոյ, Արաբկիրի, Տրապիզոնի, Եւզոկիոյ, եւ այլ թեմական շրջաններու արմաշական հոգեւոր առաջնորդներ՝ Պարգե Մ. Վրդ. Դանիէլեան, Շաւարշ Մ. Վրդ. Սահակեան, Պսակ Մ. Վրդ. Տէր Խորէնեան, Արտաւազդ Վրդ. Գալէմեան, Սուրէն Մ. Վրդ. Գալէմեան, Գեղամ Վրդ. Թէվէթէլեան, Գէորգ Մ. Վրդ. Թուրեան, Մկրտիչ Վրդ. Զլղատեան, որոնք բոլորն ալ իրենց պաշտօնին վրայ նահատակուեցան:

**Նուիրապետական Աթոռները
Զոհ Յեղասպանութեան**

Երբ կը գրենք Հայ հոգեւորականներու մեծագոյն փաղանգի նահատակութեանց մասին, անպայման կը չիշենք նաեւ Նուիրապետական Աթոռներէն երկուքը՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու Սիսի Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Երկուքն ալ Օսմանեան թուրք պետութեան հրահանգով կազմալուծուեցան իրենց զահակալներու եւ միաբաններու արտաքսումով:

Կ. Պոլսոյ հայոց Պատրիարք Զաւեն Արքեպս. Տ. Եղիայեանի հրահանգուեցաւ թողուլ իր պաշտօնը ու վերադառնալ իր ծննդավայրը՝ Պաղտատ: Պատրիարքը հիասթափ ու մտահոգ բռնեց գաղթի ճամբան, շոգեկառքի անկանոն գնացքով հասաւ Պաղտատ, ճամբան տեսնելով հայոց գողգոթան: Ապահով եւ տակաւին պատրիարքական պաշտօնը վրան, բանի որ կ'ըսէր թէ ինք «հրաժարած չէր, եւ որքան ատեն որ նոր պատրիարք մը չէր ընտրուած, ինք օրինաւոր պետն էր թրքահայոց»:

Այդպէս ալ եղաւ, երկու տարի Պատղաղ մնալէն ետք, քաղաքական նպաստաւոր կացութեան ներքեւ անդիւրացիք գինք ետ ուղարկեցին Կ. Պոլիս որպէս Պատրիարք Հայոց:

Աւելի դժխեմ եղան պարագաները Սիսի Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ Սահակ Բ Խապայեան Հայրապետին, որ իր միաբաններով թողուց մայրավանքը միանգամ ընդմիշտ ու հեռացաւ որպէս Կաթողիկոս-Պատրիարք Երուսաղէմի, իր վրայ պարտադրաբար առնելով հայ եկեղեցւոյ բոլորովին հակակառնական եւ ծիծաղելի շինծու այդ պաշտօնը, գոր երկու տարի կրեց ու անգամ մը եւս աքսորուեցաւ Երուսաղէմէն Հալէպ: Տասնամեակ մը ետք ծերունի Կաթողիկոսը կարողացաւ երուսաղիմապատկան տեսչութիւններէն երեքը ստանալ որպէս իր տարազրեալ թեմին նոր համայնքները՝ գիտութեամբ Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսին:

AUTHORIZED INDEPENDENT AGENT

Anthem  **Blue Cross**

BEDROS S. MARONIAN
818-500-9585

CA LIC.#0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205

ԵՐՔԵՔ ՈՒՅ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԹՈՒՐՔ ԻՇԽԱՆԱԴՈՐՆԵՐ, ԵԿԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԸ ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Հայ ժողովրդի պահանջատիրութեան պայքարը յանուն ցեղասպանութեան ճանաչման առումով տարւէ - տարի աւելի թափ է ստանում նոր պետութիւնների գորակցութեամբ, սա ապացոյցն է մեր ժողովրդի հետեւողականութեան, մեր դատի արդարացիութեան, որը ժխտում է թուրք իշխանաւորների կողմից որպէս հերիւրանք, յորինւած պատմութիւն: Այսինքն այն բոլոր երկրները, որոնք պետականօրէն ցեղասպանութիւնը քննարկել, ճանաչել եւ հաստատել են, այն էլ յիշեալ երկրների ազգային խորհրդարանները կազմւած երկրի ընտրանի այրերից՝ մտաւորական բարձր խաւը, առանց տեղեակ լինելու պատմութեան եւ հոլոթեան ճշմարտացիութեան են վաւերացրել: Ո՛չ, թուրք իշխանաւորներ, դո՛ւք կեղծում էք, ինչպէս ողջ անցեալում էք կեղծել ու խաբել, դրանք սին ինքնապաշտպանութեան խարխափումներ են ձեզ արդարացնելու համար: Շատ պարզ է՝ ոճրագործը տարբեր միջոցներով ջանանում է իր մեղքը քողարկել, կոծկել: Բայց թուրք իշխանաւորներ, լա՛ւ իմացէք, որ ձեր կեղծիքները բացայայտւել են, դուք ծուղակի մէջ էք յայտնւել, հարցը որքան շատ ձգձգէք, այնքան աւելի շատ էք մխրճւելու ճահիճի մէջ:

Մինչեւ ե՞րբ թուրք իշխանաւորներ, հայ ժողովրդին պատճառած ձեր սարսափազդու մարդկային, հոգեկան եւ նիւթական վնասները պիտի ուրանաք, մերժէք ու չեղեցաւ յայտարարէք, մինչեւ ե՞րբ չքմեղանքի աղէտալեզու խօսքերով պիտի ջանաք միջազգային հանրութիւնը խափել, մինչեւ ե՞րբ պիտի ստէք՝ հայերին ապահով վայրեր տեղափոխելն քերձ մնալու պատերազմական գոտիների աղէտներից, էն էլ ով, թուրք իշխանաւորը հայի ապահովութեան համար մտածի՞, երանի այդպէս լինէր եւ նկատի առած լինէիք մեր Արեւմտահայաստանի ազգաբնակչութեան դոյզն իսկ ծառայութիւնները թուրքից եւ թուրք ժողովրդի գարգացման համար: Ձեր ողջ պատմութիւնը ցոյց է տւել, թէ ինչ նողկալի բարբարոսային վերաբերմունք էք ունեցել շինարար եւ հաւատարիմ հայ ժողովրդի նկատմամբ, ձեզ համար հաւատարմօէրն կռող հայ զինուորներին գաղտնի թունաւոր սրսկումներով սպանել էք, երիտասարդ աղջիկներին բռնաբարելով տանջամահ էք արել, երեխաներին ծնողներից խլելով թրքացրել էք, իսկ ծերահասակներին անապատների չոր ու տատակ բնութեան մէջ սովամահ արել կամ կենդանաբար նրանց յօշոտել էք:

Ինչպէս հաւատանք, որ մեր հայերին օգնել էք, դուք անասուածներ, սաղայէլի ծնունդներ:

Այնքան մտածւած ու ծրագրւած էր ջարդը, որ դուք նախ ծածուկ ու գաղտնի ձերբակալեցիք 600-ից աւելի մեր գրողներին, մտաւորականներին եւ ղեկավարներին, մի ազգի գլխաւոր սերունդը, առանձնացնելով նրանց հեռաւոր անապատներում գլուխները ջախջախեցիք, որպէսզի անդեկավար ժողովրդին աւելի դիւրաւ տանէք ու կոտորէք: Թուրք իշխանաւորներ լա՛ւ իմացէք, որ մեր նահատակներին երբեք չենք մոռանալ, նրանք ձեր մտքի, հոգու եւ ձեռքի վայրագութեան եղեռնագործութիւնն են: Մեր նահատակները հանապազօրեայ մեր ապրողաց գոյութեան ներշնչարանն են: Նրանց յիշատակն ենք ոգեկոչում, ինչպէս մեր գրող եւ մտաւորական գործիչներ յիշատակն ենք ոգեկոչում: Ապրիլեան նահատակների նախորդ օրը Ապրիլ 23-ի երեկոյեան, Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութիւնը այս առիթով ծաղկեմատոյցի միջոցառում է կազմակերպում:

Թող թուրքից իշխանաւորները լաւ իմանան, որ որքան իրենք հակառակեն, ճշմարտութիւնը ինքնաթիւրէլ եւ ուրանալ, 1.5 միլիոն նահատակների արիւնը անտեսել, առաւել եւս հայ ժողովրդի պայքարը կը սաստկանայ, հայութիւնը իր դատից չի հրաժարւի:

Անցեալ տարիներում սփիւռքահայութիւնը առանձնաբար էր դատը հետապնդում, այսօր Հայաստան եւ Սփիւռք միասին են, մէկ բռունցք են, որը ձեր վրդովմունքնի պատճառն է դարձել, այսօր սաղաքներով միասնականութիւնը քայքայել էք ուզում, սեպ խրել, բայց լաւ իմացէք ձեր բռնները բացել են, ստութեան պատերը չքացել եւ բացայայտւել են: Ի յիշեցում ձեզ որ Ապրիլեան եղեռնագործումը դարձել է ազգովին իւրաքանչիւր հայի առօրեայ խնդիրը,

Թուրքերը հայերին կոտորեցին, որովհետեւ քրիստոնէայ էին, հայերին պապենական հողերից տեղահանեցին եւ գազանաբար յօշոտեցին, որովհետեւ ծաւալապաշտական նպատակներ ունէին՝ պանթուրքիստական կայսրութիւնը վերականգնելու նկրտումներ:

Ոչ թէ միայն հայ աշխարհն է ոգեկոչում եղեռնը, այլ միջազգային հանրութեան շատ երկրներ: Հայոց եղեռնը անմոռանալի է, հայոց դատը անժամանցանալի է, քանի հայը կայ, իր դատն էլ կայ եւ մինչեւ վերջնական յաղթութիւն պայքարը շարունակւելու է աննահանջ: Այս ազգային պահանջատիրութեան հարցում բոլոր հա-

յերը մեծից փոքր միաբերան ու միակամ են մինչեւ թուրքի կողմից ցեղասպանութեան ընդունումը եւ դատապարտումը, քանի որ սա մեր բիւրաւոր նահատակների արեան կանչն է թելադրում, նրանց հոգիները խաղաղ եւ հանգիստ չեն գտնի մինչեւ իրենց նկատմամբ գազանային արարքները չդատապարտւեն:

Ապրիլեան օրերին՝ Ապրիլը մեր բոլոր հայերի տունն է մտնում, սակայն ասում են՝ Հայ Դատի յանձնախմբերի տանը տարին բոլոր Ապրիլ է, ծրագրաւորումներ են կատարում եւ հետեւողականութեամբ աշխատանք տանում: Ապրիլը բոլորին միացնում է, բոլորին յիշեցնում է իրենց պարտքը նահատակների եւ բռնագրաււած հայրենի հողերի նկատմամբ, բոլորին հրաւիրում է ոգեկոչումներին մասնակցել լինել, իրենց ձայնը միացնելով բողոքարկող ձայներին, պայքարող կռուներին, դառնալով յախուռն հեղեղ: Այսպէս թող որ մեր ռահվիրաները՝ Հայաստան եւ Սփիւռք աւելի յանդուգն ու կազմակերպւած ու ծրագրաւորւած առաջ տանեն պայքարը, հեռու չի այն օրը, որ թուրքը հաշւի կը նստի հայ ժողովրդի հետ, արդէն իսկ թուրք ժողովրդի միջից ձայներ են բարձրանում, դատապարտումի կոչեր են հնչում թուրքից մէջլիսում, մտաւորականներ գրքեր են գրում եւ դիմումներ են կատարում իրենց թուրք պետութեան ճանաչել հայերի ցեղասպանութիւնը եւ վերականգնել արդարութիւնը: Ամէն Ապրիլին աչքիս առջեւն է գալիս թեհարանում 1979 թւականին յաջորդող տարիների բիւրաւոր նահատակների յիշատակման արարողութեանց եւ քայլարշաւների անցուդարձը, թէ ինչպէս ժողովուրդը իրենց մարմնով մասնակցում էր բողոքի քայլարշաւներին պահանջելով արդարութիւն:

Մեր իրանահայ գաղութը եղեռնի յիստնամեակի ոգեկոչումից այս կողմ առաւել աշխուժացաւ Բիւրաւոր Նահատակների յիշատակման պահանջատիրութեան պայքարի մէջ: Զարդի օրերին մեր գիւղաբնակ ժողովուրդը կոտորածից հեռու եւ անտեղեակ, միայն

տեղեկացւել է հատ ու կենտ մագապուրծ ողջ մնացած խլեակներից մեր գիւղերում ապաստանելով, նրանցից են լուր ստացել սարսափելի ջարդերի ու կոտորածների մասին, այնուհետեւ գիւղերից դէպի քաղաք քոչելով հետզհետէ Ապրիլեան Նահատակների յիշատակի ոգեկոչումը խորացել եւ կեանքի պայքարի անբաժան մասնիկն է դարձել՝ այսօր իր եռանդուն մասնակցութիւնը բերելով ոգեկոչման ծրագրերին եւ ձեռնարկներին:

Թող թուրք իշխանաւորները ականջները ուշադիր լսեն, որ մենք հայերս հրաժարուելու չենք մեր պահանջատիրութիւնից, 95 տարի է անցնում ցեղասպանութիւնից 195 տարի էլ անցնի մեր զաւակները շարունակելու են դատը մինչեւ վերջնական արդարութեան յաղթանակը:

Մեր պայքարի եւ աշխատանքների հանրագումարը համեմատելով նախկին տարիների հետ տեսնում ենք, որ մենք այսօր աւելի կազմակերպւած ենք եւ աւելի միահամուռ կեցւածք ունենք մեր դատի եւ ցեղասպանութեան հարցի ճանաչեցման միասնական ճակատով, այսպէս շարունակման անհրաժեշտութիւնը մեզ մղում է դէպի մեր նպատակների իրականացում: Այս ճանապարհը որ մենք գնում ենք, երբեք նահանջ չի սիրում, անմիաբանութիւն, հատուծապաշտութիւն եւ անհանդուրժողականութիւն չի սիրում, այո՛, մէկ ճակատով, մէկ նպատակով, մէկ հայութեամբ դէպի նահատակների կտակի իրականացում եւ բոլոր երկրների նաեւ ոչ քրիստոնէայ երկրների ընդգրկումը ցեղասպանութեան ճանաչման գործում:

Հայերի պահանջը արդարութեան վերականգնումն է, որպէսզի հայ եւ թուրք ժողովուրդները բարի դրացիական յարաբերութիւններով տարածաշրջանում խաղաղ ու անդորր կեանք ապրեն իրար օգտակար ու իրար նեցուկ: Արդեօ՞ք իրականանալու բան է սա, թուրքն իր թրքութիւնից ձեռք կը քաշի՞, ինքն է իմանում, մենք մեր իրաւունքներն ենք պահանջում եւ առանց վհատուելու առաջ ենք գնում:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Avenue
 Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
 Դետաքրքրուողներէ՛ն հեռաձայնել՝
 (626) 398-0506

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԱՐԿՈՒՄ ԵՆ ...

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Բազմաթիվ երկրներ, ելնելով իրենց քաղաքական ու տնտեսական շահերից, շահարկում են Հայերի ցեղասպանությունը: Դրա ամենացատուն փաստը Ամերիկայի ու Թուրքիայի յարաբերությունների պարզաբանումն է իւրաքանչիւր Ապրիլի 24-ին:

Վերջին տարիների իրադարձությունները, որոնք առնչուեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ֆուտպոլային քաղաքականությունն հետ և 2009 թ. Օգոստոսի 31-ին ցիւրիխեան արձանագրությունների ստորագրումով, մեծ հետաքրքրություն առաջացրին միջազգային լրատուամիջոցներում, որոնք սկսեցին բազմակողմանի քննարկման ենթարկել զերպետությունների ճնշման տակ ստեղծուած այդ փաստաթուղթը:

Փաղտնիք է, որ այսօր աշխարհի վտանգաւոր թե՛ կէտերից մէկը, եթէ ոչ ամենաթե՛ժը, հանդիսանում է Հարաւային Կովկասը, աւելի ճիշտ Արցախը՝ արցախեան չլուծուող համակամարտութեան պատճառով:

Փաղտնիք է նաեւ, որ գերպետութիւնները զուրկ են բարոյականութիւնից և իրենց «բարոյականութիւնը» տարբեր գործարքների շնորհիւ գրպանների շահերն են, ինչպէս Ատրպէյճանի նաւթի ու գազի շահագործումը, որոնց համար ծախսել են միլիարդաւոր տոլարներ: Այդ հողի վրայ նրանք գերադասում են ամրացնել յարաբերութիւնները Ատրպէյճանի հետ, ընդունելով նրա տարածքային ամբողջականութիւնը, որպէսզի կարողանան իրենց շահոյթներն ապահովել, լաւ իմանալով հանդերձ, որ Արցախը հայերի բնօրրանն է: Ուստի նրանց կողմից ճնշումը աւելի է մեծանում Հայաստանի վրայ Արցախի հարցի շուտափոյթ լուծման համար:

Արձանագրութիւններում չնդգրկուած Արցախի հարցը բարդութիւններ առաջացրեց Թուրքիայի խորհրդարանում արձանագրութիւնները վաւերացնելու հարցում, քանի որ Թուրքիան խոստացել էր Ատրպէյճանին չվաւերացնել այն մինչեւ Արցախի հարցը չլուծուի յօգուտ Ատրպէյճանի: Արձանագրութիւններում չէր ընդգրկուած նաեւ ստեղծուելիք յանձնարարքի միջոցով քննարկել Հայերի ցեղասպանութեան հարցը: Նրա պարտականութեանը պէտք է լինէր Հայերի ցեղասպանութեան հետեւանքների քննարկումը:

Չնայած ֆուտպոլային քաղաքականութիւնը սկսելու նախօրեակին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի յայտարարութեանը, թէ անհրաժեշտութեան դէպքում նոյնիսկ Հայերի ցեղասպանութեան հարցը կը քննարկուի, յետագայում ենթարկուելով հայ ժողովրդի ճնշմանը, նա սթափուեց եւ ուղղեց իր սխալը, յայտարարելով, որ Հայերի ցեղասպանութիւնը փաստական իրողութիւն է: Բայց հարցն արդէն մեծ աղմուկ էր բարձրացրել միջազգային ասպարէզում և միջազգային հանրութեան կողմից Հայերի ցեղասպանութեան ճանաչումը հարցականի տակ էր դրուած անորոշ ժամանակով:

Հետագայում իրադարձութիւնները զարգացան այլ ուղղութեամբ եւ այս հարցում որոշ տեղաշարժ նկատուեց, երբ ԱՄՆ-ում տեղի ունեցան ուշադրաւ դէպքեր.

1. Սոյն թուի Փետրուարի 28-ին CBS-ի 60 րոպէ (60 minutes) յայտագրի 12 րոպէն յատկացուած էր Հայերի ցեղասպանութեանը, որի ընթացքում նրա յայտնի թղթակից Բոբ Սայմընը ցոյց տուեց Տէր Զօրի անապատից ամերիկահայ պատմաբան Փիթըր Պալաքեանի հետ հանած հայ գոհերի ոսկորները եւ շեշտեց, որ 1915 թ. Թուրքերի կողմից մէկ միլիոն հայերի բռնազաղթն ու սպանողը հայերը որակում են որպէս իրենց ազգի Հոլոքոստը: Թուրքիան բողոքող միջոցներով բողոքեց այս հարցում իրենց դէմ CBS-ի ստուգիչան ողողելով գայրալից նամակներով: Սա լուրջ հարց դրեց նախագահ Սերժ Սարգսյանի յայտարարութիւնից ու արձանագրութիւնների ստորագրումից յետոյ, որը դիտեց ամբողջ աշխարհը:

2. Հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւս աշխուժացաւ որոշ չափով, երբ Թուրքիայի համար անսպասելիօրէն մի քանի պետութիւնների խորհրդարաններում սկսեցին քննարկել այն: ԱՄՆ-ի Գոնկրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովը սոյն թուի Մարտի 4-ին 23-22 ձայների յարաբերութեամբ ընդունեց Օսմանեան Թուրքիայում իրականացուած Հայերի ցեղասպանութիւնը դատապարտող թիւ 252 բանաձեւը: Ինչպէս 2000, 2005, 2007 թթ. սոյն յանձնաժողովն ընդունել էր նման բովանդակութեամբ բանաձեւ, որը չէր հասել Գոնկրեսի լիազումար նիստին, այնպէս էլ այս անգամ Սպիտակ Տան ղեկավարները յայտարարեցին, որ ընդունուած բանաձեւի նախագիծը ԱՄՆ-ի Գոնկրեսի գլխաւոր խորհրդի օրակարգ չի մտնի (Թուրքիային սիրաշահելու համար):

Մարտի 11-ին Շուեդիայի խորհրդարանը 131-130 ձայների յարաբերութեամբ ճանաչեց 1915 թ. Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայերի ցեղասպանութեան բանաձեւը:

Մեծ Բրիտանիայի Խորհրդարանի պատգամաւոր Քարոլայն Քոքսի նախաձեռնութեամբ սոյն թուի Մարտի 29-ին եղան քննարկումներ 1915 թ. Հայերի ցեղասպանութեան վերաբերեալ, բայց նոյն ժամանակ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրտողանի Լոնտոն կատարած այցի ընթացքում Արդարադատութեան նախարար ձէք Ստրոնը նրան խոստացաւ, որ Հայերի ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւը չի առաջադրուի քուէարկութեան:

Սպանիայի 350 մթոռ ունեցող խորհրդարանում 5-6 պատգամաւորներ նոյնպէս փորձում են Հայերի ցեղասպանութիւնը քննարկման ներկայացնել: Սպանիայի Կատալոնիա նահանգի խորհրդարանը արդէն ճանաչել է Հայերի ցեղասպանութիւնը:

Թուրքիայի խորհրդարանի

Շար.ը էջ 30

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԵՏՆՈՐԴՆԵՐԻ ՊԱՐԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ

ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՀԳԱԱ ԱՎԱԴԻՄԻԿՈՍ

Հայոց Ցեղասպանութեան 95-ամեակին նուիրուած բազմաբնոյթ ձեռնարկների գլխաւոր կարգախօսը «Ճանաչել 1915 թ. Թուրքերի կողմից հայերի նկատմամբ կատարած ցեղասպանութիւնը» յետագայում նմանատիպ ոճիւրները բացառելու նպատակով», հասցեագրուած աշխարհի հզօրներին եւ առաջին հերթին, Թուրքիային դժբախտաբար մնում է դեռեւս չիրագործուած վերջինիս ստեղծած, առայժմ անյաղթահարելի արգելքների եւ դժուարութիւնների պատճառով: Պատասխանատուութիւնից խուսափելու նպատակով Թուրքիայում փորձում են ցեղասպանի եւ անմեղ գոհի դերերը փոխել, որը ոչ պակաս ծանր յանցագործութիւն է, քան բուն ցեղասպանութիւնը: Վերջինիս ուրացման դէմ տարբեր երկրների եւ ազգութիւնների, ներառեալ նաեւ Թուրք պատմաբանների, ցեղասպանագէտների, դիւանագէտների եւ այլ քաղաքական գործիչների ու գործընկերի պայքարը շարունակուած է, նշանաւորուելով պայքարի նոր մեթոտների մշակմամբ, առաւել արդիւնաւէտ մարտավարութեան որդեգրմամբ, նոր, այսպէս կոչուած, ՉախՉախի, անվիճելի փաստարկումների (compelling evidence) ի յայտ բերմամբ: Տարբեր պետութիւնների, քաղաքների, նահանգների խորհրդարաններ իրենց որոշումներով անցած դարակգբին հայերի գանգուածային սպանութիւնները ճանաչել են որպէս ցեղասպանութիւն, իսկ որոշ երկրներ ցեղասպանութիւն այդ ակնյայտ իրողութիւնը օգտագործում են Թուրքիային որոշ խնդիրներ պարտադրելու, իրենց ենթարկելու համար: Ուրիշ խօսքով 1915 թ. Հայոց Ցեղասպանութիւն ճանաչել չճանաչելը աստիճանաբար հզօրացող լծակի դեր է ձեռք բերում: Կարեւոր հանգամանք, որից պէտք է օգտուինք մենք՝ անմեղ գոհերի իրաւաջողորներս: Այսօր ժամանակավրէպ պէտք է համարել Ցեղասպանութեան ճանաչումը միայն բարոյական ակտ համարելը:

Իտալիայի մայրաքաղաք Հռոմի քաղաքային խորհրդի որոշմամբ 1915 թ. Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը ՀՀ-ն դեսպանը «բարոյական մեծ արժէք ունեցող պատմական իրադարձութիւն» համարեց, միաժամանակ նշելով, որ «Թուրք ժողովրդի վրայ յանցանք չի բարդուած»: Աւելին, նա այն միտքը յայտնեց որ «Ցեղասպանութեան ճանաչումը Թուրքերի համար աւելի կարեւոր է, քան հայերի համար: Ի հարկէ, այդպիսի անհատոց ճանաչումը, եթէ այն նոյնիսկ կատարուի Թուրքիայի կողմից, մեզ հայերիս ոչինչ չտուող, անօգուտ որոշում կը լինի: Մինչդեռ այն ըստ մեր դիւանագէտի, անհրաժեշտ է Թուրքիային Եւրոպական քաղաքակիրթ աշխարհ ոտք դնելու համար, ինչին նա տարիներ շարունակ ձգտում է: Թւում է, թէ ժամանակն է, որ մենք հասկանանք, որ առանց վնասների հատուցման եւ առարածքների, հողերի վերադարձման պահանջների մեր պայքարը այսօր այլեւս անիմաստ է: Թուրքիայի «Ա. Աշխարհամարտի գինակիցներ, Աւստրիայի եւ Գերմանիայի պետական արխիւների, ինչպէս նաեւ Թուրքիայի Խորհրդարանի պաշտօնական օրգան «Թաքվիմի Վեքայի» յաւելուածում տպագրուած նիւթերը, որոնք 1918 թ. վերջին 3 ամիսներին խորհրդարանում հայոց Ցեղասպանութեան մասին թուրք երեսփոխանների ու նախարարների խոստովանութիւններն են, հաստատում են, անվիճելի դարձնում ցեղասպանութիւնն իրագործուած լինելու փաստը: Այն կարեւոր հանգամանք է Թուրքիայի ներկայի իշխանութիւնների յանցաւոր պահուածքը ցուցադրելու համար:

Տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման առիթներով ՀՀ համապատասխան դիւանագէտներն իրենց ելույթներում ընդգծում են դրանց բարոյական նշանակութիւնը, լուրթեան մատնելով վնասների հատուցման հարցը, այդպիսով իսկ, կարծես թէ փորձելով թեթեւացնել այդ ճանաչման ակտից բխող հնարաւոր գործնական քայլերի ծանրութիւնը Թուրքիայի վրայ: Ցեղասպանութեան վնասների հատուցման հարցը նոյնիսկ լուրթեան մատնելը մեծ սխալ է, մանկամտութիւն է կարծել թէ դրանով թեթեւացնում են Թուրքիայի կողմից Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը: Աւելին, նշանակում է՝ հրաժարուել օրէնքներով ցեղասպանութեան համար նախատեսուած սանկցիաների կիրառումից, որը հիասթափեցնում է Ցեղասպանութիւնը ինչպէս արդէն ճանաչած, այնպէս էլ ճանաչել ցանկացող, նոյնիսկ չցանկացող պետութիւններին, այն ծառայում է Թուրքիայի շահերին:

Համիտեան բռնակալութեան տարիներին տնտեսական բազմաբնոյթ ճնշումները գոլգոլեղում էին ազգայնամոլ քաղաքականութեամբ, ազգային հողի վրայ տեղի ունեցող խժոժութիւններով, քաղաքական հալածանքներով եւ հետապնդումներով: 1877-1878 թթ. ռուս-թրքական պատերազմի արդիւնքում միջազգային դիւանագիտութեան հարց դարձաւ Հայկական հարցը, որ մեծ տէրութիւններին թուրքիայի ներքին գործերին միջամտելու, դիւանագիտական եւ քաղաքական ճնշման բազմաթիւ նարաւորութիւններ էր ընձեռում: Բարենորոգումներ անցկացնելու ծրագրերը թուրք կառավարող վերնախաւը ընկալեց ոչ միայն որպէս Եւրոպայի կողմից իր ներքին գործերին միջամտելու միջոց, այլեւ Ռուսաստանի ազդեցութեան տարածում, որը յղի էր լուրջ վտանգներով: Իրենց հերթին, հայկական բարենորոգումների ծրագրի իրականացման տակ մեծ տէրութիւններն առաջին հերթին հասկանում էին ռազմավարական հսկայական նշանակութիւն ունեցող տարածքում իրենց տնտեսական եւ քաղաքական ազդեցութեան ընդդրանումը ապա նաեւ, խաղաղով հայ ժողովրդի ազատագրական իրողութեան, որպէս թուրքիայի ցանկալի մասնատում:

1880-ական թթ. վերջերին եւ 1890-ական թթ. սկզբներին ջար-

դերի սպառնալիքն առկայ էր Արեւմտեան Հայաստանում, Կիլիկիայում եւ կայսրութեան հայաբնակ շրջաններում: Այսպէս, դեռեւս 1888 թ., իշխանութիւնների դրդմամբ յարձակման էր ենթարկուել Մարաշից հարաւ գտնուող գուտ հայաբնակ Փրնտըճագ գիւղը, բայց հայ երիտասարդներին ջարդողութեւլ էր ոչ միայն հետ մղել թշնամու, այլեւ գերել մօտ 40 թուրքերի:

Արդէն 1890-ական թթ. սկզբներին սուլթանական կառավարութիւնը ամենայն մանրամասնութեամբ մշակել էր ջարդերի քստմնելի ծրագիրը՝ համապատասխան յանձնարարականներ յղելով տեղական իշխանութիւններին: Մասնակի ջարդերը, որոնք սկսուել էին 1890 թ. Կարինի յայտնի դէպքերով, սաստկանալով՝ հանգեցրին «գոլումի» ժամանակաշրջանին: Ոտքի հանուեցին թուրք մոլեռանդ խառնամբոխը, քրտական ցեղերը, ոստիկանական ուժերը, բանակային կանտնաւոր զօրամասերը:

Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի՝ 1890-ական թթ. կոտորածները եւ Կիլիկիոյ 1909 թ. ջարդերը Մեծ եղեռնից առաջ գլխաւոր փորձերն էին՝ մեխանիզմների ընտրութեան, ճշգրտման, մշակման եւ կիրառման առումով: Խիստ կարեւորում էր հայոց ազատամարտի միջնաբերդերի՝ Սասունի, Վանի, Զէյթունի, լեռնային այլ բնակավայրերի մեկուսացումը եւ կոտորածը, քանզի թրքական իշխանութիւններն իրաւացիօրէն երկիւղում էին այդ շրջանների հայութեան ընդգոլմանից, դրանք դիտարկելով որպէս հաւանական ապստամբութեան կենտրոններ: Ուստի պատահական չէ, որ առաջին հարուածներն ուղղուեցին հենց այդ բնակավայրերին: Ձերբակալում էին տեղերում հեղինակութիւն վայելող հայերը, ազգային եւ մշակութային գործիչները (նպատակը՝ հայերին ղեկավար ուժից զրկելն էր), հայերից հաւաքում էին գէնքերը եւ, գրգռելով տեղերի մահմեդականներին կրօնամոլութիւնը՝ սկսում կոտորածներ, դիմակայութեան հանդիպելու պարագայում՝ օգտագործում ոստիկանական ուժերը եւ բանակը: Համաձայն Յո. Լեփսիուսի հաւաստի տեղեկութեան՝ գինուորական հրամանատարութիւնը գինում էր թուրք խուժանին, քրտերին եւ չերքեզներին, իսկ իրենք միջամտում էին միայն հայերի դիմադրութեան դէպքում: Իրենց գործողութիւններն արդարացնելու համար թրքական իշխանութիւնները, գինուորական հրամանատարութիւնը ապստամբութեան մեղադրանքներ էին ներկայացնում հայերին: Ինչպէս գրել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իգմիրլեանը թուրքիայի մեծ վեզիրին յղած նամակում՝ «Ոստիկանք՝ խուճեք իսլամը ձերքով կը շրջին գիւղերն իսլամութիւններով կապելու եւ տեղական իշխանութիւնք անոնց աջակից կարգած են քրտերն ու չերքեզները: Իրենց

յարձուգութեան համար անպատճառ պէտք է քաղաքական դաւի մը, ապստամբական շարժման կամ խորհուրդի մը հետքն ստեղծել եւ ճշմարտութեան երեւոյթ տալու համար խոստովանութեան մը վրայ գայն հիմնել: Այսպիսի խոստովանութիւն մը խլելու համար կը գանակոծեն գիւղացիներն, կը խուզարկեն տուններն, եւ այս առթիւ կը գործուեն բռնաբարութիւնք...»: Իսկ քաղաքացիական իշխանութիւնները «մի կողմից պէտք է ջարդերի հրահրէին մահմեդական բնակչութեանը, նախապատրաստէին նրան եւ ապահովէին նրան անպատժելիութիւն ցանկացած յանցագործութեան համար, միւս կողմից՝ քրիստոնեաների եւ, մասնաւորապէս, հիւպատոսների առջեւ այդ իշխանութիւնները պէտք է հնարաւորին չափ անտեղեկութիւն խաղային...»:

Ջարդերը, որոնք սկսուել էին դեռեւս 1894 թ. սկզբներին, շարունակուեցին մինչեւ 1897 թ.: Արդէն 1894 թ. կոտորածներն այնքան էին տարածուել, որ Դեկտեմբերի 7-ին Կ. Պոլսի հրաժարական տուած պատրիարք Խորէն Աշըգեանին փոխարինած Մատթէոս Իգմիրլեանը Աբտուլ Համիտին ուղղուած նամակում պահանջում էր դադարեցնել դրանք:

Ջարդերի, կողոպուտի եւ աւերածութիւնների ենթարկուեցին Տրապիզոնը, Բաբերդը, Եղեւսիան, Դերջանը, Քոլին, Սամսոնը, Երզնկան, Բիթլիսը, Շապին-Գարահիսարը, Կարինը, Խարբերդը, Չարսանջակը, Մալաթիան, Մարգուսանը, Սղերդը, Մուշը, Տիարպեքիը, Սեբաստիան, Վանը: Ողջ Արեւմտեան Հայաստանը, հայաբնակ շրջանները գտնուում էին բոցերի մէջ: Սարսափելի ջարդեր տեղի ունեցան Կ. Պոլսում: Հարկ է նշել, որ արեւմտահայութեան աննախադէպ սպանդի հետ մէկտեղ օսմանեան իշխանութիւններն իրականացրին նաեւ ասորիների ջարդերը:

Ջարդերը տարածուեցին նաեւ Ատանայի եւ Հալէպի վիլայեթներում, սակայն, պէտք է նշել, որ թուրքիայի այլ շրջանների համեմատութեամբ կիլիկիահայութիւնն աւելի քիչ զոհեր տուեց, համեմատաբար գերծ մնաց գանգուածային կոտորածներից:

1895 թ. Հոկտեմբերի վերջին յուզումներ են սկսուում Այնթապում, որոնք, հրահրուելով տեղական իշխանութիւնների կողմից, Նոյեմբերի 4-ին վերածուում են կոտորածի: Թուրք ջարդարարները յարձակուում են հայ ոսկերիչներին՝ Գագա-Ալթրի թաղամասում գտնուող խանութների վրայ, կողոպտում եւ սրի քաշում բոլորին: Յաջորդ օրը ջարդը տարածուում է ողջ քաղաքում: Սպանուում է 300 հոգի, հրդեհուում 500 տուն: Կոտորածը շարունակուում է նաեւ յաջորդ օրերին: «Դրօշակի» հաղորդմամբ՝ շուկայում հայերի հետ հաշուեյարդար տեսնելուց յետոյ թուրքերը ներխուժում են հայկական թաղամասերը, կենդանի այրում շատերին՝ չինսայելով անգամ ծծկեր երեխաներին: Հալէպի ռուսական հիւպատոս Մ. Յակիմանսկին՝ Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիտովին հաղորդում էր, որ «Որոշ տեղեկութիւններով հաշուում են նոյնիսկ աւելի քան հազար սպանուածներ եւ վիրաւորներ: Եւ Այնթապում եւ Մարաշում դիակ-

ներն այրուած են եւ զօրքերով շրջապատուած, ողջ մնացած քրիստոնեաները հնարաւորութիւն չունեն հեռանալու իրենց քաղաքներից»:

Ընդհանուր առմամբ զոհուում է 1000 հայ, մի քանի հազարը մնում են անօթեան:

Ջարդերի սպառնալիքով մթնոլորտը շիկանում էր նաեւ Մարաշի գաւառում: Այստեղ առաջինը յարձակման է ենթարկուում Մարաշից ոչ շատ հեռու, Ագ-սու գետի ափին, բլրի ստորոտում գտնուող Քիշիֆլի (82 տուն, 450 բնակիչ) հայաբնակ գիւղը: Սակայն հայերը դիմում են կազմակերպուած դիմադրութեան՝ յաջողելով հետ մղել թշնամու իրար յաջորդող զրոհները: Տեղեկանալով Քիշիֆլիում ծաւալուող իրադարձութիւնների, հայերի ինքնապաշտպանութեան մասին՝ գաւառի իշխանութիւնները «ապահովութիւն հաստատելու համար» ոստիկանական ջոկատ են ուղարկում, բայց ոստիկանները «փոխանակ գիւղը պաշտպանելու, հայերուն գէնքերը կը հաւաքեն եւ Մարաշ կը տանին»: Եւս մի ապացոյց՝ հաստատելու համար այն իրողութիւնը, որ հայերի կողմից դիմադրութեան դէպքում ջարդերին մասնակցում էին ոստիկանութիւնը եւ բանակային կանտնաւոր զօրամիւսորդները:

Զրկուելով գէնքից՝ հայերը յաջորդ օրը հարկադրուած բարձրանում են լեռները, իսկ գիւղն ամբողջութեամբ կողոպուում եւ աւերում է թուրք խուժանի կողմից: Դէպքերի ակնատեսը լիշում է. «Երբ կառավարութիւնը կը տեղեկանայ թէ հայերը ա՛լ կողոպուուելիք բան մը չունին՝ քանի մի գինուոր կը դրկէ ապահովութիւնը իրապէս հաստատելու համար»: Սակայն իրադրութիւնը շարունակում էր լարուած մնալ եւ միայն շաբաթներ անց հայերը համարձակուեցին իջնել լեռներից:

Քիշիֆլիից յետոյ թուրք խուժանի կողմից յարձակման են ենթարկուում Մարաշից հարաւ, Գիաւուր դաղի (Հայ լեռ) ստորոտում գտնուող հայկական Փրնտըճագ (400 տուն, 2500 բնակիչ) եւ Տերե-քոյ (140 տուն, 850 բնակիչ) գիւղերը: Իմանալով, որ թուրք խառնամբոխը մտադիր է յարձակուել Տերեքոյ գիւղի վրայ, Փրնտըճագիներն անմիջապէս օգնութեան են նետում եւ միացեալ ուժերով ջարջախում գիւղը շրջապատել փորձող թուրքերին: Մարտում սպանուում է նաեւ թշնամու առաջնորդը:

Որոշ ժամանակ անց, Դեկտեմբերի վերջերին, թուրքերը մէկ անգամ եւս յարձակուում են՝ փորձելով գրաւել Փրնտըճագը, բայց, հանդիպելով հայ քաջերի մահասփիւռ զնդակներին, խուճապահար նահանջում են: «Ուրիշ յարձակում չի փորձուիր եւ դրացի թուրքեր դիցաբանական առասպելներ կը հիւսեն այս գիւղերու մասին, հերոսացնելով անոնց ժողովուրդը իբրեւ երկնառաք բանակներով զօրացած»:

Աւերուում եւ կողոպուում է Գզըլ-Աղաճ գիւղը:

Կիլիկիայում թրքական իշխանութիւնների առաջնահերթ նպատակն էր Զէյթունի քաղաքատիկ հայերի կոտորածը:

ՅԵՂԱՊՈՒՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԿԻԼԻԿԻԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1894-1896 ԹԹ.

Շարունակում էք 21-էն

Թուրքերը ծրագրել էին անսպասելի եւ հուժկու հարուած հասցնել գաւառակի հայութեանը՝ մեկուսացնելով այլ բնակավայրերից, քանզի քաջ գիտակցում էին, որ Զէյթունի ընդլզուման պարագայում նրա օրինակին կարող են հետեւել հարակից հայկական բնակավայրերը, որոնք, միանալով արծուաբնին, ապստամբութեան դրօշ կը պարզեն ողջ Լեւոնային Կիլիկիայով: «...Հաճնոյ, Զէյթունի եւ Տեարթ-Յոլի պէս գրեթէ գուտ հայկական քաղաքներուն իրարու մօտիկութիւնը,- գրել է հաճնցի Հ. Պօղոսեանը,- կառավարութեան խորհիլ կու տար հայկական ապստամբութեան մը կարելիութիւնը Կիլիկիոյ մէջ: Այնպէս որ, փոքր ուսննչան դէպքի մը եւ կամ արարքի մը կարեւորութիւն տալով՝ կառավարութիւնը խիստ հետապնդումներ եւ ճնշումներ ի գործ կը դնէր»: Պատահական չէր, որ 1895 թ. Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներից թրքական հրամանատարութիւնը, գրգռելով մահմեդական խառնամբոխի կրօնական մոլեռանդութիւնը, հետամուտ էր այդ գիւղերի հայութեան տեղահանութեանն ու ջարդերին:

Աւերածութիւնների, թալանի եւ կողոպտի է ենթարկուած Զէյթունի հարաւ-արեւմուտքում գտնուող Անտըրըն (Էնտերուն, Անտառին) գաւառակը, որի 25000 բնակչութիւնից 6000-ը հայեր էին: Առաջինը յարձակման է ենթարկուած Շիվիլի հայկական գիւղը: Հայերը, մերժելով թուրքերի՝ գէնքը յանձնելու պահանջը, դիմում են ինքնապաշտպանութեան՝ երեք օր շարունակ յաջողելով հետ մղել թշնամու գերակշիռ ուժերի գրոհները: Տեղեկանալով, որ գէյթունցիները օգնութեան են փութում հայրենակիցներին՝ թշնամին խուճապահար փախչում է: Զէյթունցիները Նոյեմբերի 8-ին 400 հոգով յարձակուած են գաւառակի կենտրոն Անտըրընի վրայ, փախուստի մատնում թուրք զինուորներին, գրաւում գայմագամի նստավայրը, ազատում աւելի քան 100 բանտարկեալներ: Յարձակման է ենթարկուած նաեւ Ենիէ Կալէ (150 տուն, 800 բնակիչ) հայկական գիւղը: Այդ պահին Ֆոնուզում գտնուող 300 գէյթունցիները, իմանալով այդ մասին, Փանոս Քեշիշեանի եւ հնչակեան կուսակցուածներու անդամ Ջրաչեայ-Մարալի (Գրիգոր Ղարիբեան) գլխավորութեամբ սրընթաց օգնութեան են նետուած եւ յաջողաւորաւորաբար, 1895 թ. Նոյեմբերի 9-ին, ութժամեայ յամառ պայքարից յետոյ թշնամին հեռանում է՝ տալով 4 սպանուած եւ 10 վիրաւոր: Սակայն աւելի ուշ, երբ գիւղացիներն ապաստանել էին Զէյթունում եւ լեռներում, թուրքերը կողոպտում եւ հրդեհում են գիւղը:

Թրքական յարձակումներից զգալի տուժում եւ զոհեր են տալիս Կապանի, Կոկիսոնի, Քիրեճի եւ Թաշ-օլուգի հայերը:

Լարուած իրադրութիւն էր ստեղծուել նաեւ Մարաշում: Հայերը հասկանում էին, որ քաղաքում կուտակուող զօրքը միայն Զէյթունի համար չէր, որ իշխանութիւնները ծրագրում են մասսայական ջարդեր:

Իրենց հերթին թրքական իշխանութիւնները, մասնաւորապէս՝

Զէյթունի գօրանոցի գրաւումից յետոյ, խիստ զգուշանում էին, մտաւախութիւն ունենալով, որ մարաշցիները, հետեւելով իրենց քաջամարտիկ հայրենակիցների օրինակին, կը դիմեն ապստամբութեան: Այդ իսկ պատճառով նրանք սկզբնական շրջանում աշխատում էին առիթ չտալ ցնցումների եւ յուզումների, որոնք կարող էին հանգեցնել անցանկալի հետեւանքների: Թուրքերը սկսում են աւելի վստահ եւ յանդուգն գործել, երբ Մարաշ են ժամանում արաբական եւ սիրիական զնդերը, շրջակայ գիւղերի մահմեդական խուժանը, քրտերը:

Այդ օրերին Այնթապից Զէյթուն անցնելու համար Մարաշում էին գտնուած Ս. Դ. հնչակեան կուսակցութեան գործիչներ Նշանը, Մլեհը եւ Կարապետը: Հոկտեմբերի 12 (24)-ի գիշերը, Զէյթուն անցնելու ճանապարհին, քաղաքի այգիներում, նրանք ընդհարուած են մի խումբ թուրքերի հետ: Այդ առիթն իշխանութիւնների կողմից օգտագործուած է բռնութիւններ սկսելու համար: Վաղ առաւօտեան ձերբակալուած են ընդհարման հետ ոչ մի կապ չունեցող, հայութեան շրջանում որոշակի դիրք եւ հեղինակութիւն ունեցող անձինք: Դրանով իշխանութիւնները ցանկանում էին Մարաշի հայութեանը գրկել դեկավար եւ կազմակերպող ուժից: Ջարդերի առիթն արդէն կար եւ «թուրք խուժանը գրգռուած կ'ուզէր իր մարդը թափել եւ բացորոշապէս կը սպառնար մէկի տեղ հազար հայու արիւն խմել»:

Հաւաքուելով շուկայում՝ թուրքերն սկսում են ընդհարումներ հրահրել, յարձակուած են մասվաճառ ոմն Պօղոսի վրայ, սպանում եւ մորթագերծ անում իր ազարակից քաղաք վերադարձող Կարապետ Թոփալեանին:

Խուճապահար հայերն աւելի քան 10 օր փակուած են տներում՝ յուսալով, որ կրքերը կը մեղմանան եւ իրենք գերծ կը մնան խուժանի վայրագ կրքերին զոհ զնալուց:

Չգալով կոտորածների վտանգը՝ Մարաշի հայութեան հոգեւոր առաջնորդները Հոկտեմբերի 13-ին դիմում են գավառապետին՝ պաշտպանութիւն հայցելով:

Չգալով կոտորածների վտանգը՝ Մարաշի հայութեան հոգեւոր առաջնորդները Հոկտեմբերի 13-ին դիմում են գավառապետին՝ պաշտպանութիւն հայցելով: Հոկտեմբերի 22 (Նոյեմբերի 3)-ին բռնկուած է Մարաշի հայութեան առաջին կոտորածը: Թուրքերը, փողոցում ճանաչելով Ս. Դ. հնչակեան կուսակցութեան Մարաշի վարչութեան անդամ Սողոմոն Ալեքսանեանին, սպանում են եւ դիակը, ի տես հայերի, քարշտալիս փողոցներով: Յարձակման են ենթարկուած փողոցներում եւ շուկայում գտնուող հայերը: Գազանաբար սպանուած է 150, վիրաւորուած 300 հոգի: «Հայերը ալ աւելի կը սմքին եւ կը քաշուին իրենց տները», - յիշում է այդ դժնդակ օրերի ակնատեսը:

Յաջորդ օրն անսպասելիօրէն, ինչ-ինչ պատճառներով, ջարդը դադարում է: Դա պայմանաւորուած էր Զէյթունի շուրջ ծաւալուող իրադարձութիւններով, այն հանգամանքով, որ, ինչպէս նշել ենք, թրքական իշխանութիւններն առաջնահերթ ձգտում էին մահացու հարուածել Զէյթունին, ապա մնացած բնակավայրերին:

Տասներկու օր անց, 1895 թ. Նոյեմբերի 2 (15)-ին, վաղ առա-

ւօտեան թուրք մոլեռանդ ամբոխը ներխուժում է Մարաշի հիւսիս-արեւմուտքում գտնուող Գարամանլը թաղը եւ սկսում կոտորածն ու կողոպտուած: «Թաղին բնակչութիւնը՝ բոլորովին անպաշտպան մշակներ, երկրագործներ եւ արհեստաւորներ՝ բաւական զոհ կու տան վայրագ խուժանին յարձակումներուն»: Ջարդերին մասնակցում էին նաեւ Մարաշ ժամանած կանոնաւոր զօրամասերը: Ամէնուրեք լաւում էին թուրք մոլլաների՝ հայերին կոտորելու կոչերը:

Մինչդեռ վախի եւ սարսափի մթնոլորտում ապրող հայերը փակուել էին իրենց տներում:

Բացուած է Նոյեմբերի 6 (18)-ի արիւնոտ առաւօտը՝ «թուրքական մը, որ հայու արիւնով գրուած է Մարաշի պատմութեան էջերուն վրայ»: Յարձակուելով հայկական թաղամասերի վրայ, թուրք զինուորները, ոստիկանները եւ ամբոխը սկսում են առանց տարիքի եւ սեռի խտրութեան կոտորել հայերին, կողոպտել ունեցուածքը: Յիշում է Գր. Գալստեանը. «Կը տեսնէինք, որ տուներէ հանուած եւ խուճապահար փախչող հայերը զնդակահար ընելով Ալճար ձորը կը նետէին»: Դէպքերի մէկ այլ ակնատես Յակոբ Աբովեանի վկայութեամբ՝ 70-80 հազարի համող թուրք խուժանը եւ զինուորները կացիներով ջարդում էին հայերի տների դռները, սրի քաշում բոլորին: «Շատերը խողխողեցին, - յիշում է նա,- ոմանց վիզը ետեւէն կտրեցին, ուրիշներ հրացանազարկ ընելով կրակի մէջ նետեցին, ոմանց ալ փախչելու պահանջները տապալելով ջարդարաններէ եւ երբ ինկալ փայտ ճեղքելու պէս շերտ շերտ կտրեցին: Թուրքեր ահա այսպէս մեռցուցին քրիստոնեաները, այսպէս վարուեցան այդ անգութները»:

Հրդեհուեցին Գարամանլը եւ Շեքերտեղէ թաղերը, Ս. Գէորգ եկեղեցին եւ դպրոցը, որտեղ ապաստանած հայերը զոհ զնացին կրակէ լեզուակներին: Յարձակման ենթարկուեցին նաեւ Գիւմպէթ եւ Գուլթուլ թաղերը: Մարդկային խիղճը կորցրած, արեան հոտից արբած թուրք խուժանը կոտորում էր տղամարդկանց, ծերերին եւ մանուկներին, բռնաբարում կանանց եւ աղջիկներին՝ յագուրդ տալով իր վայրենի կրքերին: Խաթունիէ թաղում թուրք հրոսակներին յամառ դիմադրութիւն ցոյց տուեցին հայր եւ որդիներ Պօղոս, Վարդեան եւ Նշան Սանթարեանները, որոնք «քաջաբար ինքնապաշտպանութիւն կ'ընեն եւ բաւական թիւով յարձակողներ զնդակահարելէ ետքը՝ իրենք ալ կ'իյնան»:

Մարաշում թրքական զօրքերի հրամանատար Ջեւադ փաշայի գլխավորութեամբ պաշարուած է Մկրտիչ Ամիրեանի բնակարանը: Քաջորդի հայն իր որդիներ Մկրտիչի եւ Եգրասի, փեսայ Յովհաննէս Ենոպեանի հետ հինգ ժամ շարունակ անհաւասար մարտ է մղում թուրք կանոնաւոր զօրամասերի դէմ՝ զգալի կորուստներ պատճառելով: Եւ չնայած թուրքերին յաջողում է հրդեհել տունը, բայց հայ խիզախները, որոնք մինչ այդ կանանց եւ երեխաներին տեղափոխել էին անվտանգ վայր, չեն դադարեցնում մարտը՝ քաջաբար զոհուելով հայրենի տան պաշտպանութեան դիրքերում:

Յամառ եւ կազմակերպուած դիմադրութեան են հանդիպում Քիւթուք Հասանի գլխավորութեամբ դէպի Գիւմպէթ գրոհող թուրքերը: Ինքնապաշտպանութեան կենտրոնը բարձունքում գտնուող Զէյթունցեանների տունն էր, որի շուրջ հայերը նախորդ օրերին պատնէշներ էին բարձրացրել, պատրաստել պաշտպանական դիրքեր: Ինքնապաշտպանութեան ղեկավարումը ստանձնած Յովսէփ Զէյթունցեանի գլխավորութեամբ հայերը փոթորկալի կրակ են բացում թուրք հրոսակների եւ զինուորների վրայ: Հ. Զէյթունցեանի եղբորդի Յարութիւնի դիպուկ կրակոցից սպանուած է նաեւ Քիւթուք Հասանը: Կրած կորուստներից շփոթահար՝ թշնամին նահանջում է, վերադասաւորուած ուժերը եւ վերստին յարձակուած, բայց իրենց դիրքերում հաստատակամ կանգնած փոքրաթիւ հայ քաջորդիները կրկին հետ են մղում հակառակորդին: Յաւօք, մնացած թաղամասերում, ինչպէս արդէն գիտենք, հայերը չկարողացան դիմել ինքնապաշտպանութեան: Արդիւնքում՝ միայն մէկ օրուայ ընթացքում թուրք ջարդարարները սրի քաշեցին մօտ 1000 հոգու: Մարաշի ուսուցիչ Սողոմոն Ոսկերիչեանի ոչ ամբողջական տուեալներով՝ միայն Նոյեմբերի 6 (18)-ին զոհուեցին 972 հայեր: Համաձայն մէկ այլ տեղեկութեան, այդ օրը Մարաշում սպանուել էր 850, վիրաւորուել՝ 500 հայ: Ինչպէս գրել է միսիոներ Էդվին Մանսել Բլիսսը՝ «Յուզումնքն ու անհանգստութիւնը Մարաշում շարունակուած էր աւելի քան 4 շաբաթ, իսկ բուն կոտորածը տեղ ունեցաւ Նոյեմբերի 18-ին»: Իրաւացիօրէն պնդելով, որ ջարդերն արածուած էին իշխանութիւնների կողմից, նա, որպէս իր խօսքերի ապացոյց նշում է, որ ձերբակալուել էին հայերին օգնել փորձող հատուկներ մահմեդականները:

Կարելի է համաձայնել է. Մ. Բլիսսի կարծիքին, որ ջարդն ընդամենը մէկ օր տեւեց, քանզի Զէյթունի հարցերը դեռեւս չէին լուծուել եւ Մարաշն էլ տեղ-տեղ դիմեց ինքնապաշտպանութեան:

Եւ իրօք, փոքրիկ դիմադրութիւնն անգամ խիստ վտանգաւոր էր օսմանեան իշխանութիւնների համար, քանզի այն կարող էր վերածուել ապստամբութեան եւ այդ պարագային, երբ գէյթունցիները նորանոր յաղթանակներ էին գրանցում իրենց հաշուին, նրանք հարկադրուած կը լինէին մեծ ուժեր կենտրոնացնել նաեւ Մարաշում՝ վախենալով համընդհանուր ապստամբութեան հեռանկարից:

Դրութիւնը յաջողօրէն եւս շարունակում էր շիկացած եւ լարուած մնալ, օդում կախուած ջարդի սպառնալիքով: Ձերբակալուած է 200 հոգի՝ ենթարկուելով դաժան խոշտանգումների, կտսանքների: Տուեալներ ունենալով, որ Մարաշում գործում է հնչակեան կուսակցութեան կազմակերպուած խմբակ, որ կայ որոշակի թաքցրած գէնք եւ գինամթերք, թրքական իշխանութիւնները խոշտանգումների միջոցով փորձում էին տեղեկութիւններ ստանալ այդ ամէնի մասին, ոչ միայն հայերին գրկել առաջնորդող, կազմակերպող ու-

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԿԻԼԻԿԻԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1894-1896 ԹԹ.

Շաբաթական 22-էն

ժից կուռելու միջոցներից, այլեւ բացառել Զէյթուն հաւանական օգնութիւն ուղարկելը: Ձերբակալուածները շատերը սպանուած են, մի մասն էլ, չդիմանալով արժանապատուութիւնը խոցող դաժան կտտանքներին՝ ինքնասպանութիւն է գործում: Դաժան տանջանքների են ենթարկուում Զէյթունի կաթոլիկ հայերի հոգեւոր առաջնորդ Յովհաննէս Կետիկեանը, Տէր Ղեւոնդ եւ Տէր Վարդան քահանաները, Կարապետ եւ Յակոբ Չորպաճեանները, Նշան Քիրեճեանը, կրած տառապանքներից խելագարուած եւ մահանում է ուսուցիչ Հրանտ Ասլանեանը:

Ծանր էր քաղաքի հայութեան վիճակը: Անօթեան, կողոպտուած ու թաղանուած, սովահար մի բազմութիւն՝ դաժան ձմրան շէմին: Դրուժիւնն աւելի է բարդանում, երբ թրքական իշխանութիւնները Մարաշ են գաղթեցնում Զէյթունի յարակից մի շարք գիւղերի հայ ազգաբնակչութեանը՝ ճանապարհին սրի քաշելով շատերին: Գաղթականները պատսպարուած են Մարաշի կիսաքանդ շէնքերում: Նրանցից շատերը մահացան հիւանդութիւններից, սովից, ցրտից:

Ընդհանուր առմամբ, Մարաշի գաւառում թրքական բարբարոսութեանը զոհ է գնում 6-7 հազար հայ, իսկ Հ. Ղազարեանը զոհերի թիւը ներկայացնում է 9000: Հալչպում ուսական հիւպատոս Մ. Յակիմանսկու հաղորդմամբ՝ Մարաշի գաւառում ոչնչացուել էր 75 գիւղ, հրդեհուել 2327 տուն, սրի էին քաշուել 6630 քրիստոնեաներ:

Հայերը փոքր-ինչ շունչ են քաշում 1896 թ. Յունուարին, երբ Մարաշ են ժամանում մեծ տէրութիւնների հիւպատոսները: Դրանից քաջալերուելով՝ Զէյթունի ապստամբութեանը մասնակցած մարաշցի բազմաթիւ մասնակիցներ վերադառնում են հայրենի քաղաք, բայց մեծ մասը (աւելի քան 50 հոգի) ձերբակալուած են, այդ թւում՝ իրենց խիզախութեամբ յայտնի եւ մարտերում աչքի ընկած Յարութիւն Տոլպաճեանը, Մանուկ Քէշիշեանը, Յակոբ Տարագճեանը, Նազար ձեհիգեանը եւ այլք: Նրանց մէջ էր եւ Գիւլմպեթ թաղի ինքնապաշտպանութեան ղեկավար Յովհանէս Զէյթունցեանը, որ «յանդգնել» էր պաշտպանել իր ընտանիքի եւ հայրենակիցների կեանքն ու պատիւը: Ամենայն դաժանութեամբ հաշուեյարդար տեսնելով բանտարկեալների հետ, թուրքերը փորձում էին տեղեկութիւններ քաղել Ս. Դ. հնչակեան կուսակցութեան Մարաշի վարչութեան ղեկավարի՝ «Մարութ ճգնաւորի» մասին: Չդիմանալով խոչտանգումներին, ծեծին եւ ստորացումներին, Տ. Ղեւոնդ քահանայ Նահապետեանը «խոստովանում» է, որ ինքն է յայտնի գործիչը, յայտարարելով, որ «... հայր... օրէնքը եղծանող, կաշառակեր, անպարկեշտ ու անարդար պաշտօնեաներուն դէմ է», պահանջելով Պեռլինի պայմանագիրի 61-րդ յօդուածով նախատեսուած բարենորոգումների իրականացումը:

1897 թ. Մայիսին, երբ ներում է շնորհուած քաղաքական բանտարկեալներին, բանտից ազատուած են նաեւ կենդանի մնացած, բայց հաշմանդամ դարձած մարաշցիները:

1895 թ. աշնանը խիստ սրուել էր իրադրութիւնը նաեւ Հաճընում եւ յարակից շրջաններում: Համաձայն որոշ տուեալների՝ Նոյեմբերի սկզբին գաւառի գիւղերը (Շար, Բանլըզ, Քյոթուն եւ այլն) աւերուել եւ կողոպտուել էին, իսկ բնակիչները, մօտ երկու հազար, պատսպարուել էին Հաճընում:

Նոյն ժամանակ թուրք հրոսակների եւ Սըվազի չերքեզների կողմից պաշարուած է Հաճընի հարեւանութեամբ գտնուող Բումլու գիւղաքաղաքը, որի հայութիւնը գիշերը մեծ դժուարութեամբ, խոյս տալով թշնամու յարձակումից, ապաստանում է Հաճընում: Տեսնելով, որ բնակիչները հեռացել են, մահամեղակաւ խառնամբոխը մտնում է բնակավայր, թալանում, կողոպտում եւ հրդեհում հայերի տները: Աւերում են գիւղաքաղաքի հարեւանութեամբ գտնուող 4 հայկական գիւղերը: Դէպքերի ակնատեսն այդ օրերի մասին գրում է. «Հայկական գաւառներուն մէջ հազարաւոր հայեր կը խողխողուէին անխնայ, թրքական ու քրտական ուժերու կողմէն: Մարաշի եւ Հալչպի շրջաններուն մէջն ալ տեղ տեղ ջարդեր կ'ունենային: Ահաւասիկ արհաւիրքի այս օրերուն, թէեւ Հաճըն ապահով ու հանդարտ կեանք մը պարեցաւ, սակայն իր շրջակայ հայ գիւղերը՝ ինչպէս Բումլու, Շար եւ Կեռքսուն ենթարկուեցան հալածանքներու եւ թալանի, եւ անոր համար Շարի եւ Բումլուի ժողովուրդը ամբողջովին, իսկ Կեռքսունի ժողովուրդը մասամբ, Հաճըն ապաստանեցան եւ ամէն աջակցութիւն ու հոգատարութիւն գտան հաճընցիներու կողմէն»:

Որոշ ընդհարումներ են լինում նաեւ Հաճընում: Թուրքերը յարձակուած են քաղաքի լեռներում իրենց հոտերն արածեցնող հաճընցիների վրայ, բայց հայ երիտասարդները հետ են մղում թշնամուն: Սպանուած են փայտի գնացած մի քանի հայեր: Թուրք հրոսակները յարձակուած են քաղաքի ծայրամասում գտնուող Գրիգոր Մանուկեանի տան վրայ, թալանում եւ կողոպտում: Զէյթունին օգնութեան գնալու ճանապարհին սպանուած են Յովհաննէս ձիջերճեանը եւ իր ընկերները»:

Պատահական չէր, որ թրքական իշխանութիւնները խուսափեցին Հաճընում հակահայկական կրքեր բորբոքելուց եւ ջարդեր կազմակերպելուց: Նրանք վախենում էին, որ փոքրիկ ընդհարումներն ու միջադէպերը պատճառ կարող են հանդիսանալ հայերի ընդվզման, որն էլ կը յանգեցնի անցանկալի հետեւանքների: Ինչպէս նկատել է Լ. Մկրտչեանը՝ «Բնական անառիկ դիրք ունեցող այս քաղաքը, աւելի քան հաւանական էր, որ վերածուէր տարերային ապստամբութեան երկրորդ՝ թուրքերի համար չափազանց վտանգաւոր օճախի, ինչը եւ խիստ մտահոգիչ էր Բ. Դուան համար»:

Կոտորածների եւ աւերածութիւնների են ենթարկուած Քիլիսը, Բիրեջիկը, Նիզիբը, Ջիբիները: Բիրեջիկը թուրքերի կողմից յարձակման է ենթարկուած երկու անգամ՝ 1895 թ. Հոկտեմբերի 20-ին եւ Դեկտեմբերի 20-ին:

Ջարդերից խիստ տուժում են Ատանայի վիլայեթի Պայաս, Նա-

ջարլի, Օջախլի, Միսիս գիւղերը՝ ենթարկուելով թուրքերի, քրտերի եւ չերքեզների յարձակմանը: Տեղի ունեցած վայրագութիւնների մասին ակնատեսներից մէկը գրում էր. «Նրանք անասնձ կերպով կը վիրաւորեն, կը սպանեն, ամբողջ ինչքերնին, գոչքերնին, պարեննին, արմտիքնին եւ մետաքսի խոզաներնին կը յափշտակուեն, աւարի կու տան, գիւղերն ու ազարակները կայրեն»:

Միայն Նաջարլի գիւղում հրդեհում է 140 տուն: Չերքեզ հազարապետ Իսմայիլ բեյի հրոսակները սրի են քաշում տղամարդկանց, բռնաբարում կանանց եւ աղջիկներին:

Ծանր վիճակ էր ստեղծուել նաեւ Ատանայում, «ուր շատ-շատերը սպանուած են, ունեցուածքը՝ յափշտակուած»:

Ինչպէս նշում է ամենայն հայտք կաթողիկոս Մ. Խրիմեանը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին յղած 1896 թ. Յունուարի 13-ի նամակում՝ «Տրապիզոնից եւ Էրզրումից, ողջ Անատոլիայով մինչեւ Կիլիկիա (Մարաշ, Միս եւ այլն) հայերի նկատմամբ իրականացուել են վայրագութիւններ, որոնք վաղորդ կազմակերպուած են եղել, տեղական իշխանութիւնները ոչինչ չեն արել կամ խրախուսել են հայերի կոտորածը եւ կողոպուտը, գորքերը մասնակցութիւն են ունեցել խժոժութիւններին ու կողոպուտներին... Ատանայում կանանց եւ աղջիկներին հաւաքել էին մի տեղ՝ գեղեցիկներին ընտրելու, միւսներին կոտորելու համար»:

1890-ական կոտորածներով, փաստօրէն, սկսուեց արեւմտահայութեան ցեղասպանութիւնը: Աւելի քան 300.000 հայ զոհուեց, նոյնքան էլ տարագրուեց կամ արտագաղթեց: Արտագաղթը մեծ հարուած էր հայութեանը: Փոխուած էր Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի, հայաբնակ շրջանների ժողովրդագրական պատկերը, քայքայուած էր տնտեսութիւնը, դժուարանում ազգային ազատագրութեան համար մղուող պայքարը. իրենց պայանական օճախները լքում էին մարդիկ, ովքեր հարկ եղած դէպքում կարող էին գէնք վերցնել եւ մարտնչել անարգ թշնամու դէմ: Գաղթը շարունակուած էր նաեւ 1897 թուականին: 1897 թ. Մայիսի 7-ին Կիլիկիայից Եւանդ Լուսինեանը Ապահին գրում էր, որ «... ամէն շաբաթ խումբ-խումբ գաղթականներ կը լեցուին յոյն եւ հայ: Մեր կողմերէն բաւական մեծ բազմութիւն մը եկաւ եւ տակաւին պիտի գան: Շատ ալ... կու գան Հալչպէն, Այնթապէն, Մարաշէն, Քիլիսէն եւ այլ կողմերէն. որի՞ն հասնենք չենք գիտեր»:

Նախերը, հայոց եկեղեցին՝ Մ. Խրիմեանի գլխաւորութեամբ: Կազմակերպուած են հանգանականութիւններ, գումարները նպատակաուղղուած են աղէտեալ վայրեր՝ վերաշինելու աւերուած բնակավայրերը, մասամբ հոգալու ծով կարիքները:

Սակայն գաղթականների վերադարձը հայրական օճախներ ընթանում էր դանդաղ տեմպերով, քանզի մահուան սարսափը, կոտորածների մղձաւանջը, հարազատների կորստի ցաւն ապրած մարդկանց խիստ դժուար էր վերադարձնել հայրենիք, որտեղ ամէն ինչ չի շէջնում էր ոչ վաղուցուայ արհաւիրքների մասին, առաւել եւս, որ բացակայում էին կեանքի եւ գոյքի ապահովութեան երաշխիքները: Ամէն դէպքում, ձեռնարկուած աշխատանքների արդիւնքում, զգալի թուով մարդիկ բռնեցին ետդարձի ճամբան: Այսպէս, Ֆարատի հաղորդման համաձայն՝ Կիլիկիայում, մասնաւորապէս Լարնակայում գտնուող գաղթական երկրացիներ՝ քիլիսեցի, մարաշացի բաւական երիտասարդութիւններ վերադարձան երկիր»:

Շատ հայեր փրկութեան ելքը տեսան մահամեղականութիւն կամ կաթոլիկութիւն ընդունելու մէջ՝ փաստօրէն օտարուելով հայրենիքից, հայկական ոգուց եւ կուժիկից: Համաձայն մի տեղեկութեան՝ 559 բնակավայրերում հայերը հաւատափոխ էին եղել: Միայն Բիրեջիքում մահամեղականութիւն էին ընդունել 200 տուն հայեր:

Ինչպէս արդէն նշել ենք՝ կիլիկիահայութիւնը, այլ շրջանների հայերի համեմատութեամբ, հիմնականում գերծ մնաց զանուածային ջարդերից: Դա ունէր իր օրիէկտիւ պատճառները, որոնցից, թերեւս, գլխաւորը Զէյթունի ապստամբութիւնն էր, որ ոչ միայն անուրանալի, հսկայական ազդեցութիւն ունեցաւ ազատագրական պայքարի առաւել ծաւալման առումով, այլեւ թրքական իշխանութիւններին հարկադրեց, Կիլիկայում համընդհանուր ապստամբութեան սպառնալիքն աչքի առաջ ունենալով, չտարածել ջարդերի ալիքը Ատանայի եւ Հալչպի վիլայեթներում: Հայերի հաւանական ըմբոստութիւնն աչքի առաջ ունենալով էր, որ օսմանեան իշխանութիւնները գնացին որոշակի գիշումներին. քրիստոնեայ կառավարիչ նշանակեցին ոչ միայն Զէյթունում, այլեւ Հաճընում: Իր ուրախութիւնը յայտնելով Զէյթունում յոյն կառավարչի նշանակման կապակցութեամբ, Ս. Դ. հնչակեան կուսակցութեան գործիչ, Զէյթունի հերոսներից Ապահ Պետրոսեանը Նազարէթ Նորաշխարհեանին 1896 թ. Յունիսի 4 (16)-ին յղած նամակում միամտօրէն գրում էր. «Պայմանագրի (նկատի ունի գէյթունցիների եւ թրքական իշխանութիւնների միջեւ կնքուած պայմանագիրը - Ռ.Գ.) 5-րդ յօդուածը գործադրուած տեսնելով՝ յոյս մեծ ունենք, որ մնացած յօդուածներն ալ հետգհետէ կը գործադրուին... կարելի չէ որ չի գործադրուին՝ որովհետեւ եւրոպական բոլոր մեծ տէրութիւնները շատ աշխատում են որ կնքուած պայմանները կէտ առ կէտ գործադրուին»:

Կանոց չառնելով Զէյթունի ապստամբութեան մանրամասների վրայ,

ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՀԱՄԻՏԻ ՓՈՐՁԸ` ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐԸ ԿԱՇԱՌԵԼՈՒ

Դատավարու թեան վերջին օրն էր: Հնչակեան ցուցին ազդեցութիւնը տակաւին ուժեղ էր հասարակութեան վրայ: Պատահածը՝ մինչեւ այդ շտեմանուած, չերեւակայուած դէպք մըն էր:

Բայց հայր գլուխ վերցուցած էր եւ դարձած էր իրաւապահանջ: Երբ լսողի բնակիչները շատ աւելի ահաբեկած էին ցուցին, քան թուրք հասարակ ժողովուրդը:

Համիտ կատարած էր՝ լսելով որ պատրիարքարանի սրահի պատէն կախուած թրքական թուղթան վար առնուած ու կոխկըրտուած էր:

Ոստիկանական հսկողութիւնը ամէն տեղ, մասնաւորապէս պատրիարքարանի եւ մայր եկեղեցու շրջակայքը, շատ ուժեղ էր: Յայտնի եւ անյայտ լրտեսները՝ սակայն չէին յաջողած ձեռք ձգել ցուցին միւս ղեկավարները: Ձերբակալուած էր միայն ծանուկը, ցուցին օրը, մատնիչներ Մամբրէ եւ Տաճատ վարդապետներուն ցուցմունքներով:

Դէպքը արտակարգ էր, հետեւաբար դատավարութիւնն ալ եղաւ արտակարգ գինուորական ատեանով:

Պայագիտի հրապարակը, ամէն օր, շատ կանուխէն, նմանը չի տեսնուած երկսեռ բազմութիւն մը կը խոնտէր, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան:

Սպասարկութեան շէնքին առջեւ եւ լայնատարած բակը՝ հրացանակիր զինուորներ եւ սպաներ կը վիտային, ինչպէս եւ գաղտնի ոստիկաններ եւ լրտեսներ: Բազմութիւնը անձկանօք կ'ուզէր տեսնել այդ անանուն հերոսը, որ յանդգնած էր առաջնորդել ցուցարարները դէպի Երլտըզ... եւ պետական գինանշանը կոխկրտած...: Շատեր լսած էին հնչակ անունը, սակայն չէին տեսած կամ ճանչցած այդ անունով մէկը:

Այդ առաւօտ թուրք լրագիրները զգայացուց վերտառութիւններով դարձեալ անդրադարձած էին ցուցին եւ հրատարակած պաշտօնական գեկոյցը՝ պալատէն տրուած: Հակառակ դրուած արգելքին, կրկին հակայ բազմութիւն մը հաւաքուած էր գլխաւոր փողոցին վրայ, ուրկէ պիտի անցնէր օրուան հերոսը՝ առիւծասիրտ հնչակեանը...:

Երլտըզէն հասած նոր հրահանգի մը համաձայն, փոխանակ դատարանական շէնքի առջեւի, ետեւի դռնէն ներս տարուեցաւ ծանկիւնը՝ հազարապետի մը առաջնորդութեամբ, ենթասպայէ մը եւ վեց հրացանակիր զօրքերէ շրջապատուած:

Դատարահին մէջտեղ դրուած էր կանաչ չուխալով ծածկուած սեղան մը, որուն գլուխը նստած էր Սպարապետ Ալի Սաիպ Փաշա, անկէ մի քիչ հեռու՝ սուլթանի մասնաւոր ներկայացուցիչը՝ Տէրվիշ փաշա: Սեղանին երկու կողմերը նստած էին միւշիւր, Ֆէրիք եւ լիվա 12 փաշաներ. սեղանին վարի ծայրը նստած էր հուշակաւոր հարցաքննիչ Հիւսէյն Սըտգը եւ հարիւր ապետ մը՝ իբր քարտուղար:

Ծանկիւնը ներս մտաւ համարձակ քայլերով եւ Տէրվիշ փաշայի մօտ իրեն վերապահուած աթոռին վրայ նստեցաւ, առանց սպասելու «նստեցէ՛ք» հրամանին:

Բանտարկութիւնը, յաճախակի հարցաքննութիւնները եւ գիշերուայ քանակոծումները ֆիզիքապէս ընկճած էին ծանկիւնը,

սակայն կարողացած չէին անոր բարոյական կորովը ընկճել. ան մնացած էր անբեկանելի, կարելի է ըսել՝ աւելի խստացած էր, վասնզի իր յանդուգն արարքովը դրսեւորած էր հնչակեանութեան ոյժն ու հմայքը: Գիտէր որ վերջին օրն է դատավարութեան, եւ հետեւաբար, անգամ մը եւս ինքզինք հաւաքած եւ որոշած էր որ եթէ մեռցնելու ալ ըլլան գինք, ինք պիտի մնայ նոյնը, անդրդուելի, պիտի չի շեղի հնչակեանավայել կեցուածքէն, պիտի ցուց տայ որ հայ անկախութեան ուխտաւորները իրենց կարծած մարդոց նման չեն:

Դատավարութիւնը կը բացուի եւ հարցաքննութիւնը կը սկսի սովորականին նման: Յաճախ կրկնուած հարցումները նորէն եւ նորէն կը կրկնուին, որոնց պատասխանները կ'ըլլան նոյնը: Նորանոր սպառնալիքներու եւ մահուան պատիժի խօսքերը դարձեալ չեն կարող բեկել ծանկիւնը կորովը:

Տէրվիշ փաշա, որ շատ չէր խօսեր դատավարութեան ընթացքին, ծանկիւնը խիստ յամառ կեցուածքին հանդէպ կը վրդովուի, անհանգիստ շարժումներ կ'ընէ.

- Ըսել է ցուցը Հնչակի գործ չէ՞, եւ դուք անոր ղեկավարը չէ՞ք, կը գոռայ հարցաքննիչ Հիւսէյն Սըտգը փաշա:

- Հարցնելը աւելորդ է, պահանջագիրը ձեռք ձեռք չէ՞ միթէ, կ'ըլլայ ծանկիւնը կորուկ պատասխանը:

- Բայց ես քեզի դիւրին ըսելու կերպը գիտեմ:

- Ալ ինչո՞ւ կը սպասէք... Մինչեւ հիմա օգուտ մ'ունեցա՞ն գիտցած կերպերդ...:

- Այս անգամ եթէ չի խոստովանիս, քեզ շան նման կը սատկեցնեմ...:

- Մահէն ես վախ չունիմ: Դուք բռնակալներդ չէք ճանչցած հնչակեաններս...:

- Ձեզ բոլորդ ալ կը ճանչնամ, գոռաց Հիւսէյն Սըտգը, թոյլ չի տալով որ ծանկիւնը խօսքը լրացնէ: Շատ լաւ կը ճանչնամ սրիկաներդ... ըսաւ ոտքի ելնելով:

- Պայմանով որ ուրիշներ չի միջամտեն, անմիջապէս փոխադարձեց ծանկիւնը եւ ինքն ալ ոտքի ելաւ: Ես կրնամ ցուց տալ թէ ո՞վ է սրիկան:

Դատարանը իրար կ'անցնի: Տէրվիշ փաշա, որուն հանդէպ բոլորն ալ ակնածանք ունէին, Սուլթանին ներկայացուցիչը ըլլալուն համար, ակնարկով մը բոլորին կը հասկցնէ որ դուրս ելնեն եւ գինք առանձին ձգեն ծանկիւնը ներս հետ: Անմիջապէս, բոլորն ալ աջ կողմի սենեակը կ'անցնին:

- Հիւսէյն Սըտգը առաջին անգամը չէ որ ինձ հանդէպ այդպիսի վարմունք կ'ունենայ, կը խօսի ծանկիւնը՝ մօտենալով Տէրվիշ փաշայի: Ես իրեն նման փողոցային լեզուի վարժութիւն չունիմ: Եթէ համոզում գոյացուցած էք որ ես յանցաւոր եմ, տուէք ձեռք վճիռը, եթէ ոչ՝ ազատ արձակեցէք:

Տէրվիշ փաշա ոտքի կ'ելլէ, կ'առնէ ծանկիւնը թեւը եւ սրահի ձախ կողմի սենեակը կ'առաջնորդէ գինք՝ խիստ համակրական խօսքերով:

Տէրվիշ փաշայի այս անակնկալ ընթացքը գարմանալի կը թուի ծանկիւնը: Առաջին անգամն է որ Տէրվիշ փաշա կը գիշի իրեն հետ խօսելու անուշ խօսքերով: Ինչ բանի վերադրելը չէր գիտեր, միայն

ուշադրութեամբ նայեցաւ անոր աչքերուն, անոնց մէջ կարդալու համար հոգիին ծալքերը:

- Շատ կը մեղքանամ քո վրայ, շարունակեց Տէրվիշ փաշա, ձեռքը ձանկիւնը ուսին վրայ գնելով, երբ մանաւանդ լսելով որ մօրդ միակ նեցուկն ես: Շատ երիտասարդ ես եւ խելացի:

Դուն կարող ես փայլուն ապագայ ունենալ, դառնալ մեծ մարդ:

Մեր վեհապանս սուլթանն ալ ինձ նման խորհելով կը մեղքանայ վրդա...:

- Շատ շնորհակալ եմ, Տէրվիշ փաշա, ձեր այս համակրական խօսքերուն համար: Կը յուսամ որ հաւատացած էք իմ անմեղութեան, հետեւաբար ձեր ազդեցութիւնը պիտի բանեցնէք իմ ազատութիւնը ձեռք բերելու համար:

- Վստահ եղի՛ր, պիտի աշխատիմ այդ ուղղութեամբ, ըսաւ Տէրվիշ փաշա եւ գրպանէն թղթադրամի տրցակ մը հանելով ծանկիւնը ձեռք դրաւ, ըսելով որ այս հազար ոսկին սուլթանին առաջին նուէրն է:

Ծանկիւնը անմիջապէս հասկցաւ Տէրվիշ փաշայի նպատակը...: Չգաց որ երակներուն մէջ արիւնը սկսաւ աւելի արագ շրջան ընել...: Տէրվիշ փաշայի նպատակը վատօրէն կաշառել էր: Այդ նախատինքը սոսկալի կը գտնէր, բայց պահեց պաղարիւնութիւնը, զպեց բարկութիւնը եւ հարցուց միամտօրէն.

- Ի՞նչ ընելու եմ ասոնք:

- Ուզած կերպովդ կը գործածես, ընկերներուդ ալ բաժին հանելով, պատասխանեց Տէրվիշ փաշա ու նստաւ աթոռին վրայ գոհ երեւոյթով:

- Արդեօք այս գումարը ձեռք կողմէն կը տրուի թէ սուլթանին, հարցուց ծանկիւնը մօտենալով Տէրվիշ փաշայի:

- Կ'երդնում որ նորին վեհափառութիւնը տուած է: Ինչպէս գիտէք, ինք առատաձեռն է...: Նորէն պիտի տայ...: Ընկերներուդ ալ տալու խոստում տուած է, յետոյ տասը ոսկի ամսականով պաշտօններ ալ պիտի տրուին ո՛ր սեղը որ ուզելու ըլլաք...:

- Այս նուէրին շարժառիթն ի՞նչ է, Տէրվիշ փաշա, հարցուց ծանկիւնը ջանալով թագնեցնել զգուանքը:

- Սոսկ նուէր, ուրիշ ոչինչ, պատասխանեց Տէրվիշ փաշա՝ ուսերը շարժելով:

- Ուրեմն շնորհակալ եմ:

- Հիմա մնաց փոխարինութիւնը, անմիջապէս յարեց Տէրվիշ փաշա, գոհունակ երեւոյթով մը, կարծելով որ հասած է իր նպատակին:

- Ի՞նչ փոխարինութիւն, հարցուց ծանկիւնը գարմանքով մը:

- Ի՞նչ կայ ատկէ աւելի դիւրին բան որ մարդ չգիտնայ, մանաւանդ քեզի նման խելացի մը:

- Իրաւ որ չեմ գիտեր, պատասխանեց ծանկիւնը միամիտ ձեռով մը:

- Այդչափ բան չգիտնալ, ընկերներուդ անունները ըսել ու ազատիլ. տեսա՞ր որչափ դիւրին գործ է: 1000 ոսկիի եւ 10 ոսկի ամսականի փոխարէն...:

Ծանկիւնը անմիջապէս չի կրցաւ զգուանքն ու բարկութիւնը զսպել եւ անմիջապէս Տէրվիշ փաշայի երեսին պոռթկաց.

- Այսքան օրուան մէջ՝ ըսել է ձեր ապուշութեամբ չի կրցա՞ք ճանչնալ գիս. ես թէեւ աղքատ եմ, սակայն սրտով հարուստ եմ, բռնապետեղ աւելի: Հազար ոսկի չէ, մի քանի հարիւր հազարներով իսկ՝ չէք կարող կաշառել հնչակները, որոնք ուխտած են պայքարիլ ձեզ նման գեղձարարներու, բռնակալներու եւ այլոց իրաւունքները յափշտակողներու դէմ, արհամարհելով բանտերն ու կախաղանները: Ձանոնք կաշառելու միակ կերպն է արդարութիւն ի գործ դնել երկրի մէկ ծայրէն միւսը: Կրնա՞ք այդ ընել: Չեմ հաւատար, որովհետեւ դուք ի բնէ կաշառակեր, գեղձարար եւ բռնակալ էք...:

Տէրվիշ փաշա աթոռին մէջ ընկղմած, նախատինքներու տարափին տակ փոքրացած, սմբած էր: Կ'ուզէր ոտքի կանգնիլ եւ ճգմել ոտքերուն տակ Բայա հայր, սակայն կարծես աթոռին ամուր գամուած ըլլար, անկարող շարժելու:

Ծանկիւնը զգուանքով անդրադարձաւ որ թղթադրամի տրցակը դեռ իր ձեռքին մէջ սեղմած ունի. ցնցուեցաւ՝ որպէս թէ թունաւոր իժ մը բռնած ըլլար, բարկութեամբ նետեց գայն Տէրվիշ փաշայի երեսին ու անցաւ դատասարհ... լսելու համար իր մահուան վճիռը...:

Համադրեց՝ Ա. Շ.

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՉ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 280-րդ կայանից

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԹՈՒՐՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՄԹԻՆ ԴԱԻԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱՅ 1915 ԹՈՒԻՆ

ԹՈՐԳՈՄ ՓՕՍՏԱՃԵԱՆ

Մարդկային համայն պատմության մէջ՝ ամբողջ Ազգ մը բնաջնջելու անմարդկային որոշումն ու արարքը՝ առաջին անգամ յղացողներն ու գործադրողները եղան Օսմանեան թուրք իշխանութիւնները, ղեկավարութեամբ կառավարութեան տիրացած թուրք իթթիհատականները:

Հայ ժողովուրդի բնաջնջման՝ ահաւոր ոճրարարքն էր այդ որ թուրք իշխանութիւնները ծրագրեցին եւ գործադրեցին 1915 թուի Համաշխարհային Առաջին Պատերազմի նախօրեակին:

Այս աներեւակայելի ոճրագործութեան գլխաւոր հեղինակները եղան՝ Թալաթ, Էնվէր, Ճեմալ, Սաիտ Հալիմ, Պէհհետտին Շաքիր, Մէճիտ փաշաներ եւ տասնեակ մը այլանուն թուրք դահճապետներ:

Այս դահճապետներու առաջին գործը եղաւ անգլուխ ձգել հայ ժողովուրդը: Անոնք իրենց ոստիկանական ջոկատներով եւ զինուորական միջոցներով կալանքի տակ առին եւ աքսորեցին հայ ժողովուրդի հազարէ աւելի ղեկավար տարրերն ու մտաւորականները:

1915 թուի Ապրիլ 11-էն Ապրիլ 24՝ հայ ժողովուրդի բոլոր անուանի մտաւորականները, գրողներ, թերթերու խմբագիրներ, գիտնականներ, հոգեւորականներ եւ առաջնորդներ կալանաւորուեցան եւ կարճ ժամանակամիջոցէ մը ետք անոնց տարուեցան Անատոլի միջին վայրերը եւ հոն վարձկան չէթէներու եւ մարդասպաններու ձեռքով անգթօրէն սպաննուեցան:

Բացի հայ եկեղեցւոյ առաջնորդական պաշտօններու վրայ գտնուող քսանէ աւելի բարձրաստիճան հոգեւորականներէ՝ ինչպէս Սմբատ Եպս. Սաստիթեան, Խորէն Եպս. Դիմաքսեան, Յակոբ Եպս. Փաղիարեան, սպաննուեցան նաեւ հարիւրաւոր վարդապետներ եւ քահանայ հայրեր: Տարեգիրքերու անուանի խմբագիր գրագէտ Թէոդիկ հրատարակած է երկու յուշամատեան գրքեր, մին նուիրուած մեր նահատակ գրագէտ մտաւորականներու, իսկ միւսը նուիրուած նահատակուած հայ եկեղեցականներու:

Նահատակուած հայ հոգեւորականներու շարքին էին նաեւ Հայ Կաթոլիկ Եկեղեցւոյ նուիրեալ Առաջնորդ՝ Գերապայճառ Իգնատիոս Արք. Մալոյեանը, որուն սրբութիւն շնորհեց, Հոռովմէական եկեղեցւոյ Առաքելատիպ հովուապետ ձան Փօլ Երկրորդ Սրբազան Պապը: Նահատակուեցան նաեւ բազմաթիւ հայ կաթոլիկ հոգեւորականներ եւ 15 սրբակրօն միանձնուհիներ (Մայրապետներ) նահատակուեցան նաեւ տասնեակ մը հայ բողոքական պատուելիներ:

Կարեւոր կը նկատենք ներկայացնել հոս հայ գրականութեան երկու հանճարեղ հայ բանաստեղծներ՝ Դանիէլ Վարուժանի եւ Ռուբէն Սեւակի նահատակութեան տիտուր դրուագը՝ որ մէկն է միայն, հազարներէն:

ՍՐՏԱԿԵՂԷՔ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1915 թուի Օգոստոս 26ին, Ռուբէն Սեւակ, Դանիէլ Վարուժան եւ երեք միւս մտաւորական ընկեր-

ներու հետ՝ Այաշ տարուելու պատրուակով, թուրք զինուորական հսկողութեան տակ՝ կառքով ճամբայ կը հանուին անձանօթ ուղղութեամբ:

Կառքը կանգ կ'առնէ Գալիփոլի թիւնէյ գիւղի մօտերը: Թուրք ոստիկան զինուորը կը հրամայէ ոստիկան զինուորը կը հրամայէ հինգ կալանաւորեալներուն վար իջնել կառքէն:

Չորս զինեալ ոճրագործ չէթէներ՝ մերձակայ ձորը կ'առաջնորդեն, անպաշտպան աքսորեալները:

Ռուբէն Սեւակ թախանձագին կը խնդրէ ոճրագործներէն որ խնայեն իրենց կեանքին, խոստանալով անոնց տալ իրենց մօտ գտնուող ամբողջ հարստութիւնն ու գոյքերը:

Հակառակ մեր հանճարեղ գոյգ բանաստեղծներ՝ Դանիէլ Վարու-

պիտի ծախեմ եւ հեռանամ այս քաղաքէն...»:

ԱՅԼ ԴԱԻԱԴԻՐ ԱՐԱՐՔՆԵՐ

Թուրք իշխանութիւններ կատարեցին նաեւ այլ ապշեցուցիչ բռնարարքներ: Պաշտօնակ ըրին Պոլսոյ Հայոց Պատրիարք Զաւէն Արք. Եղիայեանը եւ աքսորեցին զինք Պաղատա:

Պարտադրեցին որ բոլոր հայ եկեղեցիները իրենց կապը ընդմիշտ խզեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսէն:

Անոնք Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոս՝ Սահակ Խապայեանը աքսորեցին Երուսաղէմ: Ընդմիշտ արգիլեցին անոր Կիլիկիա մուտքը:

Թուրք դահիճ ղեկավարներ պարտադրեցին նաեւ որ Սահակ Կիլիկիկիոյ Կաթողիկոս Խապայեան-



Հայ ազգիմ թուրք մեծ դահճապետները

ժանի եւ Ռուբէն Սեւակի, նաեւ՝ իրենց ընկերակցող մեր միւս երեք անուանի մտաւորականներու աղիողորմ պաղատանքներուն՝ անուպայ այդ ոճրագործները ձորի եզրին վտակի մօտ՝ կը մերկացնեն զիրենք եւ սուր դաշոյններով կը սկսին ծակծակել անոնց մերկ մարմինները: Անոնք անգթօրէն կը բզկտեն եւ կ'անդամահատեն անոնց անպատար մարմինները: Միայն Դանիէլ Վարուժան կը փորձէ անձնապաշտպանութեան դիմել, որուն իբրեւ հետեւանք՝ ոճրագործները դաշոյն մը կը խրեն անոր փորտիքին եւ կը հանեն բանաստեղծին աչքերը:

Նահատակեալներու սպաննութեան էտք, ոճրագործները Ռուբէն Սեւակի եւ միւս զոհերու զգեստներու երիզներու մէջէն 450 հնչիւն օսմանեան ոսկի կը հանեն եւ այլ գոյքերու հետ կը բաժնեն իրենց միջեւ: Հուսկ ապա այդ հրէշածին մարդասպանները, կը հրամայեն կառապաններուն վերադառնալ Չանկըրը առանց շեղելու:

Ոճիրին ակնաստեա երիտասարդ կառապանը՝ տեսնելէք էտք կատարուած աներեւակայելիօրէն անգութ եւ անմարդկային այդ սպաննութիւնները, խորապէս կը ցնցուի, ան հոգեպէս կ'ազդուի: Չանկըրը վերադառնալէք էտք, երիտասարդ այդ կառապանը՝ աքսորաւարը գտնուող Գրիգորիս Եպս. Պալաքեանին կը պատմէ կատարուած այդ ահաւոր ոճրագործութիւնները՝ բոլոր մանրամասնութիւններով, նաեւ չկրնալով զսպել իր արցունքներն ու յուզումը՝ կ'ըսէ հետեւեալը. «Ասանկ արհեստը գետնին տակն անցնի, ինծի պէտք չէ ասանկ շահը... Ես կառքս եւ ձիերս

նը ճանչցուի նաեւ որպէս «Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Յատակ է որ թուրք իշխանութիւններու նպատակը Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսը՝ նորանոր պաշտօններով օժտելը չէր: Անոնց նպատակը հայ եկեղեցական թեմերը անգլուխ ձգելն էր: Որովհետեւ Արեւմտեան Հայաստանի, Աղթամարի եւ Կիլիկիոյ թեմերու մէջ կային 2621 հայ եկեղեցիներ եւ 3324 հայկական թաղեր: Կային նաեւ 286 Հայ Կաթոլիկ եկեղեցիներ եւ 134 Հայ Բողոքական ժողովարաններ:

Այս թիւերը ստոյգ են եւ վաւերական որովհետեւ առնուած են Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի վիճակագրական աղբիւրներէն:

Շատ յստակ էր թուրք իշխանութիւններու մտադրութիւնը: Անոնք կ'ուզէին այս բոլոր եկեղեցիներու հաւատացեալ ժողովուրդը անջատել իրենց եկեղեցական վերին մարմիններէն եւ հոգեւորական առաջնորդներէն եւ դասէն:

Անոնց նպատակը՝ Հայ ժողովուրդը անգլուխ եւ անտէր ձգելն էր որպէսզի աւելի դիւրին ըլլար զիրենք իրենց տուններէն տեղահան ընելը, տարագրելն ու բնաջնջելը: Ճիշտ այդ էր որ ըրին անոնք տարաբախտաբար: Արեւմտեան Հայաստանի եօթը հայկական բնագաւառներու, Պոլսոյ եւ Փոքր Ասիոյ այլեւ այլ հայաբնակ քաղաքներու

եւ Կիլիկիոյ մէջ ապրող հայ ազգաբնակչութեան թիւը եղած էր ըստ հետեւեալին.

Արեւմտեան Հայաստանի եօթը հայկական գաւառներուն մէջ բնակող հայերու թիւը եղած է 1,710,000: Պոլսոյ եւ Փոքր Ասիոյ հայաբնակ քաղաքներու մէջ բնակող հայերու թիւը եղած է 813,000: Կիլիկիոյ մէջ ապրող հայերու ստոյգ թիւը եղած է 452,000:

Հայ ժողովուրդի վրայ գործադրուած ազգասպանութեան նախապատեմ ընդհանուր թիւը եղած էր 2,975,000: Շեշտել պարտինք որ հայկական բնագաւառներու եւ Կիլիկիոյ ընդհանուր բնակչութեան եօթանասուն առ հարիւրը հայեր էին: Այս թիւերու ստուգութիւնը հաստատած ենք թէ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի վիճակագրական աղբիւրներէն եւ թէ պատմաբան Պրն. Բիւզանդ Եղիայեանի պատրաստած վաւերագրական աղբիւրներու բժախնդիր ուսումնասիրութեանց վրայ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱՅ ՍՏՈՅԳ ԿՈՐՈՒՍՏԸ ԹՈՒՐՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՊԷՍ ՀԵՏԵՒԱՆՔ

1915 թուին մինչեւ 1919 տարեթիւը թուրք իթթիհատականներու ձեռքով նահատակուեցան 1,870,000 անմեղ հայեր: Այս թիւին վրայ հարկ է որ աւելցնենք նաեւ Սուլթան Համիտի գործադրած ջարդերը հայերու վրայ, 1896-ին 350,000 էր: Այդ թիւով հայեր կոտորուեցան ներքին նահանգներու մէջ: Աւելորդ կը սեպենք հոս չիշել նաեւ Սասնոյ եւ Պոլսոյ կոտորածները: Թուրք իթթիհատականներու առաջին ցեղասպանական արարքը գործադրուեցաւ 1909 թուին Ատանայի եւ Կիլիկիոյ մէջ որուն զոհ գացին շուրջ 40,000 անմեղ հայեր:

Ներկայացուող այդ թիւերէն եթէ մենք միայն 340,000 աւելցնենք ցեղասպանութեան տարիներուն կատարուած նահատակութիւններու 1,870,000 թիւին վրայ, այն ատեն հայ ժողովուրդի մարդկային կորստեան ստոյգ թիւը պէտք է նկատենք 2,210,000:

Մենք ազգովին այս թիւն է որ պարտինք յայտարարել աշխարհին որպէս ցեղասպանութեան ճշգրիտ թիւ:

Բացի մարդկային վերոյիշեալ կորուստին մենք կորսնցուցինք նաեւ շուրջ 3000 հայ եկեղեցիներն ու վանքերը: Կորսնցուցինք մօտաւորապէս 3000 հայկական դպրոցներ հինգ հազարէ աւելի հայկական թաղեր ու ազգային կալուածներ:

Եւ որ ամենէն կարեւորն է կորսնցուցինք Արեւմտահայաստանն ու Կիլիկիան: Կորսնցուցինք մեր Հայրենիքը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԵՂԱՎԱՆՈՒԹԵԱՆ

Թուրք իշխանութիւններ ոստիկանական եւ զինուորական բիրտ ուժերով ստիպեցին եւ բռնադատեցին հայ բնակիչներուն լքել իրենց հօրենական օճախը: Լքել իրենց չորահազարամեայ հայրենի-

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՏԱՄԵԱԿ

ԹՈՒՐԲ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՄԹԻՆ ԴԱԻԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱՅ 1915 ԹՈՒԻՆ

Շարունակում էք 25-ին

քը եւ հարիւրաւոր մղոններ քալել ստիպւոյ տարին զիրենք դէպի Սուրիոյ անապատները, դէպի տեղահանեալ հայերու վերջին սպանդավայրը, դէպի Տէր Զօր:

Պատահած է դպէք երբ տեղահանուելի չուզող շատ մը հայեր ապաստանած են հայ եկեղեցւոյ մը մէջ, բայց թուրք դահիճ ոստիկաններ դիւանդին հրէշայնութեամբ եկեղեցւոյ մէջ հրկիզմամբ սպաննած էին այդ հաւատացեալ հայերը:

Այս տաժանելի տարագրական ճամբորդութեան ընթացինք շատ էր թիւը անոնց որոնք սնունդի եւ ջուրի պակասէն կը մահանային ճամբու ընթացքին:

Շատ էր թիւը անոնց որոնք գետնամոյն կ'ըլլային: Նաեւ շատեր որոնք չղիմանալով յարուցած տառապանքներուն կամուրջ կերպով ինքզինքնին գետը կը նետէին:

Դժուար պիտի ըլլայ նկարագրել այն գազանային ոճրարքները որ թուրք ճիւղներ գործադրեցին հայ անմեղ ժողովուրդի վրայ:

Պատահականօրէն մեզի հասած են օտարներու կողմէ առնուած շարք մը նկարներ, ուր կ'երեւին երիտասարդ հայ մայրեր իրենց մանկատի երեխաներուն հետ անթուրթեան մահացած: Նկարներ կան գլխատուած հայերու, գետնամոյն եղած կիներու, հրացանագարկ դարձած հայ մարդոց:

Մեզի հասած բոլոր նկարներու մէջ ամենէն սահմրկեցուցիչը խաչուած տամեակ մը մատաղատի հայ անմեղ աղջիկներու նկարներն էին: Այս անմեղ հայ աղջիկները որովհետեւ մերժած էին ենթարկուելի ստահակ թուրք ոստիկաններու քմահաճոքներուն, այդ պատճառով ալ աներեւակայելի անգթութեամբ եւ ստորնութեամբ մը որուն նմանը դժուար է պատկերացնել այդ թուրք ճիւղները խաչափայտերու վրայ քամած էին այդ անմեղ հայ կոյս աղջիկները, եւ ապա խաչ հանած էին զիրենք:

Շուրջ երկու միլիոն հայերու տեղահանութեան աղեխարշ եւ տառապալից դրուագներէն մէկն ալ հայ «մանուկներու վաճառումը»ն է:

Սարսուզդեցիկ եւ սիրտ բզկտող այդ եղբերական պատահարները դժուար է նոյնիսկ երեւակայել որ կրնան տեղի ունենալ:

«Սէպիլի վրաններուն տակ» վերնագրի տակ մեր ականաւոր եւ մեծատաղանդ գրագէտ Երուսանդ Օտեան նկարագրած է այդ կսկծալի դէպքը գրական դիւրագագ տողերով եւ ականատեսի վկայութիւններով:

Կը ներկայացնէք հոս այդ տխուր դրուագը եւ ինչպէս մեծանուն գրողը ինք կը նշէ կարելի չէ կարդալ գայն, առանց «տառապելու»:

ՍԷՊԻԼԻ ՎՐԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Տարագրութեան արհաւիրքներէն յիշողութեան մէջ անջնջելի մնացած սարսուցեցիչ եղբերապատկերներէն մին է մանուկներու վաճառումը Սէպիլի վրաններուն տակ:

Սէպիլ... այդ անունը ինչ անդոսական սարսափով կը համակէր հէպտարագիրներու հոգիները: Հալչպէն մէկ ժամ հուռ, դէպի Արեւելք, ընդարձակ դաշտ մըն էր

Սէպիլը ուր կը դրուէին Հալչպ հասնող տարագիրները, հոնկէ ալ Տէր Զօր քշուելու համար: Դէպի դժոխք տանող առաջին կայարանն էր ան:

1915 Դեկտեմբերի վերջերը երբ հասաւ Սէպիլ, դաշտը ծածկուած էր հազարաւոր վրաններով, որոնց մէջ խճողուած էին տարագիրները, խարբերդի, Մալաթիոյ, Տիգրանակերտի, Պարտիզակի, Ատաբազարի, Պրուսայի, Ա. Պոլսոյ, Ռոտոսթոյի, Ատանայի, Այնթապի, Քիլիսի, Գոնեայի եւ էնկիւրիի կողմերէն քշուած: Շատերը ճամբան կողոպտուած էին քիւրտներու, արաբներու կամ թուրք չէթէներու կողմէ, եւ ոմանք մնացած էին մօրէ մերկ վիճակի մէջ:

Թիֆլիսը, թանչքը, Չերմը կատաղօրէն կը հնձէին օրական 5-600 կեանքեր: Աղբահաւաք կառքերու առուուրէն մինչեւ իրիկուն, վրանէ վրան կը պտտէին, մեռել ժողովելու: Ամէն մէկ կառքի մէջ 10-12 դիակ կը դիզուէր: Եւ կը պատահէր որ հովեվարքներ մեռելներու հետ խառն ի խառն կառք կը նետուէին, իրենց իսկ տէրերուն հաւանութեամբ: Շատ բարակը նայելու ատենը չէր... քանի մը ժամէն անանկ ալ պիտի մեռնէր, անանկ ալ... մութը կը կոխէր ու կառքերը պիտի դադրեցնէին իրենց երթեւեկը, պէտք էր օգտուել առիթէն:

Եւ որովհետեւ հագուստի ու ճերմակեղէնի պէտք կար, մեռելները կը մերկացուէին ու այնպէս կը նետուէին կառքերու մէջ: Ու այս անուշիւրէն եղբերական բաները կ'ըլլային ամէնուս աչքին առջեւ, անբանացած անտարբերութեան մը մէջ:

Բայց ամենէն սոսկալին մանուկներու վաճառումն էր: Գնորդները կառքով Հալչպէն կու գային եւ ընդհանրապէս արաբ եւ հրեայ կիներ էին: Կառքէն կ'իջնէին ու վրանները կը շրջէին հարցնելով. - Ծախու տղայ կա՞ն...

Մայրեր որոնք տակաւին պատառ մը հաց ունէին ուտելիք, սոսկումով կը վանէին զանոնք. բայց ուրիշներ անօթիներ, լացուկոծով, անէծքով իրենց զաւակները կը յանձնէին քանի մը մէծիտիլէի փոխարէն: Գնորդները որոնք հետեւին նարինջ ու սիմիթ բերած էին, փոքրիկ աղջկան ձեռքը նարինջ մը կուտային որովհետեւ այդ կիները միշտ աղջիկներ ծախու կ'առնէին ու խեղճ անօթի փոքրիկը կը յարձակէր նարինջի փոքրիկը կը սկսէր կեղեւով միասին կրծել: Իսկ սիմիթը ցոյց կու տային միայն, ու կ'ըսէին.

- Այս սիմիթն ալ կառքին մէջը կ'ուտես:

Ու սովահար աղջնակը, գառնուկի մը պէս որ բուռ մը խոտին ետեւէն կ'երթայ, կը հետեւէր կիներուն, մանաւանդ սիմիթին, լալով, եւ ատեն ատեն ետին մայրիկին նայելով...

Քանի քանի անգամներ խելաչեղ մայրը իր զաւակը վաճառելէ ետքը, վագած ու կառքին մէջէն ետ յափշտակած էր գայն, դրամը գնորդներուն երեսին նետելով: Բայց աւելի յաճախ գոհացած էր ցաւին մէջ զալարուելով, եւ թողած որ կառքը հեռանայ իր մայրական սրտին ու աղիքներուն վրայէն թաւալելով:

Տեսայ մայր մը որ իր երկու զաւակները վաճառելէ քիչ վերջը



խենթեցաւ եւ ստիպուեցան հիւանդանոց փոխադրել:

Տարագրութեան չարչարանքներուն ամենէն տաժանականը մանուկներու այս խլումն էր իրենց մայրական ծոցերէն: Եւ այն մայրերը որոնց զաւակները յափշտակած էին բռնի, այնքան չէին ազդուած՝ որքան անոնք որ, իբր թէ կամովին, իրենց տղաքը կը վաճառէին:

Անոնք որ տարագրութեան այս անարկու կեանքը ապրեցան կրնան ըսել Երեմիա Մարգարէին պէս. «Ես այն մարդն եմ որ Տառապանքը տեսայ»:

ՏԵՐ ԶՕՐ (ՏԵՐ ԷԶԶՕՐ)

Տեղահանուած երկու միլիոնէ աւելի հայ ժողովուրդի դէպի Տէր Զօր ուղեւորութիւնը լի էր անվերջ մահերով եւ ծրագրուած սպաննութիւններով, թուրք իշխանութեանց ենթակայ չարադարաներու եւ ոճրագործներու ձեռքով:

Անվերջ քալելու անկարող տարագիր ուղեւորներէն ամէն օր հարիւրաւորներ կը մահանային: Բազմահարիւր այլ աքտորեալներ եւս կը մահանային ամէն օր հիւանդութիւններէ, սնունդի եւ ջուրի չգո-

յութենէ:


Ամէն օր կրկնուող այս բազմահազար հայ տարագրեալներու մահերն ու սպաննութիւնները եղան պատճառ որ երկու միլիոն տարագրեալ հայերուն միայն տասը առ հարիւրը համին Սուրիոյ անապատները եւ Տէր Զօր: Մօտաւորապէս երկու հարիւր հազար էր թիւը հոն հասած դժբախտ եւ անպաշտպան մեր հայ եղբայրներուն եւ քոյրերուն: Այս տարաբախտները Եփրատ գետի վրայ հաստատուած կամուրջին երկու կողմերը գտնուող անապատներու մէջ անխնայ անգթութիւններով սպաննուեցան, թուրք ոստիկաններու եւ ստորին մարդասպաններու ձեռքով:

Երկու միլիոնէ աւելի այս տարագրեալներէն ողջ մնացին հազար հինգ հարիւր որբեր եւ կիներ միայն:

«ԱՐՇԱԼՈՅՍԻՆ ՄԱՅՐԸ»

Տէր Զօրի մէջ պատահած այս սիրտ ճմլող տխուր դրուագին ականատես գրողն է մեր մեծատաղանդ գրող Երուսանդ Օտեանը: Տէր

Շար.ք էք 31



"Turkey had nothing in its past to be ashamed of" Turkish Prime Minister Recep Tayyip Erdogan

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՏԱՍԵԱԿ

ՏԻՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ԱՊՐԻԼ Է

ԼԻՏԱ ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆ

Ապրիլ է: 1915. Հայոց երկնակամարը կը մթազնի: Վստահ եմ իւրաքանչիւր հայ իր մէջ կը կրէ Հայոց Յեղասպանութենէն ողբերգական դէպքեր:

Կողակիցիս՝ Յակոբին, երկնազնացութենէն մէկ տարի ետք, կը վերջիչեմ իր նահապետական գերդաստանը, անոնց հաւատքն ու սէրը առ Աստուած, եւ խիզարի նահատակութիւնը Քրիստոսի սիրոյն:

Վառվառ, ամուսնացած էր Խարբերդի Խուլայ գիւղին աւագ քահանայ՝ Տէր Եղիա Տէր Եղիայեանի հինգերորդ որդւոյն՝ Յարութիւնին հետ: Քահանային չորրորդ զաւակը, Կարապետ (Կեսարայր) Ամերիկա մեկնած էր աշխատելու, իր կինը եւ երկու զաւակները յանձնելով ընտանիքին խնամքին:

Հինգ հարսեր եւ զաւակներ շատ սիրով կ'ապրին այս նահատակական տան մէջ, ամէն ոք ունէր իր գործը: Քահանան շատ սիրուած եւ յարգուած էր, իր ընտանիքէն եւ իր ժողովուրդէն:

1915, Ապրիլ, վախ ու սարսափ կը տիրէ ամէն կողմ: զանգուածային կոտորած: Ծրագրուած էր Հայ ազգը բնաջնջել: Թուրքեր կը մտնեն հայ տուններէ ներս, եւ կը հաւաքեն, այլ-մարդիկը: Վառվառ կը պահէ իր ամուսինը, իրենց տան կից եկեղեցիին խորանին ետեւ, միւս տղաքն ալ կը պահուին տարբեր անկիւններ:

Թուրքերը կը կոտրեն այս տան դուռը, կը պոռան, քահանային երեսին, «Դուրս հանէ տղաքդ, եթէ ոչ կը մեռցնենք քեզ»: Հայր իմ, ինչպէս կրնար յանձնել իր զաւակները անգուլթ, անխիղճ մարդոց սեւ ձեռքերուն: Թուրքերը կը փնտռեն այս տան ամէն անկիւնները, չեսոյ կը մտնեն եկեղեցի, կը գտնեն տղաքը, դուրս կը հանեն, պատին քով կը շարեն: Անոնց աչքերը կը կապեն, հարուածներ կ'իջեցնեն, կը չաչարեն այս անմեղները: Ապա կը գնդակահարեն: Վառվառ կը շարունակէ պատմել դէպքը. ահաւոր է, իր ողբերգական, ցնցող մանրամասնութիւններուն մէջ. «Բոլորս հոն էինք, բարձրաձայն կը հեծկլտայինք: Քահանան «Չաւակներս» կը պոռար, փոքրիկները «Հայրիկ, կ'աղաղակէին: Հարսերը կ'ողբային, մինչ անոնց անշունչ մարմինները ինկած էին գետին»: Թուրքին գոռ ձայնն էր, «Ամէն բան թողուցէք ու ետեւէս քալեցէք»:

Ինչպէս կրնար քալել հայր մը, երբ սրտահատորներուն դիակները փռուած էին փողոցը: Ինք, որ այնքան մեռելներ թաղած էր, անթաղ մնացին իր անուշ զաւակները:

Կը քալէ ժողովուրդը, կորաքամակ ձերուներ, կորիճ երիտասարդներ, մտաւորականներ, մեծեր ու փոքրիկներ: Օրօրոցի մանուկներ երբեմն կը խլուէին մայրական գիրկերէն: Ժողովուրդը յոգնած, անօթի ու ծարաւ է, չեն գիտեր ո՞ւր կ'երթան: Կը հասնին գետի մը եզրերը: Թուրքը կը գլանայ կաթիլ մը ջուր գնելու իրենց ծարաւած բերնին, կ'իջնան գետեզրերը ու ժասպառ:

Այս միջոցին, երիտասարդ մը վազելով կու գայ քահանային քով եւ կ'ըսէ. «Քէշիչ Պէյ, լսեցի ձեր մասին, եկայ որ ձեզ ազատեմ: Ես,

այն պատանին եմ, որ վրաս աղօթեցիր եւ ես բժշկուեցայ, միայն թէ ուրացիր Քրիստոսը»: Քահանան մնացած ոչժը հաւաքելով ոտքի կ'ելլէ ու կ'ըսէ. «Ո՛վ անգուլթ, Թուրքի զաւակ, գնա՛ հեռացիր, աչքերուս առջեւէն, ի՞նչպէս կրցաք չարչարել եւ գնդակահարել իմ չորս անմեղ զաւակներս, որոնց դիակները փողոցն են դեռ: Մենք չենք ուրանար Քրիստոսը, մահը անոյշ է ինձի»:

Դահիճները հոն են, կը յարձակին քահանային վրայ, կը ծեծեն գինք, մօրուքը կը փետտեն: Ինք լողալ գիտէր, նախ մէկ թեւը, ապա միւսը կ'անջատեն մարմինէն: Արիւնը կը հոսի, բոլոր ժողովուրդը եւ իր ընտանիքը կուլ լային, քահանան կ'ըսէ. «Ո՛վ հարսերս, թողնիկներս եւ ժողովուրդս, ձեր հաւատքը մի՛ մոռնաք, Քրիստոսը մի՛ ուրանաք, մնացէ՛ք հայ, մնացէ՛ք Քրիստոնեայ»: Վերը, երկինքը, կը տեսնուինք»: Եւ Թուրք գինուորը գինք կը նետէ Եփրատ գետի ջուրերուն: Վառվառ կը շարունակէ պատմել խեղդուած ձայնով, ամուր, ձեռքս սեղմելով, չենած իր ձեռնափայտին եւ պարբերաբար ձախ ձեռքով չորդառատ արցունքները սրբելով, կ'ըսէ. «Յանկարծ քահանային գլուխը տեսանք ջրուրերուն վրայէն եւ ըսաւ. «Քրիստոսը մի՛ ուրանաք»: Այդ ձայնը մի՛նչեւ այսօր ականջներուս մէջ է»: Մեծ հարսը չի կրնար դիմանալ այսքան «գուլթ»ին, իր երկու փոքրիկներուն ձեռքէն բռնած կ'ըսէ. «Յանուն Հօր եւ Որդւոյն եւ Հոգւոյն Սրբոյ ամէն», եւ կը նետուի գետը: Իրեն կը հետեւին շատեր: Անգուլթ թուրքին գոռ ձայնն է. «Քալեցէք»: 35 տարեկան Վառվառ, գիրկը



Տէր Եղիայեան ընտանիքը

ունէր վեց ամսուան զաւակը՝ Գոհարիկը: Կաթը քաշուած էր: Մանուկը կու լար, կը պաղէր, անօթի ու ծարաւի էր: Ճամբուն եզերքը դիակներ կային, կամաց մը, շարքէն դուրս ելաւ, մօտեցաւ անոնցմէ մէկուն որ լաթ մը առնէ իր ձագուկը ծածկէ: Խեղդուակ ձայն մը կը լսէ. «Վառվառ, իմ լաթս մի առներ, կը մսիմ»: Կը ծռի տեսնելու, թէ ո՞վ էր: Ինչ տեսնէ, իր ներք, Խուճարն էր, որ վերջին շունչը կը փչէր: Արցունքով կը հեռանայ անոր քովէն:

Գոհարիկ տօգոյն էր: Մահը մօտ էր, կը դողար: Հոն ծառ մը կար, անոր շուքին կը պառկեցնէ մանուկը, կը խաչակնքէ եւ կ'աղօթէ: Տէր Յիսուս Քրիստոս, քեզի կը յանձնեմ հրեշտականման ձագուկս, գիտեմ իրեն լաւ հոգ պիտի տանիս: Երանի ես ալ հետը մեռնէի, քեզի եւ գերդաստանիս միանայինք միասին: Կը համբուրէ մանուկին պաղ ձակատը: Երկու թուրք գինուորներ գինք կը տեսնեն, եւ շարքէն ներս կը հրեն:

1919 զինադադար կը հռչակուի: Կարապետ, Ամերիկայէն կը վերադառնայ: Երկար փնտրութիւն ետք կը գտնէ եղբօր կինը եւ ազգական մը, Ուրֆայի որբանոցին մէջ: Կ'ամուսնանայ Խարբերդցի քահանայի մը աղջկան հետ՝ Նուարդ Տէր Պողոսեան, որ մէկը չունէր: Աստուած կ'օրհնէ այս ընտանիքը, մանչ զաւակով մը, Յակոբ Տէր Եղիայեանով: Կարապետ կը լծուի գործի, Ամերիկայէն բերած դրամով շատ հաջեր կ'ազատէ Թուրք տուններէն: Վառվառ, նախ Հայկազ կու գայ, ապա Ամերիկա կը հաստատուի: Այս հաւատացեալ մամիկը, 108 տարեկանին, մեկնեցաւ այս աշխարհէն, երկինք: Իր կեանքին վերջին չորս տարիները ապրեցաւ մեր տան մէջ: Իր ներկայութիւնը մեզի, մեր զաւակներուն եւ իրենց ընտանիքներուն՝ օրհնութիւն էր: Ինք ալ վայելեց մեր բոլորին սէրն ու յարգանքը: Յաճախ կը պարպէր իր սիրտը անցեալի սահմուկեցուցիչ

Շաք-ը էջ 29

ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Մարդկային մշակույթի արարման հնագույն օրրաններից՝ Միջագետքի Սուժերները, իրենց արձանագրություններում վկայել էին, որ դիմած էին եղել հիւսիսի լեռնաշխարհի «Դրախտի Երկրի» մարդկանց իրենց փրկելու թշնամիներից:

Լեռների երկիր Հայկական Սրբազան լեռնաշխարհը, բարձրացել է դէպի երկինք աստղերից լոյս քաղելու, արեւի կրակը բերել իր աշխարհում հրաբուխներ վառելու Սիփանի, Նեմրուծի, Թոնտրակի գագաթներին: Լեռների լանջերին, ստորոտներին դաշտեր էին բացուել: Երկնքի աստղերից հազար ու մի հունտեր էին թափուել, որ ցորեն ծլէր այնտեղ, ծիրանների, խաղողի որթատունկ բուսնէին այնտեղ, ծաղիկ լինէր այնտեղ, անմահութեան ծաղիկ՝ Փրափոն, հուրճէր լեռների լանջերին: Աստուածները, տիեզերքի իրենց տաճարներից «Կենաց Ծառ» էին բերել այդ լեռնաշխարհի, որ նրա մարդիկ անմահ լինէին: Ջուր էր ժայթքել լեռների կողերից, հոսել հարաւ, մայրացնելու հողը նրա արտերի: Դրախտի գետեր էին յորջորջել նրանց:

Աստուածները, Աստուծոյ արարչութիւն եղաւ այնտեղ, դրախտ արարուեց, մարդ եղեւ այնտեղ: Դաշտերում ցորենի արտեր ծփացին: Ծաղկունքի ծիածան վառուեց լեռների լանջերին: Ծառեր յառնեցին, Ծիր կաթինի արեւներից ծիրանների եկաւ նրա դաշտերին: Խաղող հասունացաւ, որ նրանով արբենային, իրենց արարիչին փառաբանէին:

Բազմացան մարդիկ, մի խօսքով բարբառեցին: գնացին ուրիշ աշխարհներ: Այդ դրախտիկ լեռնաշխարհի սրտում մարդիկ շարունակեցին կառուցած մնալ նրա լեռներին, դաշտերին, հողին: Աստուածները արարման ոգու հեք հոսեցին նրանց արտերին: հող մշակեցին, լեռների կողերի ապարներից մետաղներ ձուլեցին: Լեռների լանջերին, դաշտերում տներ պատեցին, շէներ արարեցին:

Արարչութեան երկիր: Տիեզերքից աստուածներ էին իջել, որ պողաբերութեան արարում լինէր այնտեղ: Մայրութեան լոյս վառուէր այնտեղ, որ մայրանար հողը, մայրանային ծառեր, պարմանուհիներ: իրենց սրտերում սիրոյ գեղում լինէր, քաջութիւն յորդէր, իմաստութիւն հոսէր իրենց մտքերին: Ճշմարտութիւն, բարութիւն լինէր իրենց աշխարհում: Երգ ու բանաստեղծութիւն երկնէին, որ փառաբանէին աստուածների արարչութիւնը:

Այդ մարդիկ հազար, հազար տարիներ արարման հեւքով արբեցան իրենց լեռների աշխարհում: Արքաները յիշատակութեան արժանի քաջութեան բազում գործեր կատարեցին: իրենց լեռնաշխարհի սահմանները տարան այնտեղ, որտեղ իրենց քաջերի գէնքերը կը հասնէին: Յաղթական ճակատամարտեր մղեցին իրենց լեռներ հասած թշնամու դէմ: Ազատութեան կռուի ելան, իրենց յաղթական առաջնորդի անունով

«Հայ» կոչեցին իրենց, լեռնաշխարհը «Հայաստան Երկիր Դրախտավայր»: իրենց, լոյսի ու ճշմարտութեան աստուծոյ «Արեւորդիներ» կոչեցին:

Ասիայի տափաստաններից, անապատի դաժանութիւնը իրենց սրտերում խաշնառած ցեղի մարդիկ արշաւում էին արեւմուտք, հրդեհում իրենց ճանապարհը: Հասել էին հայոց Սրբազան Լեռնաշխարհ, տիրել նրա դաշտերին, շէներին:

Այդ ցեղի գորչ ստուերը պատեց երկիրն հայոց սրբազան Լեռնաշխարհի: Դաժան էին, Աստուած նրանց սրտերին մի պողոնց իսկ գութ չէ կաթել: Հազար, հազար շէների մարդկանց արարման հեքն էին յափշտակել: Ստրկացրել էին «Վերածնունդ» արարած աշխարհի մարդիկ: Ջուրկ դատկաան ատենաներում վկայութիւն տալու իրաւունքից, յանցապարտ համարուել իրենց ցեղի երկու մարդկանց վկայութեամբ: Հարկ, որ աշխարհում որեւէ երկրում, որեւէ ժամանակ գոյութիւն չէր ունեցել, «Որդու» հարկ էին սահմանած եղել: Նրանց տարել «Մետրեաններ», գինուոր, «Ենիշէրի» գինուոր դարձրել:

Պայթեց հայոց ընդվզման ոգին, Վահագնի եղեգան բոցի կրակալոյսի ջահեր վառուեցին իրենց հոգիներում: Իրենց ցեղի Նահապետի ոգու կանչով Վասպուրական, Տարօն աշխարհներում ազատութեան շնորհներ հնչեցրին: Շինականները գէնք վերցրին, Սասունի, Մուշի, Շատախի լեռներում ընդվզման կռիւ եղաւ: Ջարկին թշնամուն, ընկան, մարտն էր անհաւասար: Սուլթանը երեք հարիւր հազար հայերի արեամբ կարմրեցրեց Սասուն ու Մուշ լեռները: «Կարմիր» կոչեցին նրան: Իսկ ինչո՞ւ իր իսկ արեամբ նրան չկարմրեցրին:

Իրենց «Երիտասարդ Թուրքեր» յորջորջած խառնածին հրեայ թուրքեր, գնչու թուրքեր տապալել էին Սուլթանին: «Հաւասարութիւն, Եղբայրութիւն, Ազատութիւն» նշանաբանով գաւթել իշխանութիւնը: Հայեր հաւատացին թուրքին, ափսոս: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ իրենց խոհուն «Մեծեր» ի մասստութիւնը չկարողացաւ կանխորոշել նրանց խարդաւանքը: Նրանցից մէկը պիտի ասէր, որ «Խաբուեցինք»: Եւ տանուլ տուին...:

Աշխարհի ազգեր պատերազմի դաշտերում յօշոտում էին իրար, թուրքն էր պատերազմում Գերմանի կողքին: Պահն էր յարմար իրագործելու իշխանութիւն եկած շնագայլերի վոհմակի 1912 թուականի Սելանիկի ժողովում ծրագրուած որոշումը, հային արմատախիլ անել իր բնօրրանից, արմէնների ցեղը սպաննել: Իսկ հայ մեծեր, թողած հայոց աշխարհի շէները իրենց կամքին, գինարբուքի էին նստած եղել նրանց հետ, կռիւ արել նրանց խորհրդարանի մի քանի աթոռների համար:

Գարնան մի գիշեր կալանեցին հայոց իմաստուններին, իրենց վառման սրտերում դեռ լեցուն քերթուածներ արարող բանաստեղծներին: Տարան բանտեր, առանց դատի սպաննեցին: Ներքին Գործերի նախարար Թալէաթը հրովարտակ

էր արձակել, հեռագիրներ յղել կառավարիչներին մարելու հայոց շէների ծխանների լոյսը: Առանց խղճահարութեան ու գութի տեղահանել նրանց բնակիչներին, կարաւաններ դարձրած տանել անապատներ: Քայլեցին, ընկան, սպանուեցին: Ում սրտում քաջի արիւն էր հոսում, ով կարողացել խաղի բերել թշնամուն, ողջ էր մնացել: Կարմիր ձիւն էր տեղում հայոց լեռնաշխարհում, մթնել էին լեռները, խաւարել էին շէները հայոց: Ո՞վ էր փրկելու իրենց, սպաննած էին եղել իրենց աշխարհին արարչութիւն հոսած հին աստուածներին, ափսոս:

Գարուն էր, ո՞ւր էիք գնում: Ձեր սրտերում գարնան արեւի կրակը չէ՞ր շառաչում: Գարուն էր իջել ձեր աշխարհին, դաշտերում ցորենի ծովեր էին, այգիներին ծիածան էր իջել: Արմէնների քաջութեան ու կռուի Վահագնի ակների կրակալոյսը չէ՞ր վառում ձեր հոգիներում: Ինչո՞ւ ձեր հոգիներում հանգեր էր նախնիների կռուի կորովը: Ինչո՞ւ ձեր լեռներում կռուի շնորհներ հնչեցնելու փոխարէն փակուեցիք ձեր նոր հաւատքի տաճարներում: Եւ ողջակիցուեցիք խաչերի հետ, խաչի պաշտամունքի հետ, խաչուեց երկիրը հայոց... սուրն աւելի արդար չէ՞ր քան խաչը: Ինչո՞ւ ձեր պատած տները որպէս վահան գրկած չմարտնչեցիք, այրէիք նրանց, այրուէիք նրանց պաշտպանական կռիւներում, յաւիտեան միաձուլէիք մայր հողին: Կռուի բոցերում թող այրուէին շէները հայոց աշխարհի, արմէնների քաջութեան ոգին թեւածէր աշխարհներ: Եւ դեռ կանչում ենք աշխարհին, որ ջարդել են մեզ, ցեղ մեր սպաննել: Ինչպէ՞ս են միլիոններ սպանուել առանց կռուի ելնելու... ափսոս, ինչո՞ւ այդպէս:

Հայոց լեռներին խաւար էր իջել: Շէները չէին թարթում լոյսով, նրանց տների ծխանները մարել էին, կոտրել էին «Գերանները», փլել էին որմերը, բաց պատահաններից սուլում էր քամին: Դաշտերն էին լերկ, քամին հողը շալկած տանում հեռուներ, կոտրատուած այգիներ, սպաննուած ծառեր: Գետերն էին վազում կարմիր կապած: Լուել էին եկեղեցիների գանգերի ղողանջները, մարել էին արարիչին փառաբանելու սրբազան վարդապետների շարականների տիեզերաշունչ երգերի հնչիւնները, բակերում այրուած մատենաներ: Շէների հազար, հազար դպրոցները լուռ էին, մանչեր չէին վազում նրանց բակերում: Կործանել էին արարչութիւնը երկրի, կործանուել էր հազար, հազար տարիների հայոց լեռնաշխարհի արարչութեան ոգու հէքեթը: Ինչո՞ւ այդպէս եղաւ, ափսոս: «Դրախտիկ Երկիր», անցորդ երբ անցնես նրա ճամբաներով, գնայ փրած վանքերի, կործանուած շէներին պատերին հայիր, սրբիր նրանց որմերի արցունքը, համբոյր շաղիր նրանց

վէմերին, մեղմիր ցաւը նրանց, արդեօք կը ներե՞ս քեզ...:

Հայեր պահանջում են իրենց լեռները, Նեմրուծի գագաթին իրենց հին աստուածների սրբավայրը, իրենց Հայկ Նահապետի ժառանգ թողած հողը: Պահանջում ենք նրանց, ովքեր դեռ պիտի գային իրենց աշխարհ, որ այն լցուէր միլիոն, միլիոն հայերի արարման հեւքով: Եւ ո՞վ իմանար դեռ քանի իմաստուններ կը գային արմէնների հանձարի լոյսը փայլատակելու այս մոլորակին: Աստուածացած Հայկ նահապետը իր Ծիր կաթինի աստղաբոյլից աստղ է ճամբել հայոց աշխարհ տիեզերական ներուժ հոսելու: Իրենց տուն են բերել գերուած մի որդուն, եւ ո՞վ իմանայ երբ են կարաւաններ դարձած վերադառնան երկիր: Իրենց պատմութիւնը դեռ աւարտուած չէ, հայոց սահմանը այդ է, որ ճանաչենք, նրա սահմանները ամէն հայ իմանում է որտեղ է վերջանում, ոչ...: «Բաբո, ո՞րն է մեր հայրենիք, սահմանը նրա» հարցնում էր հայ իմաստունը, երեւի պիտի պատասխանէին՝ որտեղ որ հայու արարման լոյսն է շողում:

Լուել էին թնդանթները, խորտակուել էր Օսմանի կայսրութիւնը: Մարդու հանդէպ յանցագործութիւն կատարած ճիւղները փախել էին: Հայ վրիժառու քաջեր, գնացին նրանց հետքերով, գտան նրանց իրենց Սթանպուլում, Հոլմում, Թիֆլիսում, Պերլինում, գարկին նրանց, շառագունեցին նրանց ճակատները իրենց պիղծ արիւնով: Երկնքում աստղիկներ դարձած նահատակների հոգիները իրենց թրթուուն ժպիտների լոյսերը ցողեցին նրանց սրտերին:

Ապրիլ 24, աշխարհի հայեր լոյս են վառում իրենց ցեղի նահատակների հոգիներին: Իրենց մայր ոստանի բլուրի գագաթին երկինք նայող քարէ բաց խորան են պատել: Հայոց տասնըերկու աշխարհների սիւներն են խոնարհուել խորանում վառուող կրակին: Մայր ոստանի միլիոն հայեր լուռ քայլում են, գնում խորան իջնում, ոչ թէ աղօթելու, այլ պատարագելու մարտիրոսացած հոգիների տառապանքը: Յուշի պատարագի եկած հայերի դէմքերին ճամբաներին ընկած նահատակների, մանչերի տառապանքի ցաւի խոհն է իջած: Կրակի շուրջը մարդահասակ ծաղիկներ, ժպտում են լոյսին, ժպտում այնտեղ իջած նահատակների ստուերներին: Ո՞րտեղ են տանել այդքան ծաղիկներ: Հայոց հին աստուածները, Նեմրուծի գագաթի սրբավայրից բարձրացել են հայոց քարէ սիրտ Արարատի գագաթ՝ բուռ, բուռ ձիւն նետում հայերի վրայ, որ հովանար նրանց սրտերի մըմուռը:

Քարէ սիւների կողքին, հայոց յաւերժութեան արեւը գրկած արծաթափայլ սիւն է ճախրում դէպի իրենց Հայկ Նահապետի համաստեղութեան աստղեր:

ԱՊՐԻԼ Է

Շարունակուած էջ 27-էն

պատահարներուն մասին խօսելով, որոնք անմոռանալի են, մեր սրտին եւ մտքին մէջ:

Քիրստոսով ննջած մեր նահատակներուն յիշատակը միշտ վառ պիտի մնայ ամէն հայու սրտին մէջ: Յարգանք իրենց եւ յարգանք նահապետական Տէր

եղիայեան գերդաստանի բոլոր նահատակներուն:

Մեր Փրկիչը կ'ապրի, եւ բոլորս իրեն հետ պիտի ապրինք դարեր անվախճան: Իր շնորհքով երկնից փառքին մէջ: Ալէլուիա ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՅՈՎԱԵՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՈԳԵՇՆՉՈՂ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծ.Ն. Փաստահանայի Յովսէփեան վարժարանի աշակերտներու շարադրական մրցանքին գնահատական մրցանակներու արժանացած են Հայոց Ցեղասպանութիւնը ոգեշնչող շարք մը գրութիւններ: Կու տանք լաւագոյնները եւ կը շնորհաւորենք մեր դեռատի գրողները:

Կրէյս Խանլեան Ը. կարգ Առաջին հանդիսացող Ծարադրութիւնը

Հայ կը նշանակէ Հայ ազգին պատկանող անձ մը: Ես հայ աղջնակ մըն եմ, որ Յովսէփեան Վարժարանը կը լաւախեմ: Այսօր, 95 տարիներ անցած են Հայկական Ցեղասպանութենէն: Ապրիլ 24, 1915ին թուրքերը մէկ ու կէս միլիոն հայեր ջարդեցին: Մինչեւ այսօր տակաւին այս ահաւոր դէպքը կը յիշենք:

Ես այս դպրոցը տասը տարիներէ ի վեր կը լաւախեմ: Իմ ծնողքս շատ ջանք կը թափէ, որ ինձի եւ քրոջս հայկական վարժարան դրկէ: Առտու իրիկուն կ'աշխատին, որ ես լաւ հայերէն սորվիմ ու բնաւ չմոռնամ: Այս իրենց ամենէն կարեւոր նպատակներէն մէկն է: Մենքփ հայերս նման ենք շէնքի մը, որ ամուր եւ հաստատ կը մնայ, հպարտօրէն բարձր պահելով իր գլուխըփ հայ կոչուելուն համար: Այո, ճիշդ է որ կը հիմնանք, բայց եթէ շարունակենք հայերէն սորվիլ ու կարդալ, կը նորոգուինք: Հայկական Ցեղասպանութիւնը ճիշդ զօրաւոր երկրաշարժի մը նման ցնցեց շէնքը, բայց մենք դեռ կըրցանք ապրիլ: Հիմա մենք աշխարհին ամէն կողմն ենք ու տակաւին կը շարունակենք սորվիլ: Չորս կարեւոր կէտեր կան, որոնց բոլոր հայերս պէտք է հետեւինք, ա.- Հայկական մշակոյթն ու քաղաքակրթութիւնը շարունակել

- բ.- Հայերէն կարդալ
- գ.- Հայերէն գրել
- դ.- Ինքնաճանաչումի իբրեւ հայ անհատ

Գիր ու գրականութիւն շատ կարեւոր են: Մեծ թիով հայ գրագէտներ կորսնցուցած ենք ցեղասպանութեան ընթացքին: Ես վստահ եմի 100 տոկոսով, որ հայերէն լեզուով նոր գրողներ պիտի ըլլան: Մենք պէտք է հաւատք ունենանք, որ կարելի ըլլայ ասոր իրականացումը: Եթէ միանանք մենք իբրեւ ազգ եւ հաւատանք, նոյնիսկ կրնանք մեր Պատմական Հայաստանին ալ ետ տիրանալ: Մեր գեղեցիկ Հայաստանին բնութեան իրաքանչիւր մասը խորհրդանշէ մըն է մեր նկարագրին: Բարձր լեռները ցոյց կու տան, որ մենք զարգացած ենք եւ ամպերուն հասած ենք: Հայաստանի գետերը շատ հեռու տեղեր կը հոսին, ինչպէս որ մենք ամբողջ աշխարհին շուրջ թափառական ենք: Դաշտերուն վայրի ծ աղիկները ցոյց կու տան, որ մենք բազմաթիւ ենք ու մեր թիւը բնաւ պիտի չպակսի: Գիտեմ, որ շատ հայ երեխաներ օտար դպրոցներ կը լաւախեն, բայց չձուլուելու համար անոնք ալ պէտք է հպարտ զգան իրենց ինքնութեամբ եւ փորձեն հայ մնալ:

Հայկական դպրոցները պարտաճանաչ են եւ իրենց կարելի կ'ընեն, որ մեզի փոխանցեն կարեւոր գիտելիքներ: Ես հպարտօրէն ամէն օր ժպտերես կու գամ դպրոց եւ գիտակից եմ, որ պէտք է շարունակեմ հայ սերունդին պահպանումը: Հայկական Ցեղասպանութիւնը աւելիով կ'ամրապնդէ ինձի: Մեր գոհուած երկու բանաստեղծներուն՝ Սիամանթոյի ու Դանիէլ Վարուժանի պատգամը կատարած կ'ըլլանք պահպանելով մեր

Լոռի Ծիկերեան Ը. կարգ երկրորդ հանդիսացած Ծարադրութիւնը

95 տարիներէ ի վեր մենք հայերս պայքարած ենք Հայկական Ցեղասպանութիւնը աշխարհին ծանօթացնելու համար: Թուրքերը 1895 թուականէն սկսեալ գաղափար մը ունեցան, հայ ժողովուրդը բնաջնջելու եւ միայն մէկ հայ պահելու եւ այդ ալ թանգարանին մէջ դնելով եւ ըսելու որ Արմէն անունով ցեղ մը կար: Ծատեր նահատակուեցան եւ քիչեր փախան Եղեռնէն ու ցրուեցան աշխարհին շորս կողմը: Ծատեր նաեւ ձուլուեցան, որդեգրուելով տարբեր ազգերու կողմէ, իսկ ոմանք ալ նոյնիսկ թրքացան իրենց կեանքը ապահովելու համար:

Այս բոլորը եղաւ, բայց թուրքը չյաջողեցաւ հասնելու իր նպատակին: Չյաջողեցաւ, որովհետեւ մենք 95 տարիներէ ի վեր կը պայքարինք մեր դատը պաշտպանելով եւ ծանօթացնելով ամբողջ աշխարհին եւ չենք լուսահատիր: Չճախողեցանք, որովհետեւ մեր պատմութիւնն ու հայրենիքը բնաւ չենք մոռնար, պատմութիւնը կը սորվինք եւ հայրենիքն ալ կը պաշտպանենք: Եւ ահաասիկ մեր այս դասարանին մէջ նստած ենք մենքփ հայ պատանիներս, որ վերապրողներուն ժառանգորդներն ենք:

Դժբախտաբար կան հայեր, որոնք չեն խօսիր, չեն կարդար ու չեն գրեր հայերէն եւ եթէ այսպէս շարունակուի կրնանք այն ատեն ըսել, որ թուրքը յաջողած կ'ըլլայ եւ կը հասնի իր նպատակին:

Հայ մայրերն ու հայրերը պատասխանատուութիւն պէտք է զգան օր ու գիշեր յիշեցնելու իրենց զաւակներուն հայերէն լեզուի կարեւորութիւնը եւ իրենցմէ պահանջեն, որ միշտ հայերէն խօսին ու հայկական թեթրեր կարդան: Պէտք է պատրաստենք սերունդ մը, որմէ վստահ ըլլանք որ պիտի կարենայ շարունակել մեր դատի ծանօթացումը եւ հասնիլ արդար լուծումին: Պէտք է հայապահպանման կարեւորութիւնը ամուր թիմերով դրօշմուած ըլլայ մեր յաջորդ սերունդին մօտ: Այս ձեւով կարելի պիտի ըլլայ հասնիլ Մասիս լեռան գագաթին: Հայ երեխաները երբ շարունակեն թրթովել հայերէն լեզուն, իրապէս յաղթած կ'ըլլանք մեր դարաւոր թշնամիին: Միշտ պէտք է յիշենք մեր բանաստեղծուհի Սիվա Կապուտիկեանի պատգամը.-

«Որդի՛ս, ո՛րք էլ լինես, այս լուսնի տակ ո՛րք էլ գնաս, թէ մօրդ անգամ մտքից հանես, քո մայր լեզուն չմոռանա՛ս»:

Անտրէ Նալպանտեան Դ. կարգ Առաջին հանդիսացող Ծարադրութիւնը

Սիրելի Օրատեսարակ,
Ես Պատմական Հայաստանի մէջն եմ: Պատերազմ կայ: Թուրքերը հայերը կը ջարդեն: Ես չեմ հասկցած ինչո՞ւ այսպէս կ'ընեն: Պապաս կը փնտռէի, բայց տունը չէր: Եղբայրս ըսաւ.-

« Դուրս առանձին մի՛ երթար, ես ալ կու գամ հետդ եւ միասին կը փնտռենք պապան:» Եղբայրս շատ վախցած էր եւ կը դողար:

Բարեբախտաբար շուտով գտանք պապաս: Ես իրեն ալ նույն հարցումը հարցուցի եւ ան ըսաւ.- «Թուրքերը որոշած են բոլոր հայերը սպաննել եւ միայն մէկ հայ պահել եւ այդ ալ թանգարանին մէջը պիտի դնեն, որ բոլորը գիտնան որ հայեր այլեւս չկան»:

Ճամբուն վրայ քարայր մը գտանք եւ հոն մտնելով պահուլտեցանք ու քիչ մը պառկեցանք:

Յաջորդ օրը մամաս սկսանք փնտռել: Բաւական քալելէ ետք վերջապէս գտանք մամաս, վիրաւորուած եւ գետին ինկած: Մենք մօրս մեր պահուլտած քարայրը տարինք եւ փորձեցինք բուժել իրեն, բայց երեք ժամ վերջ մայրս մահացաւ:

Ռիչըրտ Վարդանեան Դ. կարգ երկրորդ հանդիսացած Ծարադրութիւնը

Ես տեսայ որ թուրքերը գրաւեցին Հայաստանը: Այս պատահեցաւ Ապրիլ 24, 1915ին: Թուրքերը ջարդեցին հայերը: Թուրքերը գրաւեցին մեր Պատմական Հայաստանի հողերը: Անոնք գրաւեցին հայերուն տուները եւ անոնց իրենց տուներէն դուրս վճարեցին: Հայերէն որոնք ազատած էին իրար հետ կ'ապրէին եւ բոլորն ալ ոտաբոսիկ եւ անտուն էին: Թուրքերը այս ըրին, որովհետեւ կ'ուզէին հայերուն իսլամ դարձնել, չէին ուզեր որ հայերը քրիստոնէայ մնան: Անոնք շատ հայեր սպաննեցին: 1,500,000 հայեր սպանուեցան 1915ին:

Յովիկ Մանոյեան Գ. կարգ Առաջին հանդիսացող Ծարադրութիւնը

Եթէ ես առիթը ունենայի թուրք նախագահին հետ խօսելու ես կ'ըսէի.- «Հայկական Ցեղասպանութիւնը իրաւ է: Մենք դեռ կը յիշենք ինչ որ դուք ըրիք մեր նախահայրերուն: Մէկ ու կէս միլիոն հայ մեռցուցիք, Արարատ լեռը գրաւեցիք եւ մեր երկիրը գրաւեցիք: Բայց դուք ձեր նպատակին չհասաք, ձեր նպատակն էր, որ միայն մէկ հատ հայ ձգէիք որ ապրէր եւ անոր ալ կենդանաբանական պարտէզին մէջ պիտի դնէիք:

Մի՛ ըսեր, որ պիտի չընէիք այս: Հայ մտաւորականներուն կախեցիք, որ չգրեն Հայկական Ցեղասպանութեան մասին: Դուք պէտք է գէշ զգաս, որ այս բաները քու ժողովուրդդ ըրած է:»

Ես ասոնք կ'ըսէի Թուրքիոյ նախագահին:

Նարեկ Տատուրեան Գ. կարգ երկրորդ հանդիսացած Ծարադրութիւնը

Մենք պէտք է յիշենք Հայերու Ցեղասպանութիւնը 95 տարիներ ետք, որովհետեւ այն օրը թուրքերը մեզի դուրս նետեցին մեր երկրէն:

Թուրքերը հայ խելացի մարդոց կախեցին: Մենք անոր համար յուշարձան կ'երթանք որ յիշենք անոնց, որոնք կոտուեցան եւ նահատակուեցան: Միշտ պէտք է յիշենք Ապրիլ 24, 1915ը:

Հայերու Ցեղասպանութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ 24, 1915ին: Այն ատեն Առաջին Համաշխարհային Պատերազմը եղաւ: Հայերուն համար շատ կարեւոր է այս թուականը:

Մենք պէտք է միշտ հայերէն խօսինք, կարդանք եւ գրենք, եթէ չխօսինք, չգրենք եւ չկարդանք, հայ չի մնար եւ թուրքերը կը յաղթեն մեզի:

Միշտ ազգը պահելու համար պէտք է հայերէն խօսինք, կարդանք եւ գրենք:

Լօրի Քէնտէրեան Ա. կարգ Առաջին հանդիսացող Ծարադրութիւնը

Հայկական Ցեղասպանութիւնը կարեւոր է յիշել, որովհետեւ թուրքերը կ'ուզէին որ հայերը թուրք դառնան: Անոնք կ'ուզէին միայն երկու հայ պահել, մէկ աղջիկ եւ մէկ տղայ: Եւ մենք ըսինք ո՛չ: Մէկ ու մէս միլիոն հայեր մեռան, բայց մենք յաղթած ենք: Քիչ հայեր ազատեցան ու փախան եւ թուրքերը չտեսան իրենց:

Լուսինէ Գէզալեան Ա. կարգ երկրորդ հանդիսացած Ծարադրութիւնը

95 տարիներ առաջ թուրքերը կոտուեցան հայերուն դէմ, որովհետեւ թուրքերը կ'ուզէին որ միայն երկու հայ մնայ աշխարհին վրայ: Ծատ հայեր մեռան եւ ըսին թուրքերուն.- « Մենք ձեր Աստուածին պիտի չաղօթենք, եւ պիտի չլսենք ձեր Աստուածին»: Եւ երբ կոխը եղաւ շատեր մեռան եւ քիչեր փախան:

ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԿՈՒՄ ԵՆ

Շարունակում է 12-էն

Քիւրտ պատգամաւոր Մեհմեդ Նեզիր Քարաբաշ յայտարարել է, որ թուրքիայի խորհրդարանում պէտք է քննարկուի Հայերի ցեղասպանութեան հարցը: Վերջինս քննարկում է նոյնիսկ թրքական տարբեր հերոսակալայաններով:

Անկախ, բանաձեւերի ընդունումից խորհրդարանների կողմից, դրանց քննարկումն արդէն ապացուցում է, որ Հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը սկսում է շարժուել տեղից: Սա նշանակում է, որ միջազգային հանրութիւնը վստահ է իր պատմական գիտելիքների վրա եւ չընդունելով Հայերի ցեղասպանութեան իրողութեան թուրքիայի ուրացումները, աշխատում է աջակցել հայ ժողովրդի արդար դատին:

Դժբախտաբար, ինչպէս նշուեց վերեւում, գերպետութիւնները, որոնք եւ իրենց բարեսիրական ու եկեղեցական կազմակերպութիւնները անսպառ փաստեր ունեն (յուշեր եւ լուսանկարներ) Հայերի ցեղասպանութեան մասին, իրենց շահերի համար ուրանում կամ շահարկում են այն իրենց նպատակներն իրականացնելու համար:

Հայերի ցեղասպանութեան շահարկումը պէտք է կասեցնի ինքը՝ հայ ժողովուրդը, աշխատե-

լով դառնալ կուռ բռունցք, որի համար առաջին հերթին պէտք է միասնութիւն ստեղծուի Հայաստանի ներսում. արդար ընտրութիւններով ընտրուի նախագահ, վերջ տրուի կոռուպցիային, կաշառակերութեանը, թալանին, ազատ արձակուեն կեղծ պատրուակով բանտարկուած՝ իրենց կեանքի գնով Արցախն ազատագրած հերոսները, իրաւական դաշտը բարելաւուի եւ ժողովրդավարական երկիր ստեղծուի, որից յետոյ սփիւռքը ամուր նեցուկ կը կանգնի Հայաստանին, իր ուժերը կը ներդնի տնտեսութեան զարգացման գործում, որի արդիւնքում կ'ունենանք բարգաւաճ ու հզօր Հայաստան:

Այսօր ոչ միայն Հայաստանի սահմաններն են փակ Ատրպէյճանի ու թուրքիայի կողմից, այլ նաեւ քաղաքական շրջափակման մէջ է Հայաստանը եւ չգիտի ինչպէս դուրս գալ այդ վիճակից: Ամէն փակուղուց դուրս գալու ելք կարելի է գտնել, եթէ միասնական ճակատ ստեղծուի, որն անհրաժեշտ է Հայաստանին օդի ու ջրի նման:

Հայերի ցեղասպանութեան 95-ամեակի առթիւ խոնարհուենք 1915 թ. նահատակների յիշատակի առջև եւ համախմբուենք ու ստեղծենք բոլոր հայերի համար ցանկալի հզօր հայրենիքը, որը շարունակի իր երթը պատմութեան արահետներով:

ԿԻԼԿԻԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Շարունակում է 23-էն

նշենք, որ միայն նման հերոսամարտերի միջոցով իւրաքանչիւր ժողովուրդ կարող է կուել իր ազատութիւնը, ձեռք բերել ապրելու եւ յարատեւելու իրաւունք:

1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերի պատմութիւնում իր ուրոյն տեղն ունի Տէօրթ-Եոլի (Չորք Մարգպան) հայերի հերոսական պաշտպանութիւնը:

1895 թ. Հոկտեմբերին թուրք եւ չեքքեզ հրոսակները յարձակում են Տէօրթ-Եոլի հարեւանութեամբ գտնուող Օջախի եւ Էոզեյըլի գիւղերի վրայ, սկսում կոտորածը, կողոպուտն ու թալանը: Հայերը, դիմադրութիւն ցուց տալով, նահանջում են Չորք-Մարգպան: Յաջորդ օրը, Հոկտեմբերի 31-ին, թշնամու 2000 հոգուց բաղկացած խառնամբոխը յարձակում է Տէօրթ-Եոլի վրայ, բայց զարնուելով հայերի յամառ պաշտպանութեանը՝ նահանջում է: Յաջորդ գրոհը թշնամին կատարում է գիւղի արեւմտեան կողմից, բայց այստեղ եւս, հանդիպելով պաշտպանների մահասփիւռ գնդակներին, հարկադրուած նահանջում է: Մարտում աչքի են ընկնում Մկրտիչ եւ Արիստակէս Պալեանները, Համբարձում Ռուբինեանը եւ ուրիշներ: Նոյն երեկոյ եւ յաջորդ օրը թշնամին համալրում է ստանում: Դէպի Տէօրթ-Եոլ են շարժում ոչ միայն շրջակայ բնակավայրերի մահաճեղականները, այլեւ զինուորական եւ ոստիկանական ուժերը: Դէպքերի ականատեսը եւ մասնակիցը յիշում է, որ «գօրք եւ թուրք, քիւրտ եւ չեքքեզ հազարաւոր բաշիբոզուկ կատաղած խուժանն երկու կուսակալութեան նահանգներից (Ատանայի եւ Հալէպի - Ռ.Գ.), Հաճընի գօրքը եւ շրջակայ բաշիբոզուկ թուրքը մեր վրայ եկան. մինչ իսկ Անտիոքի եւ շրջակայ գիւղերից խուժանն յարձակեցան մեր վրայ»:

Նոյեմբերի սկզբին, ուշքի գալով կրած հարուածներից, թուրքերը կրկին յարձակում են, բայց եւօրեայ ծանր մարտերում հայ բաշորդներին վերստին յաջողում է յետ մղել թշնամուն: «Կուռեցանք, քաջ կուռեցանք, յիշում է Ք. Տէրաէրեանը, - 8 օր

շարունակ մերթ անընդհատ եւ մերթ թեթեւակի հրացանաձգութեամբ: Մեր պատրաստած խմբակներով երիտասարդներն քաջապէս դիմադրեցին թշնամուն կարկուտի նման գնդակներին, յետ մղեցինք թշնամին ամթաճար, փախան անամթաբար, յուսախաբ, թողլով իրանց անյամար դիակներն»:

Շուտով Անտիոքից 400 զինուորներով Չորք-Մարգպան է գալիս նաեւ Ալի բեյը եւ, միանալով տեղում եղած ուժերին, անցնում յարձակման: Նոյեմբերի 6-ին նա վերջնազոր է ներկայացնում հայերին, պահանջելով յանձնել գէնքերը: Տեսնելով, որ ուժերը խիստ անհաւասար են, հայերը կուռելով դուրս են գալիս գիւղից, բարձրանում լեռները՝ փրկուելով թրքական եսթաղանին գոհ գնալուց: Հայերի հեռանալուց յետոյ թուրքերը կողոպուտում եւ աւերում են գիւղը: Տէօրթ-Եոլի պաշտպանութեան ոգին, շունչը եւ փաստական դեկավարը հնչական կուսակցութեան յայտնի գործիչ, մշեցի Մխո-Շահ Կիլիկիայի 1890-ական թթ. իրադարձութիւնների մասին խօսելիս հարկ է անդրադառնալ նաեւ Ս. Գ. հնչական կուսակցութեան գործունէութեանը, որ զգալի ազդեցութիւն եւ հեղինակութիւն էր ձեռք բերել կիլիկիական շրջանում, ստեղծելով կուսակցութեան տեղական կազմակերպութիւնների համեմատաբար լայն ցանց եւ կազմելով ֆիտայական ջոկատներ: 1895 թ. Կիպրոսից Կիլիկիա է մտնում հնչական գործիչների մի խումբ՝ Ապահը (Պետրոս Գրմբաճեան), Շաւարշը (Պօղոս Շիշմանեան), Մուրադը (Բաղդասար Գաւուզեան), Զելլաթը (Կարապետ Ղրփենիսեան), Մլեհը (Ասատուր Տամդաճեան), Մխո Շահենը (Մխիթար Սեֆերեան), Հրաչեայ Մարալը (Գրիգոր Ղարիբեան), Քեռին (Մարգիս Պելեան) եւ այլք, որոնց հայրենանուէր գործունէութիւնը չչապաղեց տալ իր պտուղները: Նրանք ինքնապաշտպանութեան պատրաստեցին եւ զինեցին Տէօրթ-Եոլը, Սոււտիան, Ֆունուզը, Զէյթունը՝ բազմաթիւ վայրերում յաղթելով թշնամուն փրկելով հայրենակիցների կեանքն ու պատիւը:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՊԱՆՔ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԱՒՈՒՔՃԵԱՆ արտի վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկելէ ետք, այժմ իր ապաքինման շրջանը կը բոլորէ: Ս.Դ.Հ.Կ. Փարամազ մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները շուտափոյթ եւ արագ ապաքինում կը մաղթեն իրեն:



Հ.Բ.Ը.Մ. ԱՐՏԱՆԱԶԳԻ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԱԸ

Կը ներկայացնէ
Ճրանասական Երկու
Կապակերպութիւններ

Մոյլերի
ԱԿԱՄԱՅ ԲԺԻՇԿԸ

Լ. Հալեվիի եւ Հ. Մլշխաթի
ՊՐԱԶԻԼԻԱՅԻՆ

Բեմադրութիւն՝ **ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ**

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 6 - ԿԱԿԱ - ԺԱՄԸ 5:00-իմ, \$50

Շաբաթ, Մայիս 15, 22, 29, 2010 - Ժամը 8:00-իմ
Կիրակի, Մայիս 16, 23, 30 - Ժամը 5:00-իմ
Շաբաթ, Յունիս 5, 12 - Ժամը 8:00-իմ

ՄՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ \$20
(Մայիս 15, Ուսանողական \$10)

Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան Կեդրոնի
Մշակութային Համալիր
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմսերը կարելի է ստանալ
ՀԲԸՄ Գրասենեակ 626-794-7942
Ապրիլ Գրատուն 818-243-4112
WWW.ITSMYSEAT.COM



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O.
1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

REQUEST FOR PROPOSALS
(RFP# 7531)
AGENCY WIDE INTERNAL RISK ASSESSMENT AUDIT

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to assess the effectiveness of risk management, controls and governance processes within its departments and programs. Copies of the RFP may be obtained beginning April 12, 2010 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., May 7, 2010, at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057.
4/22, 4/29/10
CNS-1838341#
MASSIS WEEKLY

ՈՉ ԵՄ Է ԱՐԱ ՏԵՐ ՎԱՐՂԱՆԵԱՆ



Յաւով տեղեկացանք որ Ապրիլ 8ի կեանքին հրաժեշտ տուած է նախկին իրանահայ մտաւորական, թարգմանիչ Արա Տ. Վարդանեան: Ան երկար տարիներ է վեր հաստատուած էր Միացեալ Նահանգներ: Ծնած էր 1926 թուին Թաւրիզ քաղաքին մէջ: Հանգուցեալը զաւակն էր Իրանի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան վեթերան, Թաւրիզի կուսակցական վաստակաւոր գործիչ, կրթական երկարամեայ մշակ, Ատրպատականի Հնչակեան «Զանգ» եւ «Միտք» թերթերու խմբագիր եւ հրատարակիչ: Ալեքսան Տ. Վարդանեանի: Հանգուցեալին թաղման կարգը պիտի կատարուի Ուրբաթ, Ապրիլ 23-ին, Presbyterian Church 119 N. Avenida De La Estrella, San Clemente CA:

«Մասիս» իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Անահիտին, զաւակներուն, թոռներուն եւ համայն պարագաներուն:

Ara Vartanian 1926-2010

Ara Vartanian has passed away on April 8, 2010. Born in Tabriz, Iran he was well respected Iranian-Armenian intellectual and translator. He was the son of Alexan D. Vartanian, veteran leader of SD Hunchakian party in Tabriz and editor of party organs "Zank" and Midk".

Ara Vartanian's requiem service will be held on Friday April 23, 2010 at the Presbyterian church, 119 N. Avenida De La Estrella, San Clemente, Ca.

Massis weekly and the SDHP family expresses its deepest condolences to the deceased family specially his wife Anahid, children and grandchildren

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԻՍԼԵԱՆԻ մահուան տիտուր առիթով (մահացած Պէյրուսի), Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն, մասնաւոր ՆՍՄՄ-ի վարչութեան անդամ Տէր եւ Տիկ. Անահիտ եւ Սահակ Գթըֆեանին:

ԱՊՐԻԼԵԱՆ ՍԵՒ ՕՐԵՐԻ 95-ԱՄԵԱԿ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՆՐՈՊԵԱՆ

- Ապրիլեան օրեր
- Օրեր սպանդի
- Ողջ մարդկութիւնը
- Կենդանի վկայ
- Շինարար, արդար
- Մի բուռ ժողովուրդ
- Քայլեց Գողգոթա,
- Բայց տոկաց, ապրեց,
- Քանզի ծնուել էր
- Ապրելու համար...
- Եւ այսպէս,
- Ապրեց.
- Ապրում է
- Կ'ապրի:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ՔԵՍՅՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փայլմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ԹՈՒՐՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾԱԴՐԱԾ

Շարունակուած էջ 27-էն

Զօրի գետին միւս ափին, գերմանացիները անթել հեռագրի կայան մը հաստատած էին: Գերմանացիները պաշտօն տուած էին Երուանդ Օտեանին Տէր Զօրի մէկ ափէն միւսը երթալ գալու եւ ծառայելու իրենց որպէս թարգման, որովհետեւ քաջ լեզուագէտ մըն էր ան: Ահաւասիկ այդ դրուագը որ մէկն է միայն բազմահազար նման տիտուր դրուագներէ որոնք լաւագոյնս կը հաստատեն թուրք իշխանութեանց գործադրած անմարդկային ազգասպանութիւնը հայ ժողովուրդի վրայ:

ԱՐՇԱԼՈՅՍԻՆ ՄԱՅՐԸ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Տէր Զօր կամ աւելի ճիշդը Տէր Էգգօր, կը գտնուի Եփրատի ձախ եզերքին վրայ, Սուրիոյ հողամասին մէջ: Եփրատի աջ կողմը կը տարածուի Միջագետքը: Ճիշտ Տէր Էգգօրի դէմը, Եփրատի մէջ կը գտնուի բաւական ընդարձակ կղզեակ մը: Կղզեակին կողմը, կան պահականոցներ, եւ սուրնաւոր թուրք ոստիկաններ որոնք միշտ կը հսկեն անցորդներուն վրայ: Արաբները ազատօրէն կ'երթեւեկեն այդ կամուրջներէն, բայց հայերուն բացարձակապէս արգիլուած է առանց վէսիքայի կամ մասնաւոր արտօնութեամբ անցնիլ մեծ կամուրջէն:

Գերմանները երբ հանգրուան մը հաստատեցին Տէր Էգգօրի մէջ, ուզեցին անմիջապէս անթել հեռագրի կայան մը ունենալ, եւ ատոր համար ընտրեցին Միջագետքի եզրը, մեծ կամուրջին մօտ տեղ մը, աւագոտ անապատին մէջ: Ես այդ միջոցին գերման հանգրուանը կը գտնուէի իբրեւ զինուոր եւ իբրեւ թարգման: Ինծի վիճակուած էր ամէն օր, երբեք օրը երկու անգամ, անթել հեռագրի կայանը բերել զրկուելիք հեռագիրներու պատճէնը: Բնականաբար անարգել կ'անցնէի կամուրջներէն, քանի որ պահակ ոստիկանները կը ճանչնային զիս եւ զիտէին պաշտօնական դիրքս: Անթել հեռագրի կայանին մօ կը գտնուէին մէկ քանի արաբական վրաններ: Օր մը, երբ գործս աւարտած կը վերադառնայի կայանէն, այդ վրաններէն կին մը դուրս ելաւ եւ արագ քայլերով մօտեցաւ ինձ:

- «Դուն հայ ես, այնպէս չէ՞», հարցուց հայերէն:
- «Այո, պատասխանեցի, իսկ դուն ո՞ւր տեղացի ես»:
- «Խարբերոցի եմ, ըսաւ կինը. «ամէն օր կը տեսնեմ քու հոս գալ երթալը եւ դէմքէդ գուշակեցի որ հայ ես... խնդիրք մը ունիմ, Աստուծոյ սիրուն՝ մի մերժեր»:

- «Ըսէ տեսնեք...»: Եւ պատմեց: Հազարաւորներու սովորական պատմութիւնն էր: Խարբերոցի տեղահան եղած էին, ամուսինը ճամբան սպաննուած, մանչ զաւակն ալ քիւրտները յափշտակած: Հազիւ յաջողած էր երկու աղջիկները ազատել, որոնցմէ մին մեռած էր թիւֆիւսէ:

- Մէկ հատիկ աղջիկ մնացած էր քովս, շարունակեց, 12 տարեկան Արշալոյսս, աշխարհի մէջ իրմէ գատ ալ մէկը չունէի... Զարդէն Մարաթ կը գտնուէինք, հոսկէ 2-3 ժամ անդին. անթի մնացինք, ալ ճարս հատաւ, աղջիկս առի եկայ Տէր Զօր երթալու համար ուր կը յուսարի գործ մը գտնել: Կամուրջէն անցայ. երբ միւս ծայրը հասածս ոստիկանները կասկածեցան. մեզ բռնեցին, հարցաքննեցին, եւ երբ տեսան որ հայ էի՝ աղջիկս ձեռքս առին ու զիս ետ դրկեցին... Աստուծոյ սիրուն՝ աղջիկս ազատէ այդ հրէշներուն քովէն»:

Եւ խեղճ մայրը դառնօրէն արցունք կը թափէր:

- «Բայց ես ի՞նչ կրնամ ընել» կմկմացի յուզուած ու շուարած: «Դուն գերմանացիներուն հետ յարաբերութիւն ունիս. կը տեսնամ կոր, ամէն օր հոս կու գաս կ'երթաս, անոնց ձեռքով կրնաս բան մը ընել»:

Թշուառ կինը ինծի կը վերագրէր կարողութիւն մը զոր չունէի, փաստս: Այսուհանդերձ քանի մը յուսատու խօսքեր ըրի եւ հեռացայ քովէն: Հետեւեալը օրը նորէն եկաւ քովս:

- «Գերմանացիները չեն ուզեր միջամտել, ըսի, սպասէ տեսնենք, ուրիշ հնարք մը կը մտածենք...»: «Բայց չեմ կրնար սպասել, բացառանչեց, այս արաբներուն քով կը ծառայեմ չոր հացի մը փոխարէն, եւ 1-2 օրէն վրանը պիտի քակեն ու մեկնին... ստիպուած եմ կամ հետերնին երթալ կամ...»: Խօսքը չաւարտեց:

Ի՞նչ կրնայի ընել այս թշուառ կնոջ համար: Վերադարձիս պահականոց մտայ եւ հարցուցի թէ 12 տարեկան Արշալոյս անուան անուն աղջկան մը մասին տեղեկութիւն ունե՞ին:

- «Ատանք աղջիկ չենք ճանչնար» գոչեց ոստիկան մը կոշտութեամբ: - «Ի՞նչ պիտի ընես հարցու ուրիշ մը, քիչ մը աւելի քաղաքավար: - «Իր մօրեղբայրն եմ, իմացայ որ ձեր քովը կը գտնուի եղբի, կ'ուզեմ քովս առնել»:
- «Քեզի սխալ տեղեկութիւն տուեր են» պատասխանեց ոստիկանը:

Հետեւեալ օրը ոստիկաններուն հետ ունեցած խօսակցութիւնս պատմեցի Խարբերոցի կնոջը: Տարտամօրէն երեսս կը նայէր, առանց կարծես հասկնալու ըսածս: Միւս օր, երբ ըստ սովորութեան, գացի անթել հեռագրի կայանը, այնպէս եղած էին արաբական վրանները: Գերման սպան որուն յանձնեցի հեռագիրը, աղճատ ֆրանսերէնով մը ըսաւ.

- Այս առտու կին մը ինքզինքը գետը նետեց ու խեղդուեցաւ. աշխատեցանք ազատելու, բայց անկարելի եղաւ. կամուրջին ճիշդ մէջտեղէն նետուեցաւ, հոն ուր ջուրը շատ խոր է եւ յորձանքը գորաւոր:
- Ո՞վ էր այդ կինը, հարցուցի յուզուած ձայնով մը:

- Այն կինը, որ քանի մը անգամ քեզի հետ տեսնուեցաւ, ինչպէս նշմարեցի հոսկէ:
Արշալոյսին մայրն էր:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ

April 24, 1915 NEVER AGAIN!

95TH YEAR COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE

Co-Sponsored by the City of Pasadena, with the participation of all Armenian organizations, churches and schools.

Saturday, April 24, 2010 - 10 am - 12 noon

100 Garfield Ave. Pasadena Ca. 91101

For additional information please call (626) 399-1799 Armenian Identity Harvest - Khatchik Chahinian

Watch the Arroyo channel 32 all day, dedicated to the Armenian Genocide on Saturday, April 24.

Also, you can watch the program on the internet www.pasadenacommunitynetwork.com

ԱՊՐԻԼ 24, 1915

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ 95ԻՎ ՏԱՐՈՒԱՆ ՅՈՒՇԱՏՕՆ

Հովանավորությամբ՝ Փասատիկաչի Քաղաքապետարանի կողմէ:

Մասնակցությամբ Բոլոր Հայկական

Կազմակերպություններու, Եկեղեցիներու եւ Դպրոցներու:

Շաբաթ, Ապրիլ 24, 2010 - Առաւօտեան ժամը 10 -12

100 Garfield Ave. Pasadena Ca. 91101

Յաւելեալ մանրամասնութիւններու համար հաճեցէք հեռաձայնել
(626) 399-1799 թիւին, Հայ Ինքնութեան Հունձք - Խաչիկ Շահինեանին:

APRIL 24, 1915 - APRIL 24, 2010

